2008թ. Նախագահական Ընտրությունները Հայաստանում

Առանձին հարցեր և վերլուծություն

Հրատարակվել է Policy Forum Armenia-ի կողմից

Այս զեկույցը պատրաստվել է PFA- ի մի խումբ անդամների համատեղ ջանքով ու չի ներկայացնում կազմակերպության բոլոր անդամների տեսակետը: Զեկույցի հեղինակներն ու խմբագիրները որևէ փոխհատուցում չեն ստացել իրենց կատարած աշխատանքի համար: Ստորև ներկայացված զեկույցի հայերեն տարբերակը թարգմանությունն է նույնանուն անգլերեն բնօրինակի:

Հուլիս 2008թ.

© 2008 Policy Forum Armenia

Այս զեկույցի առանձին բաժիններ կարող են վերատպվել՝ համապատասխան թույլտվությամբ: Վերատպման դեպքում համապատասխան հղումը պարտադիր է:

Այցելեք մեզ՝ www.pf-armenia.org
Գրեք մեզ՝ exrelations@pf-armenia.org

Աֆղանստան · Հայաստան· Ֆինլանդիա · Ֆրանսիա · Իռլանդիա · Քուվեյթ · Նայջերիա
Շվեյցարիա · Միացյալ Արաբական Էմիրություններ · Մեծ Բրիտանիա · ԱՄՆ

Policy Forum Armenia

Առաքելությունը

Policy Forum Armenia (PFA) կազմակերպությունը շահույթ չհետապնդող անկախ միություն է, որը նպատակ ունի երկխոսություն ծավալել Հայաստանի տնտեսական զարգացման ու ազգային անվտանգության հացերի շուրջ ու դրանով իսկ օգնել Հայաստանի պետական քաղաքականության ձևավորմանը: Կազմակերպությունը նպատակ ունի ներկայացնել այլընտրանքային դիրքորոշումներ ու մասնագիտական վերլուծություններ, որ պարունակում են նորարարական ու կիրառական առաջարկներ հանրային քաղաքականության մշակման ու իրականացման հարցերի շուրջ: Իր գործունեության միջոցով PFA-ը ձգտում է նպաստել իրազեկ հասարակության ու առավել արդյունավետ ու հաշվետու կառավարության ձևավորմանը: PFA-ի հիմնական ակտիվը Հայաստանին նվիրված տարբեր ոլորտների մասնագետների ու առաջնորդների աշխարհով մեկ տարածված ցանցն է:

Աշխատանքային ռազմավարություն

PFA-ն ունի երկակի առաքելություն. այն հիմնականում հանդես է գալիս որպես հետազոտական կենտրոն, քանզի այն իրականացնելու է փորձագիտական գնահատումներ ու վերլուծություններ՝ կիրառելով հասարակագիտական հետազոտությունների նորագույն մեթոդները: Բացի այդ, կազմակերպությունը կունենա ազդեցություն հասարակական կյանքի զարգացման վրա Հայաստանում ու Սփյուռքում՝ հանդես գալով որպես քարոզչական խումբ:

Տեսլականը

Մենք երազում ենք, որ Հայաստանը կայանա որպես մի երկիր ու հասարակություն, որտեղ.

Կառավարությունը թափանցիկ է և ամբողջովին վստահելի, որի նպատակը երկրի քաղաքացիների ու արտերկրում գտնվող հայորդիների ներկա և ապագա բարեկեցությունն է, որի անդամները հավասարապես հաշվետու են օրենքի առջև այնպես, ինչպես ցանկացած քաղաքացի, և որի անդամները չեն ղեկավարվում անձնական շահով:

Արդարադատության համակարգը ազատ է, արդար և անկաշառ:

Օրենսդիրը բանիմաց է և հարգված:

Քաղաքացիական ծառայությունն ամենահարգի աշխատանքային ձևն է, որովհետև այն հնարավորություն է ընձեռում հայրենիքին ու ժողովրդին ծառայելու և պահանջում է բարձրագույն մասնագիտական որակ:

Հասարակությունն ունի բարձր կենսամակարդակ, բարեկիրթ է, հանդուրժող, մարդասեր:

Տնտեսությունը զարգացման բարձրագույն մակարդակի վրա է ու նորարար, հենված ողջ ազգի մարդկային կապիտալի վրա. Այն զարգացման հավասար հնարավորություն է ընձեռում բոլորին, թույլ չի տալիս անարդար մրցակցություն, վերաբաշխում է հարկային ազնիվ ու արդյունավետ քաղաքականության միջոցով:

Շրջակա միջավայրն ու բնական ռեսուրսների պատասխանատու կառավարումը հույժ կարևոր են պետության գոյատևման և առաջնային ապագա սերունդների բարեկեցության համար:

Մարդու իրավունքները ամենասրբազան արժեքային համակարգն են:

Հայաստանի քաղաքացիները՝ հայերը, եզդիները, հույները, քրդերը, ռուսները և այլոք, պետության կարևորագույն արժեքն են:

Զինված ուժերն ամենազորեղն են տարածքում իրենց ոգով, նվիրումով, ժամանակակից սարքավորումներով և կյանք, պատմություն, մշակույթ պահպանելու նպատակային կարևորությամբ:

Սփյուռքն ու Հայաստանը կազմում են մեկ ընդհանրություն՝ ազգը: Սփյուռքի տիրականությունը Հայաստանում ճանաչված է ու խրախուսված, նրա ներուժն ամբողջությամբ ներառված է, նրա բոլոր անդամները երկքաղաքացիությամբ Հայաստանի քաղաքացիներ են:

Պատմությունը կարևոր է: **Ապագան** մեր նպատակն է:

Բովանդակություն

I. Ներածություն 6

II. Պատմական Ակնարկ.....12
A. Համառոտ ակնարկ Հայաստանի նախորդ ընտրությունների վերաբերյալ.....12
B. 2008թ. նախագահական ընտրությունների վաղ զարգացումները 16
C. Եզրահանգում.....18

III. Վարչական Միջոցների Չարաշահում, Ձայների Գնում Եվ Լիազորությունների Չարաշահման Այլ Օրինակներ.....19
A. Վարչական միջոցների չարաշահում 20
B. Քվեների գնում.....21
C. Ընտրողների ահաբեկում և ընտրակեղծիքի այլ տեսակներ 22
D. Միջազգային հանրության արձագանքը 23
E. Եզրահանգում.....24

IV. Ընտրությունների Պաշտոնական Արդյունքների Վիճակագրական Վերլուծություն.....25
A. Ընտրողների մասնակցության բաշխում.....25
B. Առանձին թեկնածուների ստացած քվեների վիճակագրական բաշխումը.....29
C. Թեկնածուների օգտին ստացված քվեների և մասնակցության կապը 32

V. Հետընտրական Զարգացումներ. Քաղաքացիական Հասարակության Զարթոնք.....42
A. Քաղաքացիական հասարակության ակտիվությունը 44
B. Քաղաքացիական հասարակության արձագանքը.....46
C. Եզրահանգում.....54

VI. Հետընտրական Զարգացումներ. Ո՞րն Է Ելքը 56
A. Հետընտրական քաղաքական զարգացումները 56
B. Հետագա քայլեր.....59

Աղյուսակներ

Աղ. 1. Ռեգրեսիայի արդյունքներ……33
Աղ. 2. Ձայների և մասնակցության կապը՝ մասնակցության տարբեր մակարդակների համար…...34
Աղ. 3. Անվավեր քվեների տարբեր մակարդակների դեպքում արձանագրված ցուցանիշներ……37
Աղ. 4. Անվավեր թերթիկների մասնաբաժինը որպես բացատրող փոփոխական ավելացնելիս ռեգրեսիոն հավասարումների գնահատման արդյունքները……..39

Ներդիրներ

Ներդիր 1. 2004թ. ապրիլի 12-13-ի դեպքերը..... 14
Ներդիր 2. Համառոտ ակնարկ Հայաստանի քաղաքացիական հասարակության վերաբերյալ..... 42
Ներդիր 3. Կանանց դերը այլ երկրներում..... 51

Հղումներ 633

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2008թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների քվեների պաշտոնական վերահաշվարկով Սերժ Սարգսյանը ձայների 52,8 տոկոսով ճանաչվեց հաղթող: Հայաստանի առաջին նախագահ ու ընդդիմության հիմնական թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանը զբաղեցրեց 2-րդ տեղը՝ ձայների 21,5 տոկոսով: Ընդդիմությունը լրջորեն վիճարկում էր պաշտոնական արդյունքները՝ պնդելով, որ տեղ են գտել զանգվածային խախտումներ, կեղծիքներ ու բռնության դրսևորումներ ընտրական ողջ գործընթացում: Քարոզարշավի, ընտրության օրվա, վերահաշվարկի ժամանակ տեղ գտած դեպքերը արձանագրվել են Եվրոպայի անվտանգության ու համագործակցության կազմակերպության (Տես՝ ԵԱՀԿ, 2008a) ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության զեկույցում: Ընդդիմությունը բողոքարկեց ընտրության արդյունքները Սահմանադրական դատարանում[1]:

ԵԱՀԿ զեկույցում ներկայացված խախտումները ներառում են. ընտրությունների վարչարարման նկատմամբ վերահսկողություն մեկ քաղաքական շահ ներկայացնող ուժի կողմից. պետական ու կուսակցական գործառույթների ոչ հստակ տարանջատում. անհավասար լուսաբանում լրատվամիջոցներում. լարված նախընտրական միջավայր, այդ թվում՝ հարձակումներ ընդդիմության ընտրական շտաբերի ու ակտիվիստների վրա. ճնշում հանրային ոլորտի աշխատողների ու զինծառայողների նկատմամբ և ահաբեկում. ընտրակաշառքներ ու քվեների գնում. քվեների «վատ» կամ «շատ վատ» հաշվարկ, այդ թվում՝ ընտրության պաշտոնական արդյունքների միտումնավոր կեղծում ու շեղումներ սահմանված կարգից: Չնայած վերահաշվարկման գործընթացը ցույց տվեց, որ քվեների կեղծման մասին որոշ պնդումներ համապատասխանում էին իրականությանը, այնուհանդերձ վերահաշվարկ տեղի ունեցավ միայն այն տեղամասերում, որոնց վերաբերյալ բողոքներ էին ներկայացվել, ինչն էլ թույլ տվեց շրջանցել այս խնդիրն այլ տեղամասերում: Անդրադարձ կատարելով ընտրակեղծիքներին՝ Հայ հեղափոխական դաշնակցության նախագահական թեկնածու Վահան Հովհաննիսյանը հրաժարական տվեց Ազգային ժողովի փոխխոսնակի պաշտոնից:

Ամենօրյա խաղաղ հանրահավաքները Երևանում, որոնց օրինականությունը կասկածի տակ էր առնվում իշխանությունների կողմից, շարունակվում էին և ըստ հաղորդումների դրանց ներկա էին գտնվում հարյուր հազարավոր քաղաքացիներ, ովքեր պահանջում էին ընտրությունների արդյունքները չեղյալ համարել նրանց կեղծված լինելու պատճառով: Դժգոհությունը խիստ էր ու լայնածավալ:

Կառավարության կողմից ընտրությունների անցկացման վերաբերյալ քննադատություն սկսեցին հնչեցնել նաև քաղաքացիական ծառայողները: Արժե հիշատակել, որ քննադատաբար արտահայտվածների շարքում կային Հայաստանի դիվանագիտական կորպուսի ավագ անդամներ՝ դեսպաններ Ռուբեն Շուգարյանը, Լևոն Խաչատրյանը, Արմեն Բայբուրդյանը, արտաքին գործերի նախարարության մամլո խոսնակ Վլադիմիր

[1] Ընդդիմադիր Տիգրան Կարապետյանի ու Լևոն Տեր-Պետրոսյանի հայցերը մերժվեցին Սահմանադրական դատարանի կողմից մարտի 8-ին, երբ Հայաստանում արտակարգ դրություն էր հայտարարված:

Կարապետյանը և արտգործնախարարության այլ աշխատակիցներ։ Քննադատության հետևանքով նրանք հեռացվեցին քաղաքացիական ծառայությունից, ապա զրկվեցին դիվանագիտական կոչումներից։ Դրան զուգահեռ Հայաստանի գլխավոր դատախազի տեղակալը և հոկտեմբերի 27-ի գործով[2] հատուկ կարևորության գործերի քննիչը, որ արտահայտվել էին ի օգուտ Լևոն Տեր-Պետրոսյանի, ձերբակալվեցին որոշակի մեղադրանքներով։ Իշխանությունների նշանակետում էին հայտնվել նաև ընդդիմադիր մի շարք այլ գործիչներ, նրանց ընտանիքներն ու թիկնապահները, որոնց ձերբակալելու, բերման ենթարկելու կամ խուզարկելու միջոցով փորձ էր արվում ահաբեկել կամ կազմալուծել ընդդիմությունը։ Ըստ ԶԼՄ-ների հաղորդումների ընդդիմության որոշ առաջնորդներ նույնպես բերման են ենթարկվել, իսկ նրանց կամ նրանց ազգականների տներում կատարվել են խուզարկություններ։

Ընդդիմադիր առաջնորդների նկատմամբ հաշվեհարդարները իրագործվում էին պետական իրավապահ մարմինների, ինչպես նաև քրեածին խմբերի կողմից։ Սա վախի մթնոլորտ էր ձևավորում քաղաքացիների շրջանում ու ամրապնդում էր այն համոզմունքը, որ «խաղարկվում է իշխանության փոխանցման սցենար երկրի փոքր իշխող էլիտայի ներսում...» (Տես՝ Giragossian and Hughes, 2008: 15)։ Հանրային ծառայողները մշտապես ստիպված էին հաճախել Սարգսյանի օգտին կազմակերպվող հանրահավաքներին, որոնցից ամենամեծը տեղի ունեցավ փետրվարի 26-ին։ Այն կազմակերպվել էր Հանրապետական կուսակցության կողմից ու ներկա էր կուսակցության վերնախավը։ Կազմակերպիչների համար այդ օրն ամեն ինչ հարթ չանցավ։ Լրատվամիջոցներում լայնորեն այդ մասին հայտնելուց ու ավտոբուսներով մարդկանց Երևան հասցնելուց հետո՝ միջոցառումը դարձավ անկառավարելի։ Մարդկանց հոծ խմբերը Երևանի Հանրապետության հրապարակում Սարգսյանի օգտին կազմակերպված հանրահավաքի ոստիկանական շղթան ճեղքելով՝ կազմակերպված կերպով շարժվեցին դեպի ընդդիմության հանրահավաքի անցկացման վայրը՝ Ազատության հրապարակ, որ մի քանի խաչմերուկ այն կողմ էր գտնվում։

Միջազգային հանրության արձագանքը ընտրություններում Սերժ Սարգսյանի հաղթանակի առնչությամբ ջերմությամբ չառանձնացավ։ Առաջին շնորհավորական ուղերձները ստացվեցին նախագահներ Գյուլից (Թուրքիա), Ահմադինեժադից (Իրան), Լուկաշենկոյից (Բելառուս), Սահակաշվիլիից (Վրաստան)։ Ռուսաստանյան Դաշնության մամլո ծառայությունից հաղորդեցին, որ նախագահ Պուտինը շնորհավորել է Սարգսյանին ընտրությունների կապակցությամբ, սակայն մեր իմացությամբ բնօրինակ շնորհավորանքը այդպես էլ հրապարակային չդարձավ։ Եվրամիությունն ու ՆԱՏՕ-ն ուղարկեցին զգուշավոր շարադրանքով շնորհավորական ուղերձներ, որոնցում շնորհավորում էին ոչ թե նորընտիր նախագահին այլ «Հայաստանի ժողովրդին»։ Չնայած կառավարության կողմից վերահսկվող լրատվամիջոցների հաղորդումներին՝ անհնար էր ինքնուրույնաբար ստուգել Ֆրանսիայի նախագահ Սարկոզիի ուղերձի գոյության փաստը։ Հայաստանում ֆրանսիական դեսպանությունը ոչ հաստատում, ոչ էլ ժխտում էր ուղերձի գոյության փաստը, սակայն նախագահ Սարկոզիի պաշտոնական կայքում համապատասխան տեղեկատվություն զետեղված չէր։ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Բուշից այս կապակցությամբ

[2] Տես Գլուխ 2-ը՝ այս գործի հետ կապված մանրամասների համար։

շնորհավորանք մինչ օրս չի ստացվել։ Հայաստանի ղեկավարության համար հաջորդ անցանկալի հետևանքը ներկայացավ 2008թ. փետրվարի 19-ի մատույցներում տեղի ունեցածի վերաբերյալ ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության վերջնական զեկույցի տեսքով, որը հրապարակվեց մայիսի վերջին (Տես՝ ԵԱՀԿ, 2008c)։

Թեպետ իշխանություններն արտահայտում էին իրենց դժգոհությունը շարունակվող հանրահավաքների վերաբերյալ ու նշում ցուցարարների[3] նկատմամբ ուժ կիրառելու հավանականությունը, սակայն ուժի փաստացի կիրառում մինչև մարտի 1-ը չգրանցվեց։ Մարտի 1-ի առավոտյան ժամը 6:35 ոստիկանությունը հարձակվեց մի քանի հազար ցուցարարների վրա, ովքեր գիշերում էին Ազատության հրապարակի վրաններում։ Ոստիկանությունը պնդում էր, որ ցուցարարները զինված էին ու նախապատրաստվում էին անկարգությունների։ Շատերն արթնացան բռնություններից։ Վերջերս Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացրած զեկույցում նշվում է.

> «…իշխանությունները պետք է պատասխանեն որոշակի հարցերի։ Մասնավորապես, ո՞վ, ե՞րբ և ի՞նչ հանգամանքներում է որոշում կայացրել խաղաղ նստացույցը մարտի 1-ի վաղ առավոտյան ուժի գործադրմամբ հարկադիր դադարեցնելու վերաբերյալ, արդյոք նստացույցի մասնակիցներին ներկայացվել է խուզարկություն իրականացնելու հրապարակային պահանջ և արդյոք քաղաքացիները հրաժարվել կամ դիմադրություն են ցուցաբերել, արդյոք ուժի կիրառումը համարժեք է եղել ստեղծված իրավիճակին»։

Մինչ օրս այս հարցերի շարքը մնում է անպատասխան։ International Crisis Group-ը ներկայացնում է այն իրադարձությունները, որ տեղի ունեցան վաղ առավոտյան խաղաղ ցուցարարներին բռնի ցրելուց հետո։

> Կեսօրին մոտ մի քանի հազար մարդ հավաքվեցին մի նոր տեղում, քաղաքի կենտրոնից ոչ հեռու՝ քաղաքապետարանի ու ֆրանսիական դեսպանատան հարևանությամբ։ Տարածքում տեղակայված էին հատուկ ուժեր, սակայն ցուցարարները նրանց առաջխաղացումը թույլ չտալու համար ավտոբուսներով ու այլ միջոցներով բարիկադներ էին ձևավորել։ Ականատեսներից մեկը պատմում է, որ ժամը 15:00 սահմաններում հավաքված մարդկանց թիվը նշանակալիորեն ավելացել էր, իսկ մի ոստիկանական մեքենա հրկիզվել էր։

Ճնշումների ու լարվածության, ցուցարարների կողմից անհնազանդության դրսևորումների ավելացման հետ կապված՝ պաշտոնավարման ժամկետն ավարտող նախագահ Քոչարյանը հայտարարեց 20-օրյա արտակարգ դրություն և զինված ու հատուկ ուժեր տեղակայվեցին քաղաքի փողոցներում։ Հաջորդած իրադարձությունների արդյունքում, մարտի 2-ին վաղ առավոտյան զոհվեցին 7 քաղաքացիներ ու մեկ ոստիկան։ Արտակարգ դրությամբ սահմանափակվում էին որոշ քաղաքացիական իրավունքներ (օրինակ՝ հավաքներ անցկացնելու իրավունքը) և մամուլի ազատությունները (հետո մասամբ հանվեցին), որոնց

[3] Հեռուստատեսային հարցազրույցում նախագահ Քոչարյանը նշեց ցուցարարների նկատմամբ ուժ կիրառելու հավանականությունը։

առկայության պայմաններում միայն հանրային լրատվամիջոցները կարող էին ապահովել լրատվություն:

«Ժառանգություն» կուսակցության մարտի 17-ի հայտարարության մեջ նկարագրվում է հետագա ընթացքը.

> «Ցուցարարները՝ մարտի 1-ի առավոտյան տեղի ունեցած ութկուններից հետո դարձան անկառավարելի: Անվտանգության «սպասավորները» այդ թվում նաեւ տարբեր համազգեստ հագած, դիմակավոր մարդիկ ամեն օր ձերբակալում-տանում էին եւ ցայսօր էլ տանում են ընդդիմության ներկայացուցիչներին ու շարքային մասնակիցներին, անգամ տարածքում պատահաբար հայտնված քաղաքացիների, որոնց նկատմամբ քրեական գործեր են հարուցվում տարաբնույթ շինծու մեղադրանքներից մինչև պետական հեղաշրջման կազմակերպման փորձի համար: Ազգային ժողովի 4 պատգամավորների հանդեպ, ովքեր համարձակվեցին աջակցել ընդդիմության թեկնածուին, նույնպես մեղադրանք ներկայացվեց, և նրանք զրկվեցին անձեռնմխելիությունից: Իրականացված հատուկ գործողության և դրան հաջորդած արտակարգ իրավիճակի նպատակը հետևյալն էր՝ փորձել հայ ժողովրդին վախեցնել և Սահմանադրական դատարանին զգուշացնել, որպեսզի վերջինս անկողմնակալ դատավճիռ կայացնելու տեսական մտադրություն անգամ չունենա: Գործի դրվեց բիրտ մարտավարություն, և իշխանության գոնե գերակա շրջանակը ևս մեկ անգամ վավեր համարեց փետրվարյան ընտրությունների իր համար ցանկալի արդյունքները»:

Իրավական գործընթացներում, որ հաջորդեցին այս իրադարձություններին, հիմնականում ներառված էին ընդդիմության հիմնական թեկնածուի կողմնակիցներն ու վստահված անձինք, ինչն էլ առավել մեծացնում էր կասկածները Հայաստանի դատական համակարգի անկախության վերաբերյալ (Տես՝ Մարդու իրավունքների պաշտպան, 2008b): Թվացյալ փութկոտությամբ ընթացող վարույթներն ու փոքր զանցանքների համար նշանակվող խիստ պատիժները որոշ դիտորդների զարմանքն էին հարուցել (Տես՝HFAC, 2008, ի թիվս մյուսների)[4]: Դժբախտաբար, ավելի մեծ անարդարություն էր սպասում այն ընտանիքներին, ովքեր մարտի 1-ի և 2-ի բռնությունների արդյունքում կորցրել էին իրենց սիրելիներին: Հետընտրական իրադարձությունների անկախ հետաքննություն անցկացնող Փարիզի հայ փաստաբանների միությունը (Association Française des Avocats et Juristes Arméniens, AFAJA)[5] նշում է, որ զոհերի ընտանիքների նկատմամբ տարբեր ճնշումներ էին գործադրվում [իշխանությունների կողմից] ու գումար է առաջարկվում «այդ էջը փակելու ու թաղման ծախսերը հոգալու համար»:

Իշխանությունները մերժում են մարտի 1-ին և դրանից հետո որևէ անօրինականության վերաբերյալ մեղադրանքները, և դրա փոխարեն պաշտպանում են իրենց գործողությունները՝

---

[4] Անկախ ԶԼՄ-ներում այս վարույթները լայնորեն լուսաբանվել են:

[5] Ըստ Hetq կայքի “b”, AFAJA-ի ամբողջական զեկույցը (ֆրանսերեն լեզվով) կարող եք գտնել www.pf-armenia.org կայքում (*Library* բաժնում):

որպես երկրում կայունության պաշտպանության ուղղված գործողություններ, երբ հեղաշրջման փորձ էր արվում։ Մարտի 17-ին «Վաշինգտոն Պոստում» տպագրված հոդվածում Սերժ Սարգսյանն ու Արթուր Բաղդասարյանը (նախագահության թեկնածու, որ հետագայում Ս. Սարգսյանի կողմից նշանակվեց Անվտանգության խորհրդի քարտուղար) գրում են.

> «Բոլոր չափավոր քաղաքական ուժերի համար էլ՝ թե կառավարամետ, թե ընդդիմությանը սատարող, պարզ էր, որ արտակարգ դրության հայտարարումը մեր քաղաքացիներին պաշտպանելու միակ հնարավոր տարբերակն էր։ Մենք պետք է կարողանանք քաղաքական լուծումներ գտնել մինչև հինգշաբթի օրը, երբ արտակարգ դրությունը վերացվի և այնպես անել, որ Հայաստանը չհայտնվի քաոսային վիճակում»։

Ընդդիմության ձերբակալված անդամները ժխտում են հեղաշրջման փորձը և պնդում, որ մեղադրվում են քաղաքական շարժառիթներով։ Իշխանությունները պետք է կամ կարողանան կալանավորված ընդդիմադիր առաջնորդների դեմ հարուցել հիմնավոր գործեր, կամ էլ կշարունակվեն նրանց հանդեպ մեղադրանքները ցուցարարներին բռնի ցրելու և ապա մարդկանց քաղաքական հայացքների համար ձերբակալելու համար։ Իսկ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում կայացած լսումների ժամանակ Սերժ Սարգսյանի ներկայացուցչի կողմից Հայաստանում քաղբանտարկյալների բացակայության մասին հնչեցրած հայտարարությանն ի պատասխան ԱՄՆ Հելսինկյան հանձնաժողովի նախագահ Էլսի Հեյսթինգսն ուղղակիորեն ասաց (Տես՝ ԱՄՆ Հելսինկյան հանձնաժողով, 2008).

> «...Եթե ..., պ-ն [Վիգեն] Սարգսյան, ... դուք ինձ ասում եք, որ [Հայաստանում] քաղբանտարկյալներ չկան, ապա ես կասեմ, որ դուք ցնորվել եք, որովհետև այդպիսիք կան»։

Այս զեկույցն ավարտելու պահին դեռ անազատության մեջ են մնում ընդդիմության մի քանի տասնյակ առաջնորդներ ու շարքային անդամներ։ Ցավոք, քիչ է հուսալի ու անկախ դատաիրավական պրոցեսների հույսը, որ թույլ կտար այս մարդկանց պաշտպանել նրանց անազատության մեջ պահողների կամայականություններից։

* * *

Փետրվարի 19-ից հետո տեղ գտած զարգացումներից ամենաանսպասելին նախկին նախագահ Տեր-Պետրոսյանի գլխավորած ընդդիմադիր շարժմանը ցուցաբերվող ժողովրդական աջակցության չափն էր։ Թեպետ նախկինում Հայաստանում եղել են կեղծիքներով ընթացած ընտրություններ, որոնց անդրադարձ կկատարվի **Գլուխ II** -ում, սակայն այդ ընտրություններից և ոչ մեկից հետո այսքան շատ մարդիկ բողոքի ձայն չեն բարձրացրել ու չեն համախմբվել հանուն փոփոխություն կատարելու ցանկության։ **Գլուխ III**-ում անդրադարձ կկատարվի վարչական ռեսուրսի չարաշահումը ապացուցող փաստերին, ձայների գնմանը, ընտրողների ահաբեկմանը և որոշակի արդյունքների հասնելու համար լիազորությունների չարաշահման այլ օրինակների։ **Գլուխ IV**-ում քվեատուփերի լցոնման ու ձայների հաշվարկի արհեստական ուռճացումն է դիտարկվում, և ներկայացվում են այն

վիճակագրական ապացույցները, որոնք մատնանշում են շահարկումների այս երկու տեսակը: Անդրադառնալով այս կարգի շահարկումներին, և ի տարբերություն երկու կողմերի պնդումների, այդ զեկույցում կիրառված մեթոդաբանությունը ցույց է տալիս, որ Հայաստանի 2008թ. նախագահական ընտրությունների առաջին փուլում հաղթող չի եղել: Քանի որ ընտրական ժամանակահատվածում դիտարկվել են նաև ընտրակեղծիքներին ուղղված այլ գործողություններ ևս (օր.՝ վարչական ռեսուրսի չարաշահում, ձայների գնում, ընտրողների ահաբեկում և այլն, որոնց մեծ մասն ըստ էության արվել է որոշակի թեկնածուի օգտին), մենք երբեք չենք իմանա, թե ինչպիսին կլիներ ձայների իրական բաշխումը ընդդիմադիր թեկնածուների համար, եթե այսպիսի անօրինական գործողություններ չկատարվեին: Այս արդյունքը նաև որոշակի լույս է սփռում ընտրություններից հետո Հայաստանի բնակչության զգալի մասին շրջանում առկա դժգոհության ու օտարման փաստին: Իսկ թե այս դժգոհության արդյունքում Հայաստանի բռնած ուղին որակական փոփոխություններ կկրի, թե ոչ, ժամանակը ցույց կտա: **Գլուխ V**-ում քննարկվում է Հայաստանում հզոր ու իրավասություններով օժտված քաղաքացիական հասարակության լավ դիրքերում գտնվելու հանգամանքն ու պետության մակարդակով լուրջ փոփոխություններ կատարելու վճռականությունը: Իսկ **Գլուխ VI**-ում՝ հայացք նետելով դեպի կայունությունն ու ապագա զարգացումները, դիտարկվում է այս պահի ամենակարևոր խնդիրը. այն է վստահության ձևավորման հուսալի միջոցների ձեռնարկումը (մասնավորապես՝ փետրվարի 19-ի և մարտի 1-ի ու 2-ի դեպքերի հավաստի ու անկախ հետաքննությունը) և ընդդիմության հետ իրական երկխոսության ծավալումը, որոնց բացակայության պարագայում ներկա կառավարությունը կլինի ոչ թե ողջ Հայաստանի այլ որոշ հայերի կառավարություն:

II. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

A. Համառոտ ակնարկ Հայաստանի նախորդ ընտրությունների վերաբերյալ

Խորհրդային Միության կազմից դուրս գալու նպատակով 1991թ. սեպտեմբերի 21-ին կայացած անկախության հանրաքվեն մի նոր փուլ նշանավորեց Հայաստանի պատմության մեջ: Երկու օր անց Հայաստանի Գերագույն խորհուրդը երկիրը հռչակեց անկախ: 1991թ. հոկտեմբերին տեղի ունեցան առաջին խորհրդարանական ընտրությունները, որոնք մինչ օրս համարվում են հետ-Խորհրդային Հայաստանի պատմության մեջ ամենաազատ ու ամենաարդար ընտրությունները:

Հայաստանում խորհրդարանական ընտրություններ են եղել նաև 1995, 1999, 2003 և 2007թթ.: Նախագահական ընտրություններ են անցկացվել 1991, 1996, 1998, 2003 և 2008թթ.:1996թ.-ից սկսած ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը դիտորդական առաքելություն է անցկացրել հայաստանյան ընտրություններում և ըստ տրված գնահատականների ոչ մի ընտրություն չի համապատասխան ԵԱՀԿ առջև ստանձնած հանձնառությունների պահանջներին ու ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափանիշներին (Տես՝ OSCE, 2005):

1991թ. Հայաստանում տեղի ունեցան առաջին նախագահական ընտրությունները, որոնցում ձայների 83 տոկոսով հաղթանակ տարավ Հայոց համազգային շարժման թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանը: Նրա մրցակիցներն էին 6 այլ թեկնածուներ, որոնց թվում էին Ազգային ինքնորոշում միավորման թեկնածու հայտնի այլախոհ Պարույր Հայրիկյանը և Սփյուռքում խորը արմատներ ունեցող Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության թեկնածու Սոս Սարգսյանը:

Հայաստանի խորհրդարանի կամ ազգային ժողովի ընտրությունները տեղի ունեցան 1995թ.-ին՝ ՀՀ առաջին սահմանադրական հանրաքվեի հետ միաժամանակ, երբ ընդունվեց Հայաստանի նոր Սահմանադրությունը: ԵԱՀԿ դիտորդների գնահատմամբ ընտրություններն «ազատ էին, բայց ոչ արդար»: Այս գնահատման պատճառներից մեկն այն էր, որ Հայ հեղափոխական դաշնակցությունը, որը հիմնական ընդդիմադիր կուսակցությունն էր հանդիսանում, զրկված էր մասնակցելու հնարավորությունից, քանզի նախագահ Տեր-Պետրոսյանի հրամանագրով կուսակցության գործունեությունն արգելված էր՝ ահաբեկչության ու օտարերկրյա ֆինանսավորում ստանալու մեղադրանքներով:

Երկրորդ նախագահական ընտրություններն շատ ավելի դրամատիկ էին, քան առաջինը: Պաշտոնական տվյալների համաձայն Տեր-Պետրոսյանը վերընտրվել էր նախագահի պաշտոնում ձայների 51,75 տոկոսով: Ընդդիմության թեկնածու Վազգեն Մանուկյանը (Ազգային Ժողովրդավարական Միություն) վիճարկում էր հաղթանակը՝ մատնանշելով տեղ գտած լայնատարած կեղծիքները և կազմակերպեց մի շարք ցույցեր: 1996թ. սեպտեմբերի 25-ին հազարավոր ցուցարարներ գրոհեցին Երևանում ազգային ժողովի շենքը և բռնություն գործադրեցին ազգային ժողովի խոսնակի ու փոխխոսնակի վրա, որոնք 2-ն էլ ՀՀՇ-ից էին: Ոստիկանությունը ցրեց ցուցարարներին և արդյունքում մոտ 60 հոգի ստացել էին տարբեր մարմնական վնասվածքներ (Տես՝ Amnesty International, 1996): Ընդդիմադիր պատգամավորները զրկվեցին անձեռնմխելիության իրավունքից, մի քանիսն էլ ծեծի

ենթարկվեցին ու ձերբակալվեցին: Նախագահի հրամանագրով հայտարարվեց արտակարգ դրություն և ոստիկանությունն ու զինված ուժերը պարեկում էին փողոցներում:

Տեր-Պետրոսյանի պաշտոնավարման երկրորդ փուլը կարճ տևեց՝ կապված Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) հակամարտության կարգավորման առաջարկված տարբերակի շուրջ ներքին տարաձայնություններով: 1997թ. սեպտեմբերին Տեր-Պետրոսյանն հայտարարեց, որ ինքն ընդունում է ԵԱՀԿ խաղաղության ծրագիրը որպես հիմք այս հակամարտության կարգավորման համար, որով Հայաստանից կպահանջվի կատարել որոշակի զիջումներ: Երկփուլ այս պլանի համաձայն ԼՂ-ի հայերից պահանջվում էր ետ քաշվել ԼՂ-ից դուրս գտնվող գրավյալ տարածքներից ու այդ տարածքներում տեղակայվում էին միջազգային խաղաղապահներ, ապա լինելու էին քննարկումներ ԼՂ իրավական կարգավիճակի վերաբերյալ: Այս հայտարարությունը հանդիպեց Հայաստանի ու ԼՂ պաշտոնյաների, ինչպես նաև սփյուռքահայ համայնքի որոշ օղակների լուրջ դիմադրությանը: 1998թ. փետրվարի 1-ին երկրի պաշտպանության նախարարի առաջնորդմամբ «Երկրապահ կամավորական միությունը», որի կազմում հիմնականում արցախյան պայքարի ազատամարտիկներն են, պահանջեց Տեր-Պետրոսյանի հրաժարականը: ՀՀՇ-ի խորհրդարանական խմբակցության շատ անդամներ դուրս եկան խմբակցությունից, որի արդյունքում հրաժարական տվեց ազգային ժողովի խոսնակը: Օրենսդիր մարմնում բուռն բանավեճի գագաթնակետը Տեր-Պետրոսյանի հրաժարական էր փետրվարի 3-ին: Տեր-Պետրոսյանը դատապարտեց «իշխանության ձեզ հայտնի մարմիններին» իր հրաժարականը պահանջելու համար, անուղղակիորեն մատնացույց անելով (այդ ժամանակվա) վարչապետ Ռոբերտ Քոչարյանին, պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին և ներքին գործերի ու ազգային անվտանգության նախարար Սերժ Սարգսյանին: Թեպետ Սահմանադրության համաձայն նախքան նոր ընտրությունների անցկացումը նախագահի պարտականությունները պետք է ժամանակավորապես ստանձներ ազգային ժողովի խոսնակը, սակայն վերջինիս հրաժարականի առկայության պարագայում, այդ պարտականությունը ստանձնեց վարչապետը: Արտահերթ նախագահական ընտրություններ նշանակվեցին 1998թ. մարտի 16-ին:

Մարտի նախագահական ընտրություններում գրանցվեց տասներկու թեկնածու: Հիմնական մրցակցությունը ծավալվելու էր Ռոբերտ Քոչարյանի, Վազգեն Մանուկյանի ու Կարեն Դեմիրճյանի (Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղարը 1974-1988թթ.): Քանի որ թեկնածուներից և ոչ մեկը չհավաքեց ընտրությանը մասնակցած 1,46 միլիոն ընտրողների (64 տոկոս մասնակցություն) ձայների պարզ մեծամասնությունը՝ «50 տոկոս +1», ուստի անցկացվեց 2-րդ փուլ՝ մարտի 30-ին: 2-րդ փուլում նախագահի պաշտոնակատար և վարչապետ Ռոբերտ Քոչարյանը ստացավ ընտրություններին մասնակցած 1,57 միլիոն ընտրողների (68,5 տոկոս մասնակցություն) ձայների 59,5 տոկոսը: ԵԱՀԿ-ն եզրակացրեց. «որոշ հարցերում կան դրական տեղաշարժեր 1996թ. ընտրությունների համեմատ, սակայն ընտրությունները չեն համապատասխանում ԵԱՀԿ առաջ Հայաստանի ստանձնած հանձնառությունների պահանջներին»: Դիտորդներն արձանագրել էին քվեատուփերի լցոնում, անճշտություններ ձայների հաշվարկման ժամանակ, և տեղական իշխանությունների կողմից կեղծիքներ՝ ուղղված Քոչարյանին տրված քվեների թվի ուռճացմանը: Այնուհանդերձ, 1998թ. ապրիլի 9-ին տեղի ունեցավ Քոչարյանի

պաշտոնակալման արարողությունը։ 1999թ. խորհրդարանական ընտրություններից հետո Դեմիրճյանը ընտրվեց Ազգային Ժողովի խոսնակ, իսկ Վազգեն Սարգսյանը՝ վարչապետ։

1999թ. հոկտեմբերի 27-ին զինված մարդիկ ներխուժեցին ազգային ժողովի շենք ու կրակ բացեցին պատգամավորների ու պաշտոնյաների վրա՝ սպանելով վարչապետ Վազգեն Սարգսյանին, ԱԺ խոսնակ Կարեն Դեմիրճյանին, երկու փոխխոսնակներին և ևս 4 հոգու։ Զինված անձանց խմբի ղեկավարը պնդում էր, որ իրենց թիրախը վարչապետն էր ու իրենք ուզում էին հեղաշրջում անել «ժողովրդավարությունը վերականգնելու» ու աղքատությանը վերջ դնելու համար։ Նախագահ Քոչարյանը շտապեց դեպի դեպքի վայր ու սկսեց օգնել տասնյակ պատանդներին ազատ արձակելու շուրջ բանակցություններին՝ խոստանալով արդարացի դատավարություն ԱԺ-ում կրակ բացած անձանց։ Այդ օրը նա կորցրեց իշխանական իր երկու հիմնական մրցակիցներին, ովքեր այդ պահին ավելի մեծ ժողովրդականություն էին վայելում և թերևս նույնիսկ քաղաքականապես հզոր էին իրենից։ Ըստ Սահմանադրության նոյեմբերի 2-ին ազգային ժողովի նիստ գումարվեց ու խոսնակի պաշտոնում նշանակվեց Արմեն Խաչատրյանը (մեծամասնական «Միասնություն» բլոկից), իսկ Վազգեն Սարգսյանի եղբայր Արամին Ռոբերտ Քոչարյանն առաջադրեց նոր վարչապետի պաշտոնում՝ ձգտելով պահպանել քաղաքական հավասարակշռությունը։ Քաղաքական պայքարը սրվեց։ Սպանությունների քննությունն իրականացնող ռազմական դատախազը ձերբակալեց երկրի նախագահի օգնականին, որով սպանություններում Քոչարյանի ներգրավվածության տպավորություն էր ստեղծվում։ 2000թ. ապրիլին ազգային ժողովի «Միասնություն» ու «Կայունություն» խմբակցությունները նույնպես սպառնում էին պաշտոնանկ անել Քոչարյանին։ Իր իշխանությանը սպառնացող վտանգը հակադարձելու համար այդ տարվա մայիսին Քոչարյանը պաշտոնանկ արեց վարչապետին ու պաշտպանության նախարարին։ 2001թ. հոկտեմբերին, ազգային ժողովի ողբերգության 2-րդ տարելիցի օրը հազարավոր մարդիկ դուրս էին եկել ցույցերի՝ պահանջելով Քոչարյանի հրաժարականը։ Հոկտեմբերի 27-ի գործի դատաքննությամբ եզրակացվեց, որ պարագլուխներ չեն եղել, իսկ գործին ներգրավված 4 հոգին համագործակցել են իրենց իսկ նախաձեռնությամբ։ Հայաստանի քաղաքացիական հասարակության համար բազմաթիվ անպատասխան հարցեր մնացին։

Հաջորդ նախագահական ընտրությունները տեղի ունեցան 2003թ. փետրվարի 19-ին, որի ընթացքում թեկնածուներից ոչ մեկը ձայների 50 տոկոսից ավել չհավաքեց. Քոչարյանը ստացավ ձայների 48,3 տոկոսը, իսկ Ստեփան Դեմիրճյանը՝ հոկտեմբերի 27-ին սպանված ԱԺ խոսնակ Կարեն Դեմիրճյանի որդին ձայների 27,4 տոկոսը։ Երրորդ տեղում Արտաշես Գեղամյանն էր՝ քվեների 16,9 տոկոսով։ Մարտի 5-ին անցկացվեց ընտրությունների 2-րդ փուլը՝ Քոչարյանի ու Դեմիրճյանի միջև, որտեղ հաղթանակ տարավ Ռոբերտ Քոչարյանը՝ հնարվորություն ստանալով պաշտոնավարել ևս 5 տարի։ Ընդդիմությունը պնդում էր, որ ընտրությունները կեղծվել են, իսկ ԵԱՀԿ դիտորդները հայտարարեցին, որ այն «ընթացել է թերություններով»։

Ներդիր 1. 2004թ. ապրիլի 12-13-ի դեպքերը[1]

Հայաստանի ընդդիմությունը, ոգեշնչվելով 2003թ. նոյեմբերին Վրաստանում տեղի ունեցած Վարդերի հեղափոխությամբ, 2004թ. վաղ գարնանը վերսկսեց զանգվածային ցույցերը։ Այս համատեքստում էր, որ ընդդիմությունը վերստին անդրադարձավ 2004թ. գարնանը վստահության

հանրաքվե անցկացնելու մասին Սահմանադրական դատարանի առաջարկին։ Այս որոշումը կայացվել էր Սահմանադրական դատարանի կողմից 2003թ. ապրիլին, սակայն տարվա ընթացքում դատարանը հստակեցումներ էր մտցրել իր որոշման մեջ, ուստի 2004թ. մարտին հանրաքվե չանցկացվեց։ Արդյունքում ընդդիմությունը սկսեց ցույցերի մի շարք մարտի 28-ից՝ պահանջելով Քոչարյանի հրաժարականը։

Իշխանություններն էլ իրենց հերթին ընդդիմության պահանջներն ու բողոքի ակցիաները համարում էին իշխանությունը ուժով զավթելու ակնհայտ փորձ ու չէին թույլատրում անցկացնել ցույցեր։ Նախագահ Քոչարյանը հանրային հեռուստաընկերության եթերից ծաղրելով ընդդիմության քայլերը դրանք անվանեց «օճառի փրփուրի հեղափոխություն»։ Այս ցույցերի գագաթնակետը ապրիլի 12-ի լույս 13-ի գիշերն էր, երբ իշխանության զորքերը ուժի կիրառմամբ ցրեցին 2000 ցուցարարների՝ կիրառելով ջրցան մեքենաներ, էլեկտրաշոկ, մահակներ ու ժամանակավոր ազդեցության միջոցներ։ Բազմաթիվ ցուցարարներ, այդ թվում՝ խորհրդարանականներ ձերբակալվեցին, իսկ ոմանք կալանքի տակ գտնվելու ժամանակ ըստ տարբեր աղբյուրների հաղորդումների ենթարկվել են կտտանքների ոստիկանության կողմից։

[1] Վերատպված է Ishkanian (2008)-ից, էջ 44-45.

2007թ. մայիսի 12-ին տեղի ունեցան խորհրդարանական ընտրությունները, որոնց նախորդեց մեկամսյա նախընտրական քարոզարշավը։ Չնայած տարբեր խախտումներին՝ խորհրդարանական ընտրությունները մայիսի 12-ին հանդարտ կերպով ավարտվեցին։ Հայաստանի Հանրային հեռուստատեսությունն այն որակեց որպես լավագույնը Հայաստանի անկախացումից ի վեր, իսկ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդները այն անվանեցին «մեծապես ժողովրդավարական» և զգալի բարելավում նախորդ ընտրությունների համեմատ։ Տեղական դիտորդներն ու հսկիչ խմբերը համակարծիք չէին։ «Ընտրությունը քոնն է» կազմակերպությունը, որ դիտորդական առաքելություն է իրականացնում ամբողջ երկրում, իր զեկույցում գրեց.

> «Նախընտրական գործընթացների դիտարկումների արդյունքում արձանագրվել են այնպիսի մտահոգիչ երևույթներ և փաստեր, ինչպիսիք են քաղաքական ուժերի համար քարոզարշավային անհավասար մեկնարկային պայմանները, վարչական ռեսուրսի օգտագործումը պաշտոնական քարոզարշավի ընթացքում, այլընտրանքային ընտրությունների բացառումը որոշ ընտրատարածքներում, ընտրական հանձնաժողովներում ուժերի անհամամասնությունը։ Որպես լուրջ թերություն են գնահատվել նաև ընտրողների վրա անօրինական ներազդեցությունը՝ մարդասիրական և այլ օգնությունների տեսքով ընտրախախտումները, պաշտոնական քարոզարշավի խոչընդոտման փաստերը և զանգվածային լրատվամիջոցներում քարոզարշավների լուսաբանման անհամաչափությունը, ընտրողների ցուցակների թերությունները»։

Ապա հաջորդեց 2008թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունները, որոնք Հայաստանի անկախացումից ի վեր անցկացված ամենախնդրահարույց ու բռնություններով ուղեկցված ընտրություններն էին։ Ուժի կիրառում գրանցվեց թե ընտրությունների օրը, թե հետընտրական ցույցերի ժամանակ, որոնց գագաթնակետը 8-ը մարդկային զոհերն էին՝ 2008թ. մարտի 1-ին ոստիկանական ուժերի կողմից ցուցարարների վրա կատարված

հարձակման ընթացքում (Տես՝ Human Rights Watch, 2008a): Զոհերի պաշտոնական թիվը ավելի ուշ դարձավ 10-ը:

B. 2008թ. նախագահական ընտրությունների վաղ զարգացումները

2008թ. փետրվարի 19-ին Հայաստանի քաղաքացիները մասնակցեցին անկախացումից ի վեր 5-րդ նախագահական ընտրություններին՝ ընտրելու 3-րդ նախագահին: Բարձրագույն քաղաքական պաշտոնին հավակնում էին վարչապետ և Հանրապետական կուսակցության առաջնորդ Սերժ Սարգսյանը, Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, ԱԺ նախկին խոսնակ ու «Օրինաց երկիր» կուսակցության առաջնորդ Արթուր Բաղդասարյանը, ԱԺ փոխխոսնակ ու Հայ հեղափոխական դաշնակցության գործադիր մարմնի ներկայացուցիչ Վահան Հովհաննիսյանը, ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանը: Հաղթելու առավել քիչ հավանականություն ունեցող թեկնածուներն էին. Արման Մելիքյանը (անկախ թեկնածու, ԼՂՀ նախկին արտգործնախարար), Արտաշես Գեղամյանը («Ազգային միաբանություն» կուսակցություն), Տիգրան Կարապետյանը (Ժողովրդական կուսակցություն) և Արամ Հարությունյանը («Ազգային համաձայնություն» կուսակցություն): «Ժառանգություն» կուսակցության թեկնածու Ռաֆֆի Հովհաննիսյանին (ԱԺ-ում ներկայացված միակ ընդդիմադիր կուսակցությունը) ու «Նոր ժամանակներ» կուսակցության Արամ Կարապետյանին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մերժեց գրանցել որպես նախագահության թեկնածուներ՝ համապատասխանաբար քաղաքացիության ու մշտական բնակության պահանջվող ժամկետները չբավարարելու հիմնավորմամբ:

Առաջատար դիրքում լինելու համար վարչապետ Սարգսյանի տրամադրության տակ էին պետական բոլոր ռեսուրսները. նրան նաև սատարում էր գործող նախագահ Քոչարյանը: Սարգսյանը շատ ակտիվ քարոզարշավի ձեռնամուխ եղավ և մայրաքաղաքում ու մարզերում ամենուր գովազդային վահանակների, ավտոբուսների վրա նրա լուսանկարն էր՝ «Առաջ Հայաստան» կարգախոսով: Նրա հիմնական մրցակից Լևոն Տեր-Պետրոսյանին սատարում էին երկու մեծ ընդդիմադիր կուսակցություններ՝ Արամ Սարգսյանի «Հանրապետություն» կուսակցությունն ու Ստեփան Դեմիրճյանի «Ժողովրդական» կուսակցությունը և մի տասնյակ ավելի փոքր կուսակցություններ ու խմբեր: Ընդդիմությունը զգալիորեն ավելի քիչ ռեսուրսներ ուներ ու նաև խոչընդոտների էր հանդիպում Հայաստանի տարբեր վայրերում ընտրական շտաբեր բացելու ու դրանց գործունեությունը իրականացնելու ճանապարհին:

Նախընտրական զարգացումների լուսաբանումը ԶԼՄ-ներում ուներ իր առանձնահատկությունները: Հայաստանի մեծությամբ երկրորդ քաղաք Գյումրիում գտնվող ԳԱԼԱ փոքր մասնավոր հեռուստաընկերությունից զատ՝ մնացած բոլոր հեռուստաընկերությունները նախընտրական ժամանակահատվածում կարծես թե զբաղվում էին միայն Սերժ Սարգսյանի օգտին քարոզչությամբ, ինչը նաև կատարվում էր կառավարության կողմից վերահսկվող թերթերի էջերում: Իր հերթին, Տեր-Պետրոսյանի օգտին դրական լուսաբանում էին ապահովում շուրջ կես տասնյակ ընդդիմադիր թերթեր, որը սակայն բավարար չէր հավասարակշռելու հեռուստաթերթերից հնչող բացասական քարոզչությունը: Փետրվարի 8-ին Տեր-Պետրոսյանը դիմեց Սահմանադրական դատարան՝ ընտրությունները ԶԼՄ-ներում տեղ գտած զրպարտանքների հետ կապված հետաձգելու

պահանջով[6]: Կառավարության կողմից վերահսկվող հանրային հեռուստատեսությունը ընդդիմության թեկնածուին արատավորելու քարոզարշավ էր վարում եթերում[7]: Դատարանը փետրվարի 11-ին միջնորդությունը մերժեց՝ եզրակացնելով, որ նյութական ապացույցներ ներկայացված չէին[8]: Եթե խոսենք այլ թեկնածուների մասին, մի կողմ թողնելով բոլորին հատկացվող եթերաժամանակը, հարկ է նշել Հայ հեղափոխական դաշնակցության կողմից վերահսկվող «Երկիր» հեռուստաընկերության եթերում Վահան Հովհաննիսյանի վերաբերյալ ծավալուն լուսաբանումներ, և այն, որ Տիգրան Կարապետյանն էլ օգտվում էր իրեն իսկ պատկանող ԱԼՄ հեռուստաընկերության ընձեռած հնարավորություններից:

Նախընտրական փուլում սրվեցին ընդդիմադիր թեկնածուների հարաբերությունները: Տեր-Պետրոսյանը, չկարողանալով համախմբել բոլոր ընդդիմադիր ուժերին, սկսեց լուտանքներ տեղալ որոշ թեկնածուների հասցեին: Թիրախներից մեկը Բաղդասարյանն էր, որին նա փետրվարի 14-ի հանրահավաքի ժամանակ հրապարակավ անվանեց «դավաճան», քանի որ վերջինս հրաժարվել էր պաշտոնապես սատարել Տեր-Պետրոսյանին՝ իր անունը թողնելով քվեաթերթիկում[9]: Իր քարոզարշավին չմիանալու համար Տեր-Պետրոսյանը քննադատում էր նաև Հայ հեղափոխական դաշնակցությանը, հենց այն նույն կուսակցությունը, որի գործունեությունն ինքը կասեցրել էր 1990-ականների կեսին և որը Քոչարյանի պաշտոնավարման երկու ժամանակաշրջանների ընթացքում եղել էր իշխանության հիմնաքարերից մեկը: Իր հերթին Վազգեն Մանուկյանը՝ Տեր-Պետրոսյանի ախոյանը 1996թ. ընտրություններում, քննադատեց Տեր-Պետրոսյանին սատարողներին: Անօրինականության մեղադրանքները լսելի էին քարոզարշավի ողջ ընթացքում: Արժե հիշատակել մեկը. երբ Արթուր Բաղդասարյանը փետրվարի 3-ին հայտարարեց, որ իր կյանքին վտանգ է սպառնում Սերժ Սարգսյանի կողմից: Սարգսյանը այս մեղադրանքները որակեց որպես «նախընտրական խաղ»:

Ընդդիմության ճամբարում շարժընթացի առումով մեծ հույս կար, որ փոփոխություն կլինի, որին սատարում էր բնակչության ճնշող մեծամասնությունը: Հոկտեմբերին նախագահի պաշտոնում առաջադրվելու մտադրության մասին Տեր-Պետրոսյանի հայտարարությունը նոր եռանդ հաղորդեց բարոյալքված ընդդիմությանը: Սկզբում ներկայացնելով մտահոգող ընդհանուր հարցերը և հույսեր առաջացնելով կոռուպցիայից և իրավունքների ոտնահարումից հոգնած մարդկանց շրջանում՝ արդեն պաշտոնական քարոզարշավի մեկնարկի ժամանակ նախկին նախագահի հարցադրումները թուլացել էին: Տեր-Պետրոսյանի

---

[6] Ըստ Հայաստանի Ընտրական օրենսգրքի նախագահության թեկնածուն կարող է ընտրությունները հետաձգելու միջնորդություն ներկայացնել, եթե քարոզարշավի ընթացքում ի հայտ են գալիս «անհաղթահարելի խոչընդոտներ»:

[7] Պետության կողմից վերահսկվող հեռուստաընկերությունների եթերում Լևոն Տեր-Պետրոսյանի վերաբերյալ հետևողականորեն շարունակվող բացասական անդրադարձի մասին ի թիվս այլոց հիշատակում է նաև «Երևանի մամուլի ակումբը», որը ԶԼՄ-ների մոնիտորինգ իրականացնող անկախ կազմակերպություն է (http://www.ypc.am/eng/index.php?go=newsletter/2008/february_eng/22_28):

[8] "High Court Refuses to Delay Armenian Vote," *RFE/RL*, February 11, 2008.

[9] ԶԼՄ-ներում կային բազմաթիվ հրապարակումներ, որ ընդդիմադիր երկու թեկանծուները կմիանան՝ ընդդեմ Սերժ Սարգսյանի:

ջանքերը այնուհանդերձ կարողացան ընդդիմադիր կայծը բոցավառել, և մյուս թեկնածուները, մասնավորապես՝ Վահան Հովհաննիսյանն ու Արթուր Բաղդասարյանը, իրենց իսկ կրակի համար վառելիք էին վերցնում առաջին նախագահի արթնացրած հակահիշխանական սենտիմենտներից: 1996թ. հետո առաջին անգամ ընդդիմությունը հանդես եկավ համոզիչ առաջնորդներով, որոնց առաքելությունը միտված էր փոփոխությանը: Թեպետ ընդդիմությունը չմիավորվեց մի թեկնածուի շուրջ, սակայն ընդդիմության շարքերը ստվար էին և փետրվարի 19-ին բոլորը գնում էին այն համոզմամբ, որ եթե ամեն ինչ արդար լինի, ապա կլինի ընտրությունների 2-րդ փուլ՝ թերևս նախկին նախագահի ու գործող վարչապետի մասնակցությամբ:

C. Եզրահանգում

Նույնիսկ նախքան Սերժ Սարգսյանի վարչապետ դառնալը 2007թ. մարտին վարչապետ Անդրանիկ Մարգարյանի մահվանից հետո, արդեն իսկ ենթադրվում էր, որ Ռոբերտ Քոչարյանին հաջորդելու է Սերժ Սարգսյանը՝ որպես Հայաստանի երրորդ նախագահ: Վարչապետի պաշտոնում Սարգսյանը ավելի շատ շրջանցում էր այս հարցը, սակայն թույլ էր տալիս ասեկոսները, որ մատնանշում էին անխուսափելին:

Վեց միջազգային ու 39 տեղական դիտորդական կազմակերպություններ 15000 դիտորդներ էին տեղաբաշխել ամբողջ երկրում, այդ թվում ավելի քան 600 միջազգային դիտորդներ, որպեսզի խրախուսեն օրինական ու խաղաղ արդյունք երաշխավորող գործընթացի կայացումը: Գործընթացը ձախողվեց, ինչպես ցույց տվեցին հետընտրական զարգացումները: ԵԱՀԿ դիտորդական առաքելության նախնական եզրակացությունը վաղաժամ էր, և անգամ վնասող ու ապակողմնորոշող: Օտարերկրացիները ձախողված ընտրությունների Հայաստանի կրկնված փորձի վերաբերյալ փութկոտությամբ ներկայացրեցին իրենց եզրակացությունները: Չնայած առաջին զեկույցում նշված էր որ ընտրությունները «հիմնականում համապատասխանել են» միջազգային չափանիշներին, սակայն ընտրողները, ԶԼՄ-ներն ու քաղաքական գործիչները այնքան շատ խախտումներ էին արձանագրել, որ դժվար էր հավատալ, թե ընտրությունները համապատասխանել են որևէ ժողովրդավարական նորմի: Կարծիք կար, որ Սերժ Սարգսյանը քարոզչության համար վարձել է լոբբիզմ իրականացնողների ԱՄՆ-ում և Եվրոպայում (Տես՝ Hughes, 2008, և Ժամանակ օրաթերթ, 2008): Ի վերջո հաջորդ իրենց զեկույցում (Տես՝ ԵԱՀԿ, 2008b) դիտորդներն ընդունեցին իրենց փութկոտ գնահատումների անկատարության փաստը, իսկ նշված խախտումների շարքում նրանք ի թիվս այլ խախտումների հիշատակում էին խախտումները ձայների հաշվման ընթացքում տեղամասերի առնվազն 16 տոկոսում: Սա սակայն շատ քիչ էր ու շատ ուշ:

Այս զեկույցի հաջորդ մասերում համակարգված կերպով ներկայացվում են փետրվարի 19-ի անօրինականությունները փաստող որոշ հանգամանքներ ու վերլուծության են ենթարկվում հաջորդող զարգացումները:

III. ՎԱՐՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ, ՁԱՅՆԵՐԻ ԳՆՈՒՄ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԱՅԼ ՕՐԻՆԱԿՆԵՐ [10]

Ընտրության օրը տեղամասերը բացվեցին ժամը 8-ին: Արդեն ժամը 10-ին մրցակից քաղաքական կուսակցություններից, ՀԿ-ներից և ընտրողներից արդեն հաղորդումներ էին ստացվում, որ այս ընտրություններն առավել շատ կեղծիքներով էին ընթանում, քան նախորդները:

Ժամերի ընթացքում Hetq Online-ից, ArmeniaNow.com-ից և Իրավական նախաձեռնություն. Ընտրություններ 2008-ից ստացվեցին կեղծիքի, բռնության և ընտրողների ահաբեկման տասնյակ դեպքերի հաստատումներ: Մեղադրանքները, որոնց իսկությունն անմիջապես ճշտել հնարավոր չէր, ավելի ուշ հաստատվում էին՝ մատնացույց անելով ընթացքում հնչած դժգոհությունների հստակ օրինաչափություն: Տեղամասերի փակման ժամանակ, ժամը 20:00-ին արդեն 2008թ. ընտրության օրն արդեն գնահատվում էր որպես ամենավատը Հայաստանի ժողովրդավարական պատմության մեջ:

Եվրոպայի ու Եվրասիայի հարցերով ԱՄՆ փոխպետքարտուղար Դանիել Ֆրիդը հանդես գալով ԱՄՆ կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում ասաց. (Տես՝ HFAC, 2008):

> Ընտրությունն ինքնին ստվերվեց քվեատուփերի լցոնման, քվեների գնման, ահաբեկման, անգամ տեղամասերում աշխատողների ու վստահված անձանց ծեծի ենթարկելու ու այլ խախտումների մասին հավաստի հաղորդումներով: Պահանջվեց վերահաշվարկ, սակայն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդները նկատեցին «վերահաշվարկի ժամանակ տեղ գտած թերություններ, այդ թվում սխալներ ու անճշտություններ, որոնց մի մասը կասկածի տակ է դնում [ընտրական հանձնաժողովի] անկողմնակալությունը»: Հետընտրական շրջանում ոտնձգություններ են եղել նաև ԵԱՀԿ դիտորդների նկատմամբ:

Երբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով Սերժ Սարգսյանը ստացավ ձայների 52,8 տոկոսը, որը 50 տոկոսի շեմից մի քիչ էր բարձր, օրվա ընթացքում ընտրություններին հետևած դիտորդների մոտ արդյունքների վերաբերյալ կասկածներ առաջացան: Այդ դիտորդների տեսել էին ձայների գնման, քվեատուփերի լցոնման ու ընտրողների ահաբեկման վառ ապացույցներ: Ստորև Ձեր ուշադրության կներկայացվեն այդ չարաշահումների որոշ օրինակներ: Սույն զեկույցի անգլերեն տարբերակում զետեղված

---

[10] PFA-ի անդամների դիտարկումներից բացի, այս գլուխը պատրաստելիս կիրառվել են "*Presidential Elections in Armenia: Report by Local Observers,"* պատրաստված Helsinki Committee of Armenia and Urban Foundation for Sustainable Development (այսուհետ՝ HCA&UFSD, 2008) կողմից, *RFE/RL* նյութերը, ինչպես նաև հոդվածներ *AGBU Magazine-ից, «Առավոտ»*, «*Հայկական ժամանակ»* և այլ օրաթերթերից: Ընթերցանության հարմարության նպատակով հղումների մեծ մասը բաց է թողնված: Անհրաժեշտության դեպքում այդ ինֆորմացիան կարող է տրամադրվել:

Հավելված 1-ում և 2-ում, թվարկվում են երկու անկախ կայքերի ընթերցողներից ստացած հաղորդումները խախտումների վերաբերյալ:[11,12]

A. Վարչական միջոցների չարաշահում

Հայաստանի մի շարք համայնքներում դիտարկվել է գործադիր իշխանության և տեղական կառավարման մարմինների աշխատակազմի ուղղակի ներգրավվածություն ու պետական ռեսուրսների օգտագործում ընտրական գործընթացներում (նաև նախընտրական քարոզչության ընթացքում): Գրանցվել է նաև տեղական իշխանությունների կողմից ակնհայտ կողմնակալության դրսևորում քարոզչական միջոցառումների, քարոզչանյութերի տեղի ապահովման, թեկնածուների անվտանգության ու այլ ծառայությունների հետ կապված:

Հայաստանի քաղաքապետերի գերակշիռ մասը Հանրապետական կուսակցության անդամ են: Նախընտրական քարոզչության ընթացքում այս բարձրաստիճան քաղաքացիական ծառայողները վարել են Հանրապետական կուսակցության թեկնածու Սերժ Սարգսյանի ընտրաշտաբների աշխատանքը *de facto* կամ *de jure.* Շատ դեպքերում սա նշանակում էր, որ նրանք չեն կատարել հանրային ծառայողի իրենց պարտականությունները: Փաստորեն, տեղական կառավարման այս գրասենյակները (ընդամենը 48 քաղաք, Երևանը չհաշված) քարոզարշավի ընթացքում բնականոն չեն գործել:

Գրեթե բոլոր մարզերում նկատվել է, որ հատկապես մեծ քաղաքներում կամ համայնքներում Սերժ Սարգսյանի հանդիպումները ընտրողների հետ կազմակերպել են տեղական իշխանությունները: Համայնքապետերը և աշխատակազմը ուղղակիորեն ընտրական գործընթացների մասնակիցն են եղել և նրանց հանձնարարված է եղել կազմակերպել հրապարակային հանդիպումներ Սերժ Սարգսյանի հետ՝ ապահովելով հնարավորինս մեծ մասնակցություն: Մարդկանց հաճախ հարևան բնակավայրերից ավտոբուսներով բերում էին, որպեսզի մասնակցեին այդպիսի հանդիպումների:

Գյումրիում փետրվարի 15-ին Սարգսյանի օգտին կազմակերպող հանրահավաքի արդյունքում մարզային, քաղաքային իշխանությունների աշխատողների և որոշ մարզային ու տեղական կառույցների բնականոն աշխատանքը խանգարվեց: Աշխատանքի ժամերին այս մարդիկ դուրս եկան մասնակցելու հանրահավաքին: Ովքեր հրաժարվում էին, ըստ հաղորդումների նրանց սպառնում էին ազատել աշխատանքից կամ այլ կերպ հաշվեհարդար

---

[11] Մեզ հասած տեղեկությունների համաձայն խախտումների մի երկար ցանկ (որը թերևս պարունակում է նաև Հավելված 1-ում ու 2-ում թվարկված խախտումների որոշ մասը) ներկայացվել է Սահմանադրական դատարան՝ երկու ընդդիմադիր թեկնածուների կողմից ներկայացված բողոքի հետ միասին (Տես՝ սույն զեկույցի տողատակի նշում 1-ը):

[12] Հաշվի առնելով այն փաստը, որ Հավելված 1-ում ու 2-ում թվարկված խախտումների գերակշիռ մասի դեպքում խախտումը կատարվել է ի օգուտ Հանրապետական կուսակցության թեկնածուի, PFA փորձեց խախտումների մասին հաղորդումների այլ աղբյուրներ գտնել, որտեղ խախտումը ընդդիմադիր թեկնածուների օգտին լիներ: Հանրապետական կուսակցության կայքում ու փնտրված այլ աղբյուրներում այս կարգի համակարգված տեղեկատվություն չհայտնաբերվեց: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում ընտրական խախտումների մասին տեղեկություններ չկան:

տեսնել (Տես՝ HCA&UFSD, 2008): Վանաձորում Մանկավարժական ինստիտուտի ուսանողներին բուհի ղեկավարությունը ստիպել էր մասնակցել Սարգսյանի հանրահավաքին: Ըստ տնօրենների հրահանգների՝ նման քայլեր էին ձեռնարկվել մի շարք հանրակրթական դպրոցներում (օր.՝ դպրոց թիվ 3, 10 և 11): Հանրահավաքի օրը տեղական իշխանությունները պատվիրել են անվճար փոխադրել մարդկանց՝ ակնհայտորեն մասնակցության ծավալներին նպաստելու նպատակով:

Այս հանրահավաքներից հետո հասարակական անկարգության մի դեպք գրանցվեց Վանաձորում: Մի շարք հանրակրթական դպրոցների աշակերտներ կազմակերպեցին հանրահավաք՝ կոչ անելով ուսուցիչներին վերադառնալ աշխատավայր: Աշակերտները պահանջում էին, որ ուսուցիչները վերահաստատեն բնականոն կրթական գործընթացը դպրոցներում ու չներքաշվեն քաղաքականության մեջ:

Երևանում վարչական ռեսուրսի կիրառում դիտարկվեց ընտրություններից հետո փետրվարի 26-ի տխրահռչակ հանրահավաքի ժամանակ, երբ Երևանի ու մոտակա բնակավայրերի որոշ բնակիչներ ստիպողաբար մասնակցեցին Սերժ Սարգսյանի կողմնակիցների կազմակերպած հանրահավաքին: Այդ հանրահավաքին մասնակցելը պարտադրվել էր շատ դպրոցների ուսուցիչների ու աշակերտների, բուհերի ուսանողների ու որոշ մասնավոր ձեռնարկությունների:

B. Քվեների գնում

Ընտրության օրը կամ դրանից առաջ ընտրողներին խոստացված կամ տրված փոխհատուցումը ներառում էր սնունդ, փող, կոմունալ ծառայությունների վճարումներ և այլ նմանատիպ բաներ: Գյումրիում օրինակ լրագրողները տեսել էին, որ 11-րդ դպրոցի մոտ՝ տեղամասից դուրս ընտրողներին վճարել են 5000 ՀՀ դրամ (մոտ 16 դոլար): Գործարքը նկարահանելու փորձ կատարած օպերատորի վրա հարձակվել էին Հանրապետական կուսակցության անդամները:

Վանաձորում ընտրակաշառքներ են բաժանվել Տիգրան Մեծ փողոցի 42 շենքի բնակիչներին, որպեսզի քվեարկեն Սերժ Սարգսյանի օգտին: Անուններ չհայտնելու պայմանով՝ որոշ բնակիչներ ընդունել են, որ ստացել են 5000 ՀՀ դրամ դրա դիմաց խոստանալով իրենց ձայնը տալ Սերժ Սարգսյանին: Դիլիջանում երեկոյան գնում էին մարդկանց տներ՝ առաջարկելով 5000 ՀՀ դրամ ընտրակաշառք՝Սերժ Սարգսյանիօգտնին քվեարկելու համար: Իջևանի Աշոտ Մելիքբեկյան փողոցից ականատեսները հաղորդում էին, որ ընտրակաշառք է բաժանվել դեպի Մշակույթի տուն գնացող ընտրողներին:

Մինչ այս քաղաքներում ընտրակաշառքներ հիմնականում բաժանվել են ընտրությանը նախորդող օրերին (փետրվարի 16-18), Գյումրիում այն կատարվում էր հենց ընտրության օրը: Ընտրակաշառք էր բաժանվում երկաթգծի կայարանում ու թիվ 1 դպրոցում գտնվող տեղամասերի մոտ, ինչպես նաև 34-րդ տեղամասում: Ընտրության օրը մոտ հարյուր հոգի մարդ էր հավաքված 16-րդ փոստատան մոտ և միայն գումարը բաժանելուց հետո (5000-10000 ՀՀ դրամի սահմաններում՝ ըստ պնդումների) նրանց թույլատրվեց ներս մտնել ու քվեարկել (Տես՝ HCA&UFSD, 2008):

C. Ընտրողների ահաբեկում և ընտրակեղծիքի այլ տեսակներ

Նախընտրական քարոզարշավը Երևանում նույնպես խնդրահարույց էր։ Հանրապետական կուսակցության սպիտակ դրոշները՝ «Առաջ Հայաստան» կարգախոսով հայտնվում էին բոլոր ավտոմեքենաների վրա ու քաղաքի բոլոր թաղամասերում։ Այս խորհրդանիշը կրող մեքենաների մեծ մասը սև գույնի ամենագնաց սպորտային մեքենաներ էին։ Դրոշը կրում էին նաև մասնավոր երթուղային տաքսիներն ու տաքսի ծառայությունների մեքենաները։ Այս մեքենաների որոշ վարորդներ պարզաբանում էին, որ իրենց խստորեն հրահանգ են տվել դրոշները չհանել։

Լարված էր նաև մթնոլորտը տեղամասերում։ Արման Մելիքյանի ընտրական շտաբից հաղորդել էին Ազատություն ռադիոկայանին որ Մելիքյանի վստահված անձը ծեծի է ենթարկվել մի խումբ անձանց կողմից, երբ նա Երևանի Մալաթիա-Սեբաստիա թաղամասի տեղամասերից մեկում բացահայտել է ձայների գնման մեխանիզմը։ Վստահված անձը ծանր մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց[13]։ Մալաթիա-Սեբաստիայի մեկ այլ տեղամասում Արթուր Բաղդասարյանի «Օրինաց երկիր» կուսակցությունը ներկայացնող տեղամասային հանձնաժողովի անդամն Ազատություն ռադիոկայանին տրված հարցազրույցում հայտնել է. «շատ մարդիկ կան, ովքեր տեղամասում գտնվելու իրավունք չունեն։ Նրանք կանգնում են քվեատուփերի մոտ ու մարդկանց ասում, թե ում օգտին քվեարկեն»։

Կապանում ArmeniaNow-ի թղթակիցը 38/02 և 38/05 տեղամասերում տեսել է համազգեստով ոստիկանների, չնայած ոստիկանությունը տեղամասի տարածքում գտնվելու իրավունք ունի միայն այն դեպքում, եթե ընտրական հանձնաժողովի նախագահը նրանց օգնությանն է դիմում։ Կոտայքի մարզում, որը ԱԺ պատգամավոր, օլիգարխ, իր տաքարյունությամբ հայտնի Գագիկ Ծառուկյանի ծննդավայրն է, Տեր-Պետրոսյանի վստահված անձինք ոստիկանությանը հայտնել են, որ Ծառուկյանի թիկնապահերը ծեծել են իրենց։ Աբովյանում, մի կին վստահված անձի հարվածել էին դեմքին, ստիպողաբար նստեցրել մեքենան, որ ըստ պնդումների վարում էին Ծառուկյանի մարդիկ, ապա բռնաբարելու սպառնալիքներից հետո քաղաքից դուրս տանող ճանապարհին իջեցրել են նրան։

Սերժ Սարգսյանի ընտրական շտաբից հաղորդում է եղել, որ Լոռու մարզի 31/69 տեղամասում Տեր-Պետրոսյանի վստահված անձ Սարգիս Թամազյանը սպառնացել է հանձնաժողովի անդամներին։ Ըստ պնդումների նա ասել է. «եթե ինչ որ մեկը խանգարի իրեն անել այ ինչ ինքն է ուզում, ապա դրա վերջը վատ կլինի»։ Դեբեդի ընտրատեղամասում ընտրողներին ասել են, թե քվեախցերի տարածքը տեսագրվում է, ու իշխանությունները կիմանան, թե ով է ձայնը տվել Սարգսյանին, ով չի տվել։

Երևանի ընտրատեղամասերից մեկում Վազգեն Մանուկյանի վստահված անձանց կողմից հաղորդում է եղել, որ հավաքված մարդկանց գլխավերևով անձնագրեր են փոխանցվել, քվեաթերթիկներում նշում է կատարվել ու ապա անձնագրերը վերադարձվել են։ Կապանի մի

[13] "Armenian Opposition Cries Foul Amid Reports of Violence, Fraud," *RFE/RL*, February 19, 2008.

շարք տեղամասերում ականատեսների հաղորդմամբ զինվորականները ավտոբուսներով տեղամասից տեղամաս են անցել ու բազմիցս քվեարկել՝ վերադասների հսկողության ներքո։

Երևանում Ազատություն ռադիոկայանի թղթակիցը տեսել է, որ Սերժ Սարգսյանի տեղական շտաբներից մեկի մոտ մի քանի տասնյակ մարդ, հիմնականում ոչ երևանցիներ, ստացել են ոստիկանական վկայականներ[14]։ Այս փաստաթուղթը ներկայացնելու դեպքում թույլատրվում քվեարկել առանց անձնագրի։ Ականատեսը պնդում է , որ «Սարգսյանի շտաբի մարդկանց կողմից տեղամասերն իմանալուց հետո նրանք նստեցին ավտոբուսներ, թվով՝ երեքը։ *RFE/RL*-ի թղթակցի հետ խոսելիս այդ մարդկանցից ոմանք ընդունել են, որ այդ օրն ավելի վաղ իրենք արդեն քվեարկել են»։

Երեք տղամարդ մուտք են գործել Սյունիքի մարզի տեղամասերից մեկն ու ասել, որ էլեկտրական լամպն են փոխելու։ Երբ մեկը կանգնած էր քվեատուփի վրա դրված սեղանին, մյուս 2-ը քվեատուփը լցոնում էին արդեն նշված քվեաթերթիկներով։ Վանաձորի 35-րդ տեղամասում լրագրողը նկատել է, որ մարդկանց ասել են «բաց» քվեարկել, ինչը նշանակում է, որ Հանրապետական կուսակցություն ներկայացուցիչը տեսնելու է նրանց ընտրությունը։

D. Միջազգային հանրության արձագանքը

Թեպետ Հայաստանի ընտրություններին միջազգային ԶԼՄ-ների ու դիվանագիտական շրջանակների կողմից այնքան մեծ ուշադրություն չդարձվեց ինչպես տարածաշրջանի մյուս ընտրություններին (օր. ՝ Վրաստան 2003թ., 2007թ., Ուկրաինա 2004թ., ՌԴ, 2008թ.), սակայն շատ հարցեր բարձրացվեցին։ 2008թ. մայիսին Հայաստանի նախագահական ընտրություններին ու հարակից քաղաքական զարգացումներին անդրադարձ կատարվեց մի շարք կառավարությունների (օր.՝ ԱՄՆ պետքարտուղարություն), միջկառավարական կազմակերպությունների (օր.՝ ԵԱՀԿ) և ՀԿ-ների (օր.՝ Amnesty International) զեկույցներում։ Ըստ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ վերջնական զեկույցի (Տես՝ ԵԱՀԿ, 2008c).

> «Թեև 2008 թվականի նախագահական ընտրությունները հիմնականում համապատասխանել են ԵԱՀԿ պարտավորություններին և միջազգային չափանիշներին նախընտրական շրջանում և քվեարկության ժամերին՝ որոշ պարտավորությունների նկատմամբ ի հայտ եկան լուրջ մարտահրավերներ՝ հատկապես ընտրությունների օրվանից հետո։ Սա ժողովրդավարական ընտրությունների համար էական չափանիշների նկատմամբ ցուցաբերեց անբավարար հարգանք, և արժեզրկեց ամբողջ ընտրական գործընթացը։ Մասնավորապես, քվեների հաշվարկում ի հայտ եկան հաշվետվության և թափանցիկության թերություններ, իսկ բողոքների և բողոքարկման ընթացակարգերը լիովին արդյունավետ չէին»։

[14] Նույն տեղում.

Ի տարբերություն նախնական զեկույցի այստեղ ԵԱՀԿ-ն շատ ավելի քննադատական գնահատական է տալիս ընտրական գործընթացների վերաբերյալ ու տպավորություն է ստեղծվում, որ ԵԱՀԿ իրավիճակի փութկոտ գնահատական է տվել (ԱՄՆ հելսինկյան հանձնաժողով, 2008; Միջազգային ճգնաժամային խումբ, 2008; Մարդու իրավունքների պաշտպան, 2008b):

ԱՄՆ պետքարտուղարության (2008թ.) զեկույցում փետրվարյան ընտրությունները նկարագրվում են որպես «նշանակալի թերություններով ընթացած» ընտրություններ, որտեղ տեղ են գտել հետևյալ խնդիրները.

> «…իշխանական թեկնածուի հանդեպ բարեհաճ վերաբերմունք, քվեատուփերի լցոնման դեպքեր, ձայների գնում, բազմակի քվեարկություն, ընտրողների ահաբեկում, բռնություն հանձնաժողովներում ընդդիմությունը ներկայացնող անդամների ու վստահված անձանց հանդեպ և մասնակցության կասկածելիորեն բարձր ցուցանիշներ»:

Զեկույցը մարդու իրավունքների ոլորտում Հայաստանի գործունեությունը գնահատում է «ոչ բավարար» և առանձնացնում է «ընդդիմադիր մամուլի վրա ճնշումների, շարունակվող ձերբակալությունների ու կառավարությանն ընդդիմացողների ահաբեկման» խնդիրները, որոնք պահպանվում են անգամ մարտի 20-ից հետո, երբ վերացվեց արտակարգ դրությունը: Ընդդիմությունը ողջունեց ընտրությունների այս վերագնահատումը, սակայն նաև նշեց, որ ավելի քննադատական նախնական գնահատականը միջազգային դիտորդների կողմից թույլ կտար կանխել որոշ բռնություններ (Տես՝ Armenia Liberty, 2008a):

E. Եզրահանգում

Մարտին տրված հարցազրույցում ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար Ջոզեֆ Փենինգթոնը նշեց, որ փետրվարի 19-ից հետո ձայների վերահաշվարկի ժամանակ ինքը կասկածելի պահվածքի ականատես է եղել: Երբ հարցրեցին. «Եթե ԱՄՆ բարձրագույն ներկայացուցիչը Հայաստանում տեսնում է ընտրական չարաշահում ու չի կարող դա կասեցնել, ապա անհայտ մի վստահված անձ իր ձայնը բարձրաձայնելու ի՞նչ հնարավորություն կունենա», Փենինգթոնը պատասխանեց. «Չնչին»:

IV. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սույն վերլուծությունը հիմնված է Հայաստանում 2008թ.-ի փետրվարի 19-ին տեղի ունեցած նախագահական ընտրությունների վերաբերյալ ՀՀ Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի տրամադրած տվյալների վրա: Այստեղ ներկայացված են վերջանական արդյունքները: Տվյալները չեն պարունակում ԵԱՀԿ երկրորդ միջանկյալ մոնիթորինգային հաշվետվության (Տես՝ OSCE, 2008b) մեջ նշված անճշտություններից և ոչ մեկը, և, միգուցե, կարող էին նախքան հրապարակելը վերահաշվարկվել կամ կեղծվել: Այստեղ նպատակ ենք ունեցել հետազոտել տվյալների վիճակագրական հատկությունները և վերհանել անճշտություններն ու անհամապատասխանությունները/անոմալիաները, եթե այդպիսիք կան: Սակայն սկզբում պետք է շեշտենք, որ կան ընտրակեղծիքների այնպիսի տեսակներ, որոնք կարող են և չստեղծել վիճակագրական անոմալիաներ և, հետևաբար, կարող էին և չհայտնաբերվել այնպիսի վիճակագրական վերլուծության արդյունքում, ինչպիսին սույն վերլուծությունն է: Նման կեղծիքների օրինակներ կարող են հանդիսանալ համատարած ընտրակաշառքները՝ ընտրողների ձայները գնելու նպատակով կամ բռնի ուժի գործադրումը՝ ձայներ ձեռք բերելու նպատակով:[15]

Սակայն այստեղ ուշադրությունը սևեռված է այլ ուղղությամբ՝ կեղծիքների այն ցուցանիշների վրա, որոնք կարող են հայտնաբերվել վիճակագրական վերլուծությունների միջոցով. լցոնումները և ձայնագողությունը (այսինքն, թեկնածուի օգտին ստացված ձայների քանակի արհեստական բարձրացումը): Սույն վերլուծությունում կիրառված մեթոդոլոգիան ի սկզբանե մշակվել է Սոբիանինի և Սուխովոլսկու (1993) և Սոբիանինի, Գելմանի, ու Կայունովի (1994) կողմից, և կիրառվել է 1993թ.-ին Ռուսաստանում սահմանադրական ռեֆերենդումի ժամանակ և հետագայում զարգացվել է մի շարք տպագրված ակադեմիական նյութերում, որոնց հեղինակներն են՝ Միխայիլ Մյագկովը (Օրեգոնի համալսարան), Փիթեր Օրդեշուկը (Կալիֆորնիայի տեխնոլոգիական համալսարան) և այլ համահեղինակներ: Այս վերլուծության ընթացքում մենք հիմնվել ենք էմպիրիկ գրականության մեջ առանձնացված 4 ցուցանիշների վրա՝ որպես ընտրակեղծիքների գնահատման պոտենցիալ ինդիկատորներ/ցուցանիշներ. 1. ընտրողների մասնակցության բաշխումը, 2.առանձին թեկնածուների ստացած ձայների բաշխումը, 3.թեկնածուների ստացած ձայների և ընտրողների մասնակցության ցուցանիշների կախվածությունը, 4.անվավեր քվեաթերթիկների բաշխումը: Ստորև ներկայացված բաժինները մանրամասնորեն նկարագրում են այս ցուցանիշները և դրանց միջև կապը:

A. Ընտրողների մասնակցության բաշխում

Մեծամասամբ ընտրությունների ժամանակ ակնկալվում է, որ ընտրողների մասնակցությունը (ինչպես նաև յուրաքանչյուր թեկնածուի օգտին քվեների մասնաբաժինը)

[15] Դիտարկումները հաստատում են որ ընտրակեղծիքների երկու տեսակներն էլ բավականին ծավալուն են եղել 2008թ.-ի փետրվարյան ընտրություններում: Տես, օրինակ, ICR (2008) կամ սույն հաշվետվության մաս III-ը:

բաշխված կլինեն նորմալ (Գաուսյան) բաշխմամբ:[16] Այս դեպքում գրաֆիկը, որը կներկայացնի ըստ ընտրատեղամասերի մասնակցության ցուցանիշները կամ կոնկրետ թեկնածուին տրված ձայների բաշխվածքը «զանգաձև» նորմալ կոր կլինի, որի գագաթում կներկայացվեն բաշխման միջինը, մեդիանան և մոդան:[17] Մյագկովը, Օրդեշուկը և Շակինը (2005) ստացել են նորմալին մոտ բաշխում Ռուսաստանի 1996թ.-ի նախագահական ընտրությունների երկու փուլերին ոչ հանրապետական տարածաշրջանների համար, 2000թ.-ի նախագահական ընտրությունների, ինչպես նաև 1999թ-ի և 2003թ-ի Դումայի ընտրությունների ժամանակ: Ըստ նույն հեղինակների, Ուկրաինայում 1999թ-ի նախագահական ընտրությունների և 2004թ-ի նախագահական ընտրությունների առաջին փուլի արդյունքները ևս բաշխված են նորմալ բաշխմամբ:

Գծապատկեր 1-ի վերին հատվածը ներկայացնում է ընտրատեղամասերի բաշխումը որպես ֆունկցիա մասնակցության ցուցանիշից: Չնայած կորը բավականին նման է նորմալ բաշխման կորին, սակայն աջ եզրը բավականին հաստ է և ցույց է տալիս բարձր մասնակցության մակարդակ գրանցած ընտրատեղամասերի անհամամասնորեն մեծ թիվ: Այսպես՝ 1923 ընտրատեղամասերից 129-ը գրանցել են 90 և ավելի տոկոսի մասնակցության ցուցանիշ, այդ թվում՝ դրանցից 6-ը գրանցել են 100 տոկոս մասնակցություն: Կորի վրայի այս կտրուկ ելուստը - սպասված նորմալ բաշխման գերազանցումն այդ հատվածում – մեծապես նման է Ռուսաստանում 1996թ-ի և 2000թ-ի նախագահական ընտրությունների արդյունքներին և 1995, 1999 և 2003թ-ի Դումայի ընտրությունների արդյունքներին, և Ուկրաինայի 2004թ-ի նախագահական ընտրությունների արդյունքներին, որոնք բոլորն էլ համարվել են մեծ չափով անճշտություններ/անկանոն արդյունքների զգալի տոկոս ունեցող (Տես՝ Մյագկով և այլոք, 2005): Նշենք, որ բաշխման այս տիպի մոդիֆիկացիան/գերաճը չի համապատասխանում բոլոր ընտրատեղամասերի գծով ավելի բարձր մասնակցությանը (օրինակ, ամբողջ երկրում ավելի բարձր քաղաքական ակտիվություն ունենալու դեպքում ամբողջ նորմալ կորը կտեղափոխվի դեպի աջ), այլ համապատասխանում է կամ արտացոլում այն իրավիճակը, երբ ընտրատեղամասերի միայն մի խմբում է նկատվում գերակտիվություն:[18]

Առանցքային հետաքրքրության առարկա է ողջ երկրում միջին մասնակցության բավականին բարձր մակարդակը (մոտ 71 տոկոս): Դիտարկումները հաստատում են քաղաքական ակտիվության բարձր մակարդակը, որը հավանաբար, արդյունք է սովորականից ավելի

---

[16] Այսուհետ, մասնակցությունը (T), կսահմանվի որպես ընտրելու իրավունք ունեցող և տվյալ ընտրատեղամասում գրանցված մարկանց թվի (E) մեջ նույն ընտրատեղամասում քվեարկելու ներկայացած մարդկանց (S) մասնաբաժին:

[17] Ավելի ֆորմալ՝ ցանկացած մեծ թվով փոփոխականների համար բաշխման նորմալությունը բխում է Լյապունովի կենտրոնական սահմանային թեորեմից: Ըստ վերջինի,եթե մեզ հետաքրքրող պատահական փոփոխականները անկախ են ապա նրանց գումարը/միջինը նորմալ է բաշխված:

[18] Հնարավոր է, որ որոշ ընտրատեղամասերում մասնակցության աստիճանը մյուսներից տարբերվի՝ մշակութային, դեմոգրաֆիկ կամ մասնագիտական պատճառներով: Հայաստանյան իրականությունում, սակայն, դժվար է հայտնաբերել և սահմանել այն գործոնները, որոնց շնորհիվ հնարավոր կլիներ բացատրել Գծապատկեր 1-ում արտացոլված կորի ակնհայտ լայն եզրը:

ակտիվ նախընտրական սեզոնի, որի ընթացքում հանդես եկան իրական քաղաքական այլընտրանքներ ի հակակշիռ նախկինում բարոյազրկված քաղաքական ընդդիմությանը (տես սույն հաշվետվության Մաս I-ը): Սակայն այլ զարգացումները ստվեր են նետում մասնակցության ցուցանիշի այս աստիճան բարձր մակարդակի վրա: 2007թ-ի փետրվարի Ընտրական օրենսգրքի փոփոխությունների ընթացքում օրենսդիրը չեղյալ համարեց արտերկրում ապրող ՀՀ քաղաքացիների հայկական դեսպանատներում քվեարկելու իրավունքը: Նախագահի թեկնածու Արման Մելիքյանը բողոքարկեց այս փոփոխությունը Սահմանադրական դատարանում մինչ 2008թ-ի ընտրությունները՝ շեշտելով, որ սույնով ընտրազանգվածից դուրս են մնում զգալի թվով ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիներ:[19] Այլ քննադատներ նշել են, որ այս օրենսդրական փոփոխության արդյունքում ընտրելու և ընտրվելու անկարողությունը մարդկային իրավունքների լուրջ ոտնահարում է:[20] Ընտրություններից հետո փորձ արվեց գնահատել մասնակցության իրական մակարդակը, հաշվի առնելով ընտրական սահմանափակումների պատճառով բոլոր «բացակա» մարդկանց (Տես՝ ԱՄՆ Հելսինկյան Կոմիտե, 2008):[21]

Գծապատկեր 1-ի ստորին հատվածը արտացոլում է ընտրատեղամասերում մասնակցության բաշխվածությունը Երևանում և Երևանից դուրս: Բացառությամբ մասնակցության բարձր աստիճան ունեցող փոքր թվով ընտրատեղամասերի (Երևանին համապատասխանող բաշխման կորի աջից բավականին բարակ եզրը), Երևանում մասնակցության բաշխումը նորմալ բաշխմանը այնքան մոտ տեսք ունի, որքան որ երբևիցե կարելի է ստանալ՝ ունենալով էմպիրիկ/փորձնական տվյալներ: Այն նաև արտացոլում է ըստ ընտրատեղամասերի մասնակցության մակարդակի բավականին փոքր ցրվածություն (այսինքն, ամբողջ կորը նույնպես հարաբերականորեն սեղմված տեսք ունի): Ի հակադրություն վերջինիս, Երևանից դուրս գտնվող ընտրատեղամասերի բաշխումը ավելի մեծ ցրվածություն ունի և աջից ավելի հաստ եզր: Այս բաշխումը ցույց է տալիս, որ գերբարձր մասնակցությամբ/ակտիվությամբ ընտրատեղամասերի մեծ մասը Երևանից դուրս են գտնվում, որը հուշում է մարզերում ավելի մեծ չափերի հասնող կեղծիքների մասին:

Չնայած մասնակցության միջին ցուցանիշները մարզերի և Երևանի համար գրեթե նույնն են (0.705 Երևանում և 0.712 Երևանից դուրս), սակայն մարզերում ավելի քան կրկնակի անգամ մեծ է այն ընտրատեղամասերի թիվը (15.2 տոկոս Երևանում և 32.5 տոկոս Երևանից դուրս), որոնք գրանցել են չափազանց բարձր մասնակցություն (ավելի քան 80 տոկոս): Բավականին

---

[19] "Արման Մելիքյանը պատրաստ է քննարկումների Երեք Քաղաքական Ուժերի հետ," A1+, Փետրվար 5, 2008թ.

[20] Տես՝ http://macbeck.livejournal.com/18852.html.

[21] Մելիքյանը պնդում էր (մեջբերելով միգրացիոն գործակալության տվյալները, ըստ որի ՀՀ քաղաքացիություն ունեցող ավելի քան 500,000 միգրանտներ աշխատում/ապրում են արտերկրում), որ ունենալով պաշտոնապես հայտարարված ընտրողների թիվը և հաշվի առնելով ֆիզիկապես Հայաստանում գտնվողների և, այդպիսով, ընտրելու հնարավորություն ունեցողների թիվը, կստանայինք 90 տոկոսի կարգի մասնակցություն:

Գծապատկեր 1. Ընտրողների մասնակցության բաշխումը



X առանցք՝ մասնակցությունը,
Y առանցք՝ ընտրատեղամասերի թիվը

դժվար է վստահելի համարել այս արդյունքները՝ ունենալով քաղաքացիների ակտիվության/մասնակցության պատկերը գյուղական վայրերում (ինչպես նաև մայրաքաղաքից դուրս գտնվող քաղաքային վայրերում) և դրանք համեմատելով մայրաքաղաքի համապատասխան ցուցանիշներին:[22]

Գրեթե հավասար միջինները, և գերակտիվ մասնկացությունը Երևանից դուրս գտնվող գրեթե ամեն երրորդ ընտրատեղամասում (համեմատած Երևանի ընտրատեղամասերի հետ) նաև չեն համապատասխանում Ազգային Վիճակագրական Ծառայության (ԱՎԾ) կողմից տրամադրված տնային տնտեսությունների հարցման արդյունքներին: Ինչպես ներկայացված է Գրիգորյան և Մելքոնյան (2008)-ում, հիմնվելով 2004թ-ին իրականացված Տնային Տնտեսությունների Կենսամակարդակի Ամբողջացված Հետազոտություն հարցման արդյունքների վրա, կարելի է տեսնել, որ Երևանից դուրս բնակվող տնային տնտեսությունները ավելի հակված են ընտանիքի անդամ-միգրանտ ունենալու, քան Երևանի տնային տնտեսությունները: Միակ տարբերակը, որի դեպքում հնարավոր կլիներ տրամաբանական բացատրություն գտնել մասնակցության վերը նշված պատկերը հիմնավորելու համար և որի դեպքում ԱՎԾ հարցման արդյունքները համահունչ կլինեին մասնակցության այդ պատկերին, այն է, եթե ինչ-ինչ պատճառներով գյուղական վայրերի միգրանտները որոշեին ետ վերադառնալ Հայաստան՝ հատուկ փետրվարի 19-ի ընտրություններին մասնակցելու նպատակով և ավելի ակտիվ կերպով քվեարկեին, քան Երևանի ընտրազանգվածը: Այս ամենն, իհարկե, լրջորեն կասկածելի է: Սակայն, եթե նպատակն իսկզբանե այն էր, որպեսզի գյուղական վայրերը օգտագործվեին ընտրությունների կանխորոշված արդյունքները ապահովելու համար, ապա ինչպես Օրդեշուկը և Մյագկովն (2008) են գրել. «չկա դա անելու ավելի հարմար ձև, քան վերադարձը խորհրդային շրջանի ընտրական ոճին, որտեղ մարզային էլիտային թույլ է տրվում վարվել ինչպես նախկինում, ԵԱՀԿ դիտորդները ակնհայտորեն զրկվում են հասանելիությունից և պաշտոնյաները կեղծիքով ու ողջույններով ուղղորդվում են հաստատելու, որ…ընտրությունները նույնքան ազատ և թափանցիկ էին, որքան այլուր…»:

Հետայսու ներկայացված բաժինները փորձում են պատասխանել հետևյալ հարցադրմանը. արդյոք ո՞ր թեկնածուին է հաջողվել օգտվել հավելյալ քվեներից (կամ գերմասնակցությունից/գերակտիվությունից) և ինչպես է մասնակցության այս բարձր մակարդակը ձևավորվել:

B. Առանձին թեկնածուների ստացած քվեների վիճակագրական բաշխումը

Ինչպես նշվել էր վերևում, յուրաքանչյուր թեկնածուի օգտին ստացված ձայները պետք է մոտավորապես նորմալ բաշխված լինեն: Գծապատկեր 2-ում ներկայացված են առաջին 4 տեղերը զբաղեցրած թեկնածուների՝ Սերժ Սարգսյանի (այսուհետ՝ ՍՍ), Լևոն Տեր-

[22] Նույնիսկ եթե Երևանից դուրս գտնվող ընտրատեղամասերի հարաբերականորեն փոքր չափը կապ ունենար այս պատկերի հետ, առկա տարբերությունը (63 տոկոս. միջինում 1094 գրանցվածներ Երևանից դուրս և միջինում 1739 գրանցվածներ Երևանյան ընտրատեղամասերում) դժվար թե թույլ տար բացատրել մասնակցության կրկնակի տարբերությունը:

Պետրոսյանի (ԼՏՊ), Արթուր Բաղդասարյանի (ԱԲ), և Վահան Հովհաննիսյանի (ՎՀ) օգտին ձայների բաշխումները: Հետաքրքիր է, որ ԱԲ և ՎՀ ստացած ձայները, չնայած լիովին նորմալ բաշխված չլինելուն, այնուամենայնիվ, փոքր անճշտություններով, բայց նորմալին նման են բաշխված: Ի հակադրություն՝ ՍՍ և ԼՏՊ օգտին ձայների բաշխումները նորմալից խիստ հեռու են: ՍՍ-ի դեպքում գրաֆիկը նորմալ տեսք ունի միայն մինչև առաջին 45 տոկոսը բաշխման կորի աճման հատվածում և դեպի 50 տոկոսի նշագիծը նվազելու հատվածում: [23] Բաշխման կորի մնացած հատվածներում պատկերը հետևյալն է. 55 և 75տոկոսներին համապատասխանող մեծ թռիչքներ և ավելի փոքր թռիչքներ 95 և 100 տոկոսների դեպքում, ինչը ցույց է տալիս, որ ավելի մեծ է այն ընտրատեղամասերի թիվը, որոնք ներկայացրել են նորմալ բաշխումից շեղված արդյունքներ:

Կլոր թվերի վրա նկատվող թռիչքները կարող են արտացոլել գերադասի օգտին մասնակցության որոշակի տոկոս գրանցելու «ադմինիստրատիվ պահանջից» դրդված մեքենայություններ: Այս կորից ներքև և համապատասխան հիպոթետիկ նորմալ կորից վերև գտնվող մակերեսը 50 տոկոսից բարձր մասնակցության դեպքում կներկայացնի այն ընտրատարատեղամասերի թիվը, որոնցում ՍՍ-ի մասնաբաժինը ավելի մեծ է, քան կանխատեսվում է ընտրակեղծիքների բացակայությամբ ընտրությունների դեպքում, և, հետևաբար, կարտացոլի նաև մեքենայությունների չափը, որ իրականացվել են տվյալ թեկնածուի օգտին: Ելնելով կորի տեսքից՝ սա բավականին ծավալուն մակերես է (համեմատած հիպոթետիկ նորմալ կորի մակերեսի հետ) և ցույց է տալիս մեծ ծավալի անճշտություններ:

ԼՏՊ-ի դեպքում ձայների բաշխման կորը նման է նորմալ կորի միայն 30 տոկոս մասնակցությունից հետո: Այդ կետից դեպի ձախ գտնվող կորի հատվածն արտացոլում է ընտրատեղամասերի անհամամասնորեն մեծ թիվ, որոնք ԼՏՊ-ի համար քվեների ցածր մակարդակ են ամփոփել, համեմատած նորմալ կորի հետ: Այսպիսով, այս կորից դեպի ներքև, իսկ համապատասխան հիպոթետիկ նորմալ կորից վերև գտնվող մակերեսը, մասնակցության 30 տոկոսից ավելի փոքր արժեքների համար, ցույց կտա այն ընտրատեղամասերի թիվը, որոնցում ԼՏՊ մասնաբաժինը ավելի փոքր է, քան ընտրակեղծիքների բացակայության պարագայում է կանխատեսվում: Այս բաշխման մեկ այլ առանձնահատկություն է այն, որ մեծ թվով ընտրատեղամասերում (45), ԼՏՊ-ի համար 0 ձայն է գրանցվել, իտարբերություն այն փաստի, որ ՍՍ դեպքում 0 ձայն գրանցող ընտրատեղամասեր չկան ընդհանրապես:

Չնայած որ անկանոն/անօրինաչափ քվեարկության արդյունքներ ամփոփած ընտրատեղամասերի ճշգրիտ թվի հաշվարկումը բարդ է (կապված այս կորերից ներքև և յուրաքանչյուրին համապատասխանող նորմալ կորից վերև մակերեսների ինտեգրալների ճշգրիտ չափման հետ), մենք այս կորերի տեսքերի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ

[23] Հետաքրքիր է, որ Երևանի 13 ընտրատարածքներում, որոնցում ընտրակեղծիքների չափը ավելի պակաս է համարվում, ՍՍ-ը ստացել է ձայների միջինում 45 տոկոսը:

Գծապատկեր 2.Չորս առաջատար թեկնածուների ստացած ձայների բաշխումը (հաճախությունները)



X առանցք՝ թեկնածուների օգտին ձայների մասնաբաժինը,
Y առանցք՝ ընտրատեղամասերի թիվը.

անճշտությունները անկասկած տեղի են ունեցել և զգալի են եղել: Այս կորերի մոդիֆիկացիայի բնույթը հուշում է, որ ՍՍ օգտին ստացված ձայների քանակը արհեստականորեն գերագնահատվել է, իսկ ԼՏՊ օգտին ստացվածները՝ ահեստականորեն թերագնահատվել: Հաջորդ ենթագլուխը ավելի մանրամասնորեն է ուսումնասիրում այս շեղումները:

C. Թեկնածուների օգտին ստացված քվեների և ընտրողների մասնակցության կապը

Մեկ այլ տեստ է առաջարկվել Սոբիանինի և Սուխովոլսկու կողմից, ըստ որի ուսումնասիրվում են յուրաքանչյուր թեկնածուի ստացած ձայների մասնաբաժնի և ընտրողների մասնակցության ցուցանիշի միջև կապը: Հեղինակները պնդում են, որ եթե դիտարկենք ռեգրեսիա որպես կախյալ փոփոխական դիտարկելով թեկնածուի ստացած քվեների մասնաբաժինը ընտրելու իրավունք ունեցողների մեջ և որպես բացատրող փոփոխական՝ ընտրողների մասնակցության ցուցանիշը, ապա դասական Փոքրագույն քառակուսիների եղանակով (ՓՔԵ) ստացված անկյունային գործակցի գնահատված արժեքը պետք է 1-ից փոքր դրական թիվ լինի և մոտ լինի ողջ երկրում տվյալ թեկնածուի հավաքած ձայների մասնաբաժնին:[24] Եթե գնահատված անկյունային գործակցի արժեքը շատ ավելի մեծ է, քան թեկնածուի օգտին ստացված ձայների մասնաբաժինը, ապա դա կնշանակի, որ. (1) տվյալ թեկնածուի օգտին լցոնումներ են տեղի ունեցել, և/կամ (2) նորմալ մասնակցության մակարդակից շատ ավելի մեծ թվով մարդիկ են մոբիլիզացվել և ավելի մեծ մակարդակի մասնակցություն է ապահովվել, ինչի արդյունքում տվյալ թեկնածուն մյուսների համեմատ անհամամասնական աջակցություն է ստացել: Եթե այդ գործակիցը գնահատման արդյունքում 1-ից մեծ լինի, ապա դա կնշանակի, որ տվյալ թեկնածուն ոչ միայն օգտվել է արհեստականորեն ավելացված, այլ նաև այլ թեկնածուներից կորզած քվեներից:

Աղյուսակ 1-ում ներկայացված են յուրաքանչյուր թեկնածուի համար կատարված ռեգրեսիաների ՓՔԵ գնահատման արդյունքները, որտեղ նախագահի բոլոր 9 թեկնածուներից յուրաքանչյուրի համար դիտարկվել է թեկնածուի օգտին ստացված ձայների մասնաբաժնի կախվածությունը ընտրողների մասնակցության ցուցանիշից և հաստատուն անդամից: Արդյունքները բավականին հետաքրքրաշարժ են: Վերհանված միակ կապը, որը համապատասխանում է վերը նշված տեսական կապին, ապահովվել է Վահան Հովհաննիսյանի համար ռեգրեսիայի գնահատման արդյունքներով: Գնահատված գծային

---

[24] j -րդ թեկնածուի և i -րդ ընտրատեղամասի համար նկարագրված ռեգրեսիան կարող է ներկայացվել հետևյալ կերպ. (ներկայացման պարզության համար հաստատուն գործակիցը նշված չի).
$V_{ij} / E_i = \beta_j \cdot T_i + \varepsilon_{ij} = \beta_j \cdot S_i / E_i + \varepsilon_{ij}$, որտեղ, ինչպես սահմանված է 16րդ հղման մեջ, V տվյալ թեկնածուի ստացած ձայների թիվն է, T-ն ընտրողների մասնակցությունը (սահմանվում է որպես S բաժանած E-ի), S-ը ընտրելու իրավունք ունեցողների թիվը, որոնք ներկայացել են ընտրատեղամաս քվեարկելու, իսկ E-ն ընտրելու իրավունք ունեցողների ընդհանուր թիվն է: ε -ը ռեգրեսիայի սխալն է: Կարելի է ցույց տալ, որ հետևյալ գնահատականի $\hat{\beta}_j = \sum_i V_{ij} / \sum_i S_i$ (j -րդ թեկնածուի հավաքած ձայների մասնաբաժինն է բոլոր ընտրատեղամասերում) մաթեմատիկական սպասումը հավասար է ՓՔԵ գնահատականի մաթեմատիկական սպասմանը ($E(\hat{\beta}_{jOLS}) = \beta_j$)՝ գումարած փոքր շեղում:

կախվածության հաստատուն անդամը հավասար է 0-ի, իսկ անկյունային գործակիցը խիստ մոտ է ընտրությունների ժամանակ թեկնածուի ստացած քվեների մասնաբաժնին՝ 6.2 տոկոս: Սա ցույց է տալիս, որ թեկնածուի օգտին, և ոչ էլ նրա դեմ մեծածավալ կեղծիքներ չեն կատարվել՝ լցոնումների կամ անօրինականորեն քվեներ պակասեցնելու տեսքով:

Աղյուսակ 1. Ռեգրեսիայի արդյունքներ

	Հաստատուն անդամ	Անկյունային գործակից	
		գնահատական	t-վիճակագիր
Արթուր Բաղդասարյան	0.218	**-0.158**	-12.69
Արտաշես Գեղամյան	0.006	**-0.005**	-7.11
Տիգրան Կարապետյան	0.008	**-0.006**	-6.04
Արամ Հարությունյան	0.002	**-0.001**	-3.39
Վահան Հովհաննիսյան	0.000	**0.067**	7.35
Վազգեն Մանուկյան	0.017	**-0.014**	-7.02
Արման Մելիքյան	0.003	**-0.002**	-4.14
Սերժ Սարգսյան	-0.457	**1.204**	47.99
Լևոն Տեր-Պետրոսյան	0.191	**-0.085**	-4.71

Ծանոթագրում. Աղյուսակում ներկայացված են ռեգրեսիաների ՓՔԵ գնահատման արդյունքները (Vթեկնածուi/E) = Հաստատուն + Անկյունային գործակից*T + ε յուրաքանչյուր թեկնածուի համար: Դիտարկումների թիվը հավասար է՝ 1,923-ի: Բոլոր գործակիցների գնահատականները վիճակագրական վստահելիության բարձր մակարդակ ունեն:

Այնուհետև, մյուս ռեգրեսիաներից միակ դրական անկյունային գործակից ունեցողը Սերժ Սարգսյանի համար գնահատված ռեգրեսիան է, սակայն մեկ առանցքային տարբերությամբ՝ անկյունային գործակիցն այս դեպքում 1-ից մեծ արժեք ունի (1.204): Սա նշանակում է, որ (այլ հավասար պայմաններում, եթե անտեսենք ընտրատեղամասերի միջև տարբերությունները) ընտրատեղամասում յուրաքանչյուր 100-միավոր ձայների աճի դեպքում տվյալ թեկնածուն ստացել է մոտ 120 քվե:

Եվ վերջապես երրորդ դիտարկումը. մյուս բոլոր թեկնածուների համար անկյունային գործակիցները բացասական արժեք ունեն, ինչը նշանակում է, որ նրանց ոչ միայն չի հաջողվել պահպանել իրենց օգտին տրված ձայների բաժինը ընտրողների մասնակցության աճի արդյունքում (կամ ընթացքում), այլ նրանք փաստորեն նաև կորցրել են իրենց օգտին տրված քվեների մի մասը՝ մասնակցության աճին զուգընթաց: Բացասական գործակիցները բացարձակ արժեքով ամենամեծն են Արթուր Բաղդասարյանի և Լևոն Տեր-Պետրոսյանի դեպքում, ինչը ցույց է տալիս, որ այս երկու թեկնածուները մյուսների համեմատությամբ ամենաշատ քվեներն են կորցրել մասնակցության աճին զուգահեռ: Այս վերջին արդյունքը զարմանալի չէ, քանի որ նրանք մյուս թեկնածուների համեմատ ավելի մեծ թվով քվեներ են ստացել, հետևաբար նաև մասշտաբից կորուստն ավելի մեծ է եղել: Միակ թեկնածուն, որ շահել է այս կորուստներից, Սերժ Սարգսյանն է (ելնելով անկյունային գործակցի արժեքի

մեծությունից), և ստացվում է, որ և լցոնումները, և ձայների կորզումը օգուտ են բերել այս թեկնածուին:[25]

Գծապատկեր 3 ում ներկայացված են երկու առաջատար թեկնածուների ստացած ձայները ըստ ընտրատարածքների՝ կախված նույն ընտրատարածքներում ընտրողների մասնակցության աստիճանից (scatter plot): Գծային ռեգրեսիայի գրաֆիկը ցույց է տալիս երկու փոփոխականների միջև կապը:

Փորձ է կատարվել գնահատել, թե արդյոք Աղյուսակ 1-ում ներկայացված կապերը առաջին երկու տեղերն զբաղեցնող թեկնածուների համար նույն տեսքն ունեն նաև այն ընտրատեղամասերի ենթաբազմության համար, որոնցում մասնակցությունը ավելի հավատալի չափերի է հասնում: Աղյուսակ 2–ում ներկայացված են համապատասխան ռեգրեսիաների անկյունային գործակիցների գնահատականները, ընդ որում, ռեգրեսիաները կազմվել են ընտրատեղամասերի ենթաբազմությունների համար ըստ մասնակցության ցուցանիշների տարբեր արժեքների: 2-ից դեպի 6 սյունակներում աստիճանաբար դուրս ենք թողել այն ընտրատեղամասերը, որոնցում ընտրողների մասնակցության աստիճանը շատ բարձր է (գուցե անհավանականորեն բարձր) և կատարել ենք նույն ռեգրեսիոն անալիզը, ինչ Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 2. Ձայների և մասնակցության կապը՝ մասնակցության տարբեր մակարդակների համար

	Ամբողջական բազմություն	Ենթաբազմություններ՝ կրճատված ըստ մասնակցության մակարդակի՝ T-ի			
		< 0.9	< 0.8	< 0.75	< 0.70
Սերժ Սարգսյան	1.204*	1.105*	0.939*	0.703*	0.412*
Լևոն Տեր-Պետրոսյան	-0.085*	-0.003	0.141*	0.307*	0.496*
Ընտրատեղամասերի քանակը	1,923	1,794	1,585	1,370	1,027

Ծանոթացում. Աղյուսակում ներկայացված են ռեգրեսիաների ՓՔԵ գնահատման արդյունքները, ադ թվում՝ գործակիցների գնահատված արժեքները. (Vթեկնածուi/E) = Հաստատուն + Անկյունային գործակից *T + ε սա ռեգրեսիոն հավասարման տեսքն է՝ գնահատված վերը նշված երկու թեկնածուների համար: Բոլոր գործակիցների գնահատականները վիճակագրական վստահելիության բարձր մակարդակով են օժտված: * - ցույց է տալիս 1 տոկոս նշանակալիության կամ 99 տոկոս վստահելիության մակարդակ:

Արդյունքները խիստ հետաքրքիր են: Երբ աստիճանաբար դուրս ենք թողնում շատ բարձր մասնակցություն գրանցած ընտրատեղամասերը, կարող ենք տեսնել, որ անկյունային

[25] Ինչպես նշվեց վերևում, Վահան Հովհաննիսյանը միջինում պահպանել է իր քվեների “արդար” բաժինը:

գործակցի արժեքները (որը ինչպես արդեն նշել ենք, պետք է մոտ լինի թեկնածուի հավաքած ձայների մասնաբաժնին) Սերժ Սարգսյանի դեպքում էապես նվազում են հասնելով ավելի հավանական մակարդակ: Ի հակադրություն դրա՝ Լևոն Տեր-Պետրոսյանի համապատասխան ռեգրեսիայում անկյունային գործակիցն աստիճանաբար աճում է հասնելով ավելի տրամաբանական արժեքների: Հետաքրքրաշարժ է նաև այն փաստը, որ ավելի քան հազար ընտրատեղամասերում, որտեղ մասնակցության մակարդակը եղել է 70 տոկոսից ցածր, ԼՏՊ–ի անկյունային գործակիցն ավելի մեծ արժեք ունի, քան ՍՍ–ի գործակիցը:

Վերջապես, որպեսզի վերը նշված արդյունքների զտենք ընտրատարածքներին և ռեգիոններին բնորոշ ցանկացած հնարավոր առանձնահատկությունները ազդեցությունը (օրինակ, եթե հանկարծ որոշ ռեգիոններ ավանդաբար մի կոնկրետ թեկնածուի են պաշտպանել, որը կարող էր շեղել ընդհանուր տվյալների հիման վրա ստացված արդյունքները), մենք ռեգրեսիայում ընդգրկել ենք 40 բինար փոփոխականներ (41 հանած 1):

Այս մոտեցումը, սակայն, կրճատեց Սերժ Սարգսյանի համար ռեգրեսիայի անկյունային գործակիցը շատ փոքր չափով՝ 1.204-ից դարձնելով 1.097:[26] Տեր-Պետրոսյանի գործակցը փոքր-ինչ մեծացավ (-0.085-ից մինչև -0.056), այնուամենայնիվ թողնելով արդյունքները որակապես անփոփոխ:

Համատարած լցոնումների և ձայնագողության հնարավոր այլընտրանք է այս դեպքում այն, որ ընտրատեղամասերում, որտեղ մասնակցությունն ավելի բարձր էր և պատճառներն այլ էին, քան լցոնումները, (օրինակ զինվորների քվեարկություն, ձայների գնում կամ կաշառքներ, ստիպողական ուժի կիրառում, պարզապես ընտրողների ոգևորություն, կամ զանգվածին հետևելու մտածելակերպ), ընտրողները կարող էին ավելի հակված լինել քվեարկելու մեկ թեկնածուի օգտին (այս դեպքում Սերժ Սարգսյանի), բայց ոչ այլոց: Սակայն, այս գործոններից և ոչ մեկը լիովին չի բացատրի ռեգրեսիոն հավասարումների գործակիցների վարքագիծը, որը նկարագրված է Աղյուսակներ 1-ում և 2-ում:

D. Անվավեր քվեների բաշխումը

Վերջին և, հավանաբար, ամենահետաքրքիր է փորձնական տեստը, որն առաջարկվել է այս մեթոդոլոգիայի հեղինակների կողմից հիմնված է անվավեր քվեների մասնաբաժնի և մասնակցության ցուցանիշի միջև կապի ուսումնասիրության վրա: Տրամաբանորեն, այս երկու փոփոխականների միջև վիճակագրական կապ պետք է որ չլինի, քանի որ մասնակցության ավելի բարձր մակարդակը կբարձրացնի նաև անվավեր քվերների քանակը ընդհանուրի մեջ թողնելով անվավեր քվերների մասնաբաժինն անփոփոխ:

[26] Նույն մոտեցումը Վահան Հովհաննիսյանի դեպքում կիրառելիս անկյունային գործակիցը համապատասխան ռեգրեսիայում ավելի փոքր չափով է կրճատվում (0.067-ից 0.059), ինչը նշանակում է, որ նրա ձայներում ըստ տարածքների ցրվածությունը կամ արդյունքների տարբերությունը մեծ չէ, ավելի համաչափ է, ի տարբերություն Սերժ Սարգսյանի: Մյուս բոլոր թեկնածուների համար ընտրատարածքներին համապատասխանող բինար փոփոխականներով ռեգրեսիաները կտրամադրվեն ըստ պահանջի:

Գծապատկեր 3. Երկու առաջատար թեկնածուների ստացած ձայների մասնաբաժինը որպես ֆունկցիա ընտրողների մասնակցությունից





X առանցք՝ մասնակցությունը, Y առանցք՝ թեկնածուների օգտին ձայների մասնաբաժինը ընտրության իրավունք ունեցողների մեջ

Նախքան այս երկու փոփոխականների միջև վիճակագրական կապ գտնելը, ուսումնասիրենք անվավեր քվերների հետ կապված անճշտությունները, կամ անտրամաբանական երևույթները, որոնք առկա են մեր տվյալներում: Աղյուսակ 3-ում ներկայացված են երկու առաջատար թեկնածուների օգտին տրված ձայների մասնաբաժինները անվավեր քվեների տարբեր ցուցանիշներ ունեցող ենթաբազմություններում: Դիտարկումները ցույց են տալիս, որ չափազանց բարձր անվավեր քվեների թիվ արձանագրած ընտրատեղամասերում (3 և 4-րդ սյունակներ, Աղյուսակ 3), Սերժ Սարգսյանի օգտին տրված ձայների մասնաբաժինը ավելի մեծ է, իսկ Լևոն Տեր-Պետրոսյանի օգտին տրված ձայների մասնաբաժինը ավելի փոքր է, քան նրանց համապատասխան պաշտոնապես հայտարարված մասնաբաժիններն ընդհանուր ընտրանքային բազմությունում (0.528 և 0.215, համապատասխանաբար): Նույնիսկ ավելի հատուկ հետաքրքրություն է ներկայացնում զրոյական անվավեր քվեներ արձանագրած ընտրատեղամասերի մեծ թիվը (215, կամ ընդհանուրի 11 տոկոսը), որոնցում ինչ-որ լուրջ բացթողման կամ մեքենայության պատճառով ձայների 72.8 տոկոսը (գրեթե 40 տոկոս ավելին, քան ողջ երկրի միջին 52.8 տոկոս ցուցանիշը) գրանցվել է Սերժ Սարգսյանի օգտին, և միայն 9.9 տոկոսը (իր ընդհանուր միջին 21.5 տոկոսի կեսից էլ ավելի քիչ) գրանցվել է Լևոն Տեր-Պետրոսյանի օգտին: Միակ այլ հնարավոր՝ մեքենայությունների հետ չկապված բացատրությունն այս դիտարկմանը կարող էր լինել այն, որ այն ընտրատեղամասերը, որոնցում քվեարկողները երկրում միջին քվեարկողից ավելի խելացի են և ավելի ջանասեր (այսինքն, ցուցումներին կարողացել են հետևել այնպիսի ճշտությամբ, որ արդյունքում զրոյական մակարդակի անվավեր քվեներ են ապահովել իտարբերություն միջին 1.5 տոկոսի կամ 21 անվավեր քվեաթերթիկ ամեն ընտրատեղամասում), ավելի հակված են եղել ՍՍ-ի թեկնածությունը պաշտպանելուն և ավելի քիչ հակված դեպի ԼՏՊ–ի թեկնածությունը, քան երկրում միջին քվեարկողները: Ելնելով Հայաստանյան ընտրությունների առանձնահատկություններից և մեր կողմից դիտարկվող երկու թեկնածուների մասին հայտնի տվյալներից և կենսագրականից, մենք լրջորեն կասկածի ենք ենթարկում այս հնարավորությունը, և հետևաբար, կարծում ենք, որ սա Սերժ Սարգսյանի օգտին կատարված կեղծիքների մասին հուշող ցուցանիշ է:

Աղյուսակ 3. Անվավեր քվեների տարբեր մակարդակների դեպքում արձանագրված ցուցանիշներ

	Անվավեր=0	Անվավեր թերթիկներ (քվեարկելու իրավունք ունեցողների մեջ) > 5 %	Անվավեր թերթիկներ (մասնակցողների մեջ) > 10%
Ընտրատեղամասերի թիվը	215	26	19
ԽՍ օգտին ձայների մասնաբաժինը ($V_{ՍՍ}/E$)	0.728	0.582	0.570
ԼՏՊ օգտին ձայների մասնաբաժինը ($V_{ԼՏՊ}/E$)	0.099	0.166	0.163

Ծանոթացում. Այս ցուցանիշների համար համեմատության հիմք են հանդիսանում ՍՍ-ի և ԼՏՊ-ի օգտին պաշտոնապես գրանցված մասնաբաժինները, համապատասխանաբար, 0.528 և 0.215:

Գծապատկեր 4–ում ներկայացված է ընդհանուր մասնակիցների թվի համեմատ անվավեր քվեների մասնաբաժինը որպես ֆունկցիա մասնակցության մակարդակից, գնահատված

Գծապատկեր 4. Անվավեր քվեների մասնաբաժինը որպես ֆունկցիա մասնակցության մակարդակից





X առանցք՝ մասնակցությունը, Y առանցք՝ անվավեր քվեների մասնաբաժինը ընտրության իրավունք ունեցողների մեջ

ռեգրեսիոն գծի հետ մեկտեղ: Այս կախվածությունը հստակ ցույց է տալիս, որ ավելի բարձր մասնակցության մակարդակ ունեցող ընտրատեղամասերում, ընդհանուր առմամբ, անվավեր թերթիկների մասնաբաժինն ավելի փոքր է: Սա ամենայն հավանականությամբ նշանակում է, որ երբ լցոնումներ են իրականացվել, դրանք իրականացնողներն առանձնապես հոգ չեն տարել, որպեսզի պահպանեն վավեր և անվավեր թերթիկների հարաբերակցությունը, և արդյունքում, անվավեր թերթիկների մասնաբաժինն ընդհանուրի մեջ նվազել է: Մտահոգիչ է նաև զրոյական անվավեր թերթիկներ և միևնույն ժամանակ բարձր մասնակցություն արձանագրած ընտրատեղամասերի քանակը: Սա նույնպես նշանակում է, որ բարձր մասնակցության մակարդակը արհեստականորեն ստեղծվել էր՝ հիմնականում արհեստականորեն աճեցնելով քվեարկողների թիվը:

Որպեսզի հասկանանք, թե որ թեկնածուն է օգտվել անվավեր թերթիկների ավելի փոքր մասնաբաժնից, մենք ընդգրկել ենք այս փոփոխականը Աղյուսակ 1-ում գնահատված ռեգրեսիոն հավասարումների մեջ երկու առաջատար թեկնածուների համար: (Ընտրատարածքները ներկայացնող բինար փոփոխականները նույնպես ավելացվել են ռեգրեսիոն հավասարումներին՝ ինչպես վերը նշեցինք ընտրատարածքների հնարավոր առանձնահատկությունները չեզոքացնելու նպատակով): Գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ չնայած ԼՏՊ-ի դեպքում անվավեր թերթիկների մասնաբաժնի և նրա հավաքած ձայների միջև կապ չկա (անվավեր թերթիկների փոփոխականի գործակցի գնահատականը վիճակագրորեն զրո է), սակայն անվավեր թերթիկների ավելի ցածր մակարդակ գրանցած ընտրատարածքներում (այդ թվում նաև զրոյական անվավեր գրանցածները) ՍՍ-ի օգտին գրանցված ձայների մասնաբաժինն ավելի մեծ է (գնահատված գործակիցը բացասական արժեք և բարձր վիճակագրական վստահելիության մակարդակ ունի), այլ հավասար պայմաններում:

Աղյուսակ 4. Անվավեր թերթիկների մասնաբաժինը որպես բացատրող փոփոխական ավելացնելիս ռեգրեսիոն հավասարումների գնահատման արդյունքները

	Սերժ Սարգսյան Կախյալ փոփոխական՝ $V_{ՍՍ}/E$		*Լևոն Տեր-Պետրոսյան Կախյալ փոփոխական՝ $V_{ԼՏՊ}/E$*	
	Անկյունային գործակից	t-վիճակագիր	Անկյունային գործակից	t-վիճակագիր
Մասնակցություն	1.070*	43.75	-0.056*	-3.30
Անվավեր թերթիկների մասնաբաժին	-0.744*	-6.18	0.010	0.12
Ընտրատարածքների բինար փոփոխականներ (40)	ընդգրկված		ընդգրկված	
R-քառակուսի	0.69		0.38	

Ծանոթագրություն. Աղյուսակը ներառում է ՓՔԵ մեթոդով գնահատված ռեգրեսիոն հավասարումների գնահատականները երկու առաջատար թեկնածուների համար: Յուր. թեկնածուի համար հավասարման տեսքը հետևյալն է. (Vթեկնածուi/E) = Հաստատուն + Անկյունային գործակից1 *T + Անկյունային գործակից2 *Անվավեր + Ընտր.բինար փոփոխականներ + ε : Դիտարկումների թիվը՝ 1,923. * - ցույց է տալիս 1 տոկոս նշանակալիության մակարդակ (կամ գործակցի 99 տոկոս վստահելիություն):

E. Եզրահանգում

Վերը ներկայացված արդյունքները ընտրակեղծիքների *ապացույց* չեն: Դրանք հնարավոր կեղծիքների *ցուցանիշ* են: Վերը նկարագրված վերլուծության լույսի ներքո, կարող ենք վստահորեն եզրակացնել, որ ընտրությունների պաշտոնապես հրապարակված տվյալները հուշում են լուրջ անճշտությունների կամ ընտրակեղծիքների մասին, այդ թվում նաև՝ լցոնումների և հաշվարկների ժամանակ մրցակիցներից ձայնագողության (կորզման) մասին: Կիրառված բոլոր չորս փորձնական տեստերը առաջարկում են որոշակի կեղծիքների և անճշտությունների առկայություն:[27] Իսկապես վերը ներկայացված արդյունքները համահունչ են այնպիսի մեքենայությունների և կեղծիքների գործընթացներին, որոնք նկարագրված են Մարիետա դե Պորբաիքս-Լանդին կողմից (դե Պորբաիքս-Լանդին և Էորսի, 2008), Շվեդական խորհրդարանականի, ով ԵԱՀԿ դիտորդական առաքելության խմբում մասնակցել էր ընտրություններին.

> Ընտրատեղամասերի բացումը և օրվա իրադարձությունները այքան էլ վատ չէին, սակայն հաշվարկման գործընթացը այն ընտրատարածքում, որ ես էի ընտրել, աղետալի էր: Տեղի ունեցան հնարավոր բոլոր բացասական երևույթները: Իրենց ընտրությունը կատարած և ցուցակում նշված քաղաքացիների թիվը չհաշվարկվեց, չօգտագործված թերթիկները չոչնչավեցին, և արձանագրությունը, որում պետք է տեղ գտնեին արդյունքները նախապես ստորագրված էին ընտրական հանձնաժողովի անդամների կողմից: Ամենալուրջ դեպքը այն էր, որ տեղական ընտրական հանձնաժողովի նախագահը բարձրաձայն սխալ անուն էր կարդում, երբ քվեաթերթիկները հերթով դրվում էին 9 թեկնածուներից յուրաքանչյուրին համապատասխանող

[27] Հնարավոր էր նաև վերահաշվարկման գործընթացում դիտարկված անճշտությունների մի մասը շտկել: Սակայն, վերահաշվարկման գործընթացը ևս թերություններ է պարունակել և խեղաթյուրվել է լուրջ խախտումներով: Օրինակ, ըստ օրենքի, բողոքարկումներ բետք է ներկայացվեն և հետաքնվեն ընտրությունների ավարտից 3 օրվա ընթացքում: Այսպիսով, օրական միայն 2-3 ընտրատեղամասերում վերահաշվարկ կատարելու հնարավորություն ունենալով (ինչպես նշել է Policy Forum Armenia-ի կողմից հարցված հանձնաժողովի մի անդամ), միջին արտադրողականությամբ և հնարավորություններ ունեցող հանձնաժողովը չէր կարող այդ 3 օրերի ընթացքում քվեաթերթերի վերահաշվարկ անցկացնել 10-ից ավելի ընտրատատեղամասերում: Իսկ քանի որ որոշ ընտրատարածքներում ավելի քան 20 տեղամասեր են բողոքներ գրանցել, տրամադրված ժամանակը բավարար չէր բոլոր բողոքներին անդրադառնալու համար: Ավելին, դիտարկումները ցույց են տվել, որ ընտրական գործընթացում ներ գրավված որոշ պաշտոնյաներ ընտրատարածքներում. (1) հրաժարվել են գրանցել թեկնածուների բողոքները (օրինակ, պատճառաբանելով, որ իրենք այլ տեղ են շտապում, կամ չափազանց հոգնած են) և (2) տարբերակել են, թե որ բողոքն ընդունեն և որը՝ ոչ: Կարիք չկա նշել, թե նման գործողությունները/անգործությունները որքանով են վերահաշվարկի գործընթացը անարդյունավետ դարձնում անճշտությունների և կեղծիքների հայտնաբերման և ճշտման տեսանկյունից: Այնուամենայնիվ, գոնե որոշ դեպերում վերահաշվարկները օգտակար են եղել և հայտնաբերել են որոշակի անհամապատասխանություններ: Օրինակ՝ ինչպես ներկայացված է Հետք-ի ինտերնետային կայքում (Hetq Online), քվեաթերթերի վերահաշվարկը, հիմնված Արթուր Բաղդասարյանի բողոքի վրա, Երևանի թիվ 9/31 ընտրատեղամասում ցույց տվեց, որ Սերժ Սարգսյանը «ստացել է» ձայներ այլ թեկնածուների հաշվին (այսինքն, ձայները, որոնք հաշվարկվել էին Սերժ Սարգսյանի օգտին իրականում պատկանել էին այլ թեկնածուների):

> խրձում: Նախագահը հստակ գիտակցում էր թե ինչ է ինքն անում: Նա ձայներ էր պակասեցնում Լևոն Տեր-Պետրոսյանից և տեղաբաշխում դրանք հօգուտ [այն ժամանակ դեռ] վարչապետ Սերժ Սարգսյանի: Ընտրական գործընթացում ներգրավված պաշտոնյաները փոքրձում էին կոծկել իրենց արարքները՝ ձեռքերը պահելով քվեաթերթիկների վրա կամ դրանք տեղավորելով թեկնածուին պատկանող թերթիկների կույտի միջին մասում, որպեսզի ես չկարողանամ տեսնել դրանք:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով անճշտությունների ծավալն ու հաճախականությունը, մենք զերծ կմնանք ընտրողների մասնակցության և թեկնածուներից յուրաքանչյուրի օգտին ձայների իրական բաշխվածության վերաբերյալ եզրահանգումներից և, հետևաբար, նաև ավելացված և կորզված ձայների թվի գնահատումներից: Լրացուցիչ վերլուծություն է պահանջվում, ընդհուպ նաև Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի աջակցությամբ, որպեսզի հայտնաբերվի այս անճշտությունների բնույթը, չափը և գտնվելու վայրը: Մենք նաև չենք կարող առաջարկել հստակ պատկեր ձայների այն բաշխվածության համար, որը կունենայինք ընտրությունների օրը այլ կեղծիքների բացակայության պարագայում (այսինքն բացի ավելացումներից և ձայների կորզումից) որոնք առկա էին նախընտրական շրջանում և ընտրությունների օրը (օրինակ՝ ադմինիստրարտիվ ռեսուրսների շահագործում, ձայների կաշառում, ընտրողներին վախեցնելը, կամ հոգեբանական ճնշումները և այլն): Մեկ բան, սակայն, կարելի է ասել որոշակի վստահությամբ, որ ելնելով բոլոր չորս փորձնական տեստերի արդյունքների կայունությունից և այդ տեստերով դիտարկված կեղծիքների հնարավորությունից, հաշվի առնելով որ տեստերը օժտված են բարձր հուսալիությամբ, սույն վերլուծությունը լուրջ կասկած է սփռում 2008թ-ի փետրվար ամսին նախագահական ընտրություններում Սերժ Սարգսյանի կողմից փոքր տարբերությամբ տարած հաղթանակի վրա, ինչպես նաև ընտրությունների վերջնական արդյունքների վստահելիության վրա:

V. ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԹՈՆՔ

Հայաստանի անկախացումից ի վեր անցկացված 5 նախագահական ընտրություններից միայն 1991թ. ընտրություն է, որ համապատասխանել է ազատ ու արդար ընտրությունների միջազգային չափանիշներին: Մնացած չորս ընտրությունները ընթացել են մի այնպիսի օրինաչափությամբ, որին արդեն քաջածանոթ ենք. թերություններով ընթացած ընտրություններ[28], որոնց հաջորդում են ընդդիմության բողոքներն ու ցույցերը: Չնայած 2008թ. այս օրինաչափությունը վերստին պահպանվեց, սակայն հետընտրական զարգացումները նշանակալիորեն տարբերվում էին նախորդներից մի շարք պատճառներով: Առաջին՝ մի շարք պաշտոնյաներ, քաղաքացիական ծառայողներ և դիվանագետներ հրաժարական տվեցին կամ հեռացվեցին իրենց զբաղեցրած պաշտոններից ընդդիմությանը սատարելու համար: Բարձրաստիճան պաշտոնյաների կողմից արարողակարգի այսպիսի ակնհայտ խախտումը բնորոշ չէր նախորդ ընտրություններին, երբ մարդիկ թևից թև էին անցնում ընտրությունների վերջնական արդյունքները պարզ դառնալուց հետո և սովորաբար անցում էր կատարվում միայն դեպի իշխանական կուսակցություն և ոչ ընդդիմություն:

Երկրորդ՝ 2008թ. ընտրություններից ու մարտի 1-ի և 2-ի դեպքերից հետո, քաղաքական անտարբերության շուրջ 2 տասնամյակ անցնելուց հետո, Հայաստանում շատ ակտիվ ու հնչեղ դարձավ քաղաքացիական հասարակությունը: Չնայած հասարակական կազմակերպությունները (ՀԿ-ներ) Հայաստանում ակտիվ են եղել 90-ականներին ու շարունակում են մինչ օրս ակտիվություն հանդես բերել, սակայն ներկայումս ավելի լայն քաղաքացիական ակտիվություն է նկատվում, որը միայն ՀԿ-ներով չի սահմանափակվում: Այս բաժնում քննության են առնվում քաղաքացիական հասարակության ակտիվության բնույթն ու առանձնահատկությունները և դիտարկվում են այս ակտիվության հնարավոր հետևանքները Հայաստանի հետագա քաղաքական զարգացումների վրա:

Ներդիր 2. Համառոտ ակնարկ Հայաստանի քաղաքացիական հասարակության վերաբերյալ

1980-ականների վերջին Հայաստանում հավատացին քաղաքացիական հասարակության գաղափարներին ու խորհրդային համակարգի ժողովրդավարայնացման հնարավորությանը: Այս գաղափարախոսությամբ տոգորված հարյուր հազարավոր մարդիկ դուրս եկան Երևանի փողոցներ՝ դրսևորելով սոցիալ-քաղաքական ակտիվություն: Ղարաբաղյան շարժումը բազմաթիվ գծերով ընդունել էր 19-րդ դարի զարթոնքի[29] գաղափարախոսությունն ու սկզբունքները:

---

[28] «Թերություններով ընթացած ընտրություններն» այս ենթատեքստում վերաբերում է այն թերություններին ու խնդիրներին, որ տեղի են ունենում նախընտրական ու հետընտրական ժամանակահատվածներում, որոնք ի թիվս այլոց ներառում են լրատվամիջոցների հասանելության ոչ հավասար լինելը, քվեների գնում, կեղծում, բռնություն տեղական ընտրական դիտորդների նկատմամբ:

[29] 19-րդ դարի հայ հեղափոխականների աշխարհիկ ազգայնականությունը խորհրդանշում էր նոր ազգային գիտակցության ձևավորումը, որ հայտնի է որպես զարթոնքի շրջան ու մատնանշում է արմատական շրջադարձ: Ինչպես նշում է Ռոլանդ Սունին, այն շեշտում է տարանջատումը եկեղեցուց, ընդհանուր ֆոլկլորում էթնիկ մշակույթի, բարբառների կարևորությունը և ժամանակակից աշխարհում քաղաքական մասնակցություն ունենալու կարևորությունը (Տես՝ Suny 1993: 9): Անջատումը եկեղեցուց

(continued)

Չնայած այն ժամանակ կայացած քաղաքացիական հասարակություն դեռ չկար, Լևոն Աբրահամյանը գրում է, որ «քաղաքացիական հասարակության սաղմը» (Աբրահամյան 2001: 125) անշուշտ առկա էր այդ ժամանակվա Հայաստանում: Որպես ապացույց Աբրահամյանը նշում է ցույցերը, բողոքի ակցիաները՝ ինչպիսիք են գործադուլն ու հացադուլը, 1988թ. Երևանի Թատերական հրապարակում[30] ի հայտ եկած տեղեկատվական սեղանիկները, որտեղ մարդկանց տրամադրվում էր գրավոր կամ բանավոր տեղեկատվություն ընտրությունների, պատգամավորների, գրանցման կանոնների, ընտրատարածքների ու ընտրատեղամասերի մասին, ինչպես նաև մանրամասներ խորհրդային սահմանադրական իրավունքի համաձայն քաղաքացիներին վերապահված սահմանադրական իրավունքների մասին (Աբրահամյան 2005: 242): Նա պնդում է, որ 1988թ. հայերը «սկսեցին իրենց իրենց կրթությունը ժողովրդավարության ասպարեզում» և շուտով կարողացան առաջ տանել իրենց խնդիրներն առաջնորդվելով ԽՍՀՄ սահմանադրությամբ:

Անկախության հռչակումից հետո իրավիճակը փոխվեց: Անկախության առաջին տարիների սոցիալ-տնտեսական դժվարությունների պատճառով շատ մարդիկ չունեին քաղաքացիական նախագծերին մասնակցելու կամ քաղաքացիական ակտիվություն ցուցաբերելու ժամանակ ու հակվածություն: 1990-ականներին 1980-ականների վերջում ի հայտ եկած հույսերին փոխարինում էին հիասթափությունը, անտարբերությունը, դժգոհությունն ու վհատվածությունը: Անկախության առաջին տարիները հիշատակվում են որպես «մթի և ցրտի տարիներ»: Թեպետ քաղաքացիական ակտիվությունն 1990-ականներին համատարած չէր, սակայն այդ տարիներին հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ների) արտահայտված աճ էր գրանցվում Հայաստանում: Սա համահունչ էր ՀԿ-ների թվի մեծացման համաշխարհային միտումներին, ինչը բնորոշվեց որպես «միությունների ու միավորումների համաշխարհային հեղափոխություն» (Տես՝ Salamon and Anheier, 1997):

Թեպետ այսօր քաղաքացիական հասարակությունը չի սահմանափակվում միայն ՀԿ-ներով, 1990-ականներին քաղաքացիական հասարակությունը գործնականում հաճախ նույնականացվում էր ՀԿ-ական գործունեության հետ: Հայաստանում կան 4000 գրանցված ՀԿ-ներ (բավականին մեծ թիվ է, եթե հաշվի առնենք որ ընդհանուր բնակչությունը 3 միլիոնից պակաս է), սակայն հարկ է նշել, որ արդարադատության նախարարության կողմից չի պահանջվում, որ գործունեությունը դադարեցնելու դեպքում ՀԿ-ները դուրս գան գրանցումից: Ուստի, մեծ թվով գրանցված ՀԿ-ների փաստը դեռևս չի կարող դիտարկվել որպես ոլորտի գործունեության կենսունակության ցուցանիշ[31]:

Քաղաքացիական հասարակության սահմանման նեղացումը, որով այն ընդգրկում է մասնագիտական շահապաշտպան գործունեություն իրականացնող ու ծառայություններ

նպատակ ուներ ձևավորել անկախ ազգային գաղափարախոսության վրա հիմնված նոր ինքնություն, որը կրոնական համայնք չէր լինի:

[30] Անկախության հռչակումից հետո Թատերական հրապարակը վերանվանվեց Ազատության հրապարակ:

[31] Ավելի քան 4000 գրանցված ՀԿ-ներից նախագծերի իրականացման ակտիվ աշխատանքներով զբաղված են մոտ 200-250-ը (ծառայություն մատուցող և շահապաշտպան ՀԿ-ները միասին) (Տես՝ Ishkanian, 2008).

[32] *Գրանտակերությունը* կոռուպցիայի մեկ այլ դրսևորում է:

մատուցող ՀԿ-ները, գնահատվում է որպես քաղաքացիական հասարակության ՀԿ-այնացում: Անշուշտ, ՀԿ-ները հանդիսանում են քաղաքացիական հասարակության կարևոր ինստիտուցիոնալ բաղադրիչներից, սակայն դրանք քաղաքացիական հասարակության սոսկ մի մասն են կազմում: Կենսունակ քաղաքացիական հասարակության մյուս դերակատարներն են արհեստակցական միությունները, կրոնական կազմակերպությունները, շարքային քաղաքացիների միություններն ու միավորումները, ինքնաջակցման խմբերը: Կան գաղափարախոսական ու քաղաքական տարբեր դիրքորոշումներ քարոզող տարաբնույթ կազմակերպություններ: Հայաստանում կան. (1) անկախ ՀԿ-ներ, (2) կառավարության ձևավորած ՀԿ-ներ, (3) մասնավոր բիզնեսի նման գործող ՀԿ-ներ, որ հայտնի են որպես «գրանտակերներ»[32] և (4) ՀԿ-ներ ստեղծված որոշակի քաղաքական ու տնտեսական շահերի հետամուտ լինելու նպատակով, որ հայտնի են որպես «գրպանային» ՀԿ-ներ:

Վերջերս կառավարությունը հայտարարեց ՀԿ-ները միավորող Հասարակական պալատի ձևավորման մասին, որտեղ կիրառված է ռուսական մոդելը: Չնայած այն դեռ ձևավորման նախնական ու խորհրդատվական փուլում է, կան մտահոգություններ, որ այս կառույցը կծառայի որոշ ՀԿ-ների չեզոքացման ու լռեցման նպատակներին: Ռուսաստանը սկսեց օրենքներ ձևավորել ու ՀԿ-ների գործունեության կարգավորման ու վերահսկման մեխանիզմներ մշակել Վրաստանում, Ուկրաինայում ու Ղրղզստանում տեղի ունեցած «գունավոր հեղափոխություններից» հետո:

Այս հեղափոխություններից հետո քաղաքացիական հասարակությանը Արևմուտքի կողմից ցուցաբերվող օժանդակությունը սկսեց արժանանալ կառավարական օղակների քննադատությանը նախկին ԽՄ բոլոր երկրներում ու քայլեր ձեռնարկվեցին ՀԿ-ների գործունեությունը սահմանափակող օրենքների ընդունման, ինչպես նաև ճնշման այլ առավել վտանգավոր ձևերի կիրառման ուղղությամբ, մասնավորապես՝ Ռուսաստանում, Ղազախստանում և Ուզբեկստանում (Տես՝ Howell *et al.,* 2008): Ամբողջ աշխարհում ՀԿ-ների ու քաղաքացիական հասարակության կազմակերպություն օտարերկրյա ֆինանսավորումը ավելի ու ավելի հաճախ բնութագրվում է որպես միջամտողականություն ու նեո-իմպերիալիզմ և տրոյական ձիու ստեղծում: Քաղաքացիական հասարակության կազմակերպություններին օտարերկրյա կառավարությունների կողմից տրամադրվող ֆինանսավորման գործոնը շահարկելու մարտավարությամբ նպատակ է հետապնդվում կասկածի տակ առնել այդ կազմակերպությունների գործունեության օրինականությունն ու այն լծակներն ու նպատակները, որոնց հետամուտ են լինում այդ կազմակերպությունների ակտիվիստները: Այս իրավիճակը բնութագրվում է որպես ճնշում քաղաքացիական հասարակության հանդեպ, որը ներառում է օրենքների շրջանակում ու այդ շրջանակից դուրս միջոցների ձեռնարկում, որոնք ուղղված են օտարերկրյա ֆինանսավորմամբ գործող ՀԿ-ների սահմանափակմանը, չեզոքացմանը, ճնշմանը և փակմանը (Տես՝ Gershman and Allen, 2006: 38; Howell *et al.,* 2008).

A. Քաղաքացիական հասարակության ակտիվությունը 2008թ. մարտի 1-ի և 2-ի դեպքերից հետո

Մարտի 1-ի և 2-ի դեպքերից հետո հայտարարված 20-օրյա արտակարգ իրավիճակի ընթացքում հանրահավաքներն արգելված էին և բոլոր լրատվամիջոցները, այդ թվում ռադիոհեռուստաընկերությունները, լրագրերն, ամսագրերն ու ինտերնետի լրատվական կայքերն արտոնված էին տրամադրել միայն պաշտոնական տեղեկատվություն: Չնայած մարտի 13-ին այս սահմանափակումները փոքր-ինչ մեղմացվեցին, սակայն դրանք ավելի շատ թվացյալ էին, քանի որ թերթերը նախքան տպագրումը պետք է գրաքննության ենթարկվեին Ազգային անվտանգության ծառայության գրաքննիչների կողմից, ովքեր

ստուգում էին անկախ ու ընդդիմադիր թերթերի նյութերը, որպեսզի դրանցում չլինի «ակնհայտորեն կեղծ կամ ապակայունացնող տեղեկատվություն»: Այդ իսկ պատճառով բազմաթիվ թերթեր վերստին տպագրվել սկսեցին միայն արտակարգ դրության վերացումից հետո:

Արտակարգ դրությունից զատ ու ի հեճուկս Եվրախորհրդի առաջ ստանձնած պարտավորություններին՝ մարտի 18-ին ազգային ժողովն ընդունեց Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքը, որով հանրահավաքների ավելի խիստ սահմանափակումներ կան: Փոփոխություններից մեկը նախատեսում է մի նոր դրույթ, որի համաձայն, եթե իշխանություններն ունեն «հավաստի տվյալներ» որ զանգվածային հրապարակային միջոցառումները կարող են հանգեցնել «պետական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարոյականության խաթարմանը», և ՀՀ ոստիկանությունից ու ԱԱԾ-ից ստացվող ցանկացած այդպիսի տվյալ ինքնըստինքյան համարվում է «հավաստի»: Ըստ Human Rights Watch-ի այս փոփոխությունները «անհամատեղելի են Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայով հանրահավաքների իրավունքը հարգելու մասին Հայաստանի ստանձնած պարտավորությունների հետ» (Տես՝ Human Rights Watch, 2008b): Չնայած այս սահմանափակումներին ու թերևս ավելի շատ ի պատասխան այդ սահմանափակումների քաղաքացիական ակտիվության աշխուժացում նկատվեց ՀԿ-ների, նմանատիպ գաղափարների շուրջ միավորված դաշինքների, հասարակական շարժումների ու քաղաքացիական հասարակության այլ կառույցների կողմից: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի զեկույցում ներկայացվում է, թե ինչպես ժողովրդավարության ճնշմանն ուղղված սահմանափակումները փաստացի ձախողվեցին (Տես՝ Մարդու իրավունքների պաշտպան, 2008b: 7)[33]: Ընդդիմությունն անհողդողդ էր և կիրառում էր 1988թ. Ղարաբաղյան շարժման խորհրդանիշներն ու լոզունգները, մասնավորապես հանրահավաքների անցկացումը ազատության հրապարակում, ու «պայքար, պայքար մինչև վերջ» վանկարկումները, որոնք ազգային ազատագրական պայքարի այդ ժամանակներն էին հիշեցնում (Տես՝ Մարդու իրավունքների պաշտպան, 2008b: 23).

[33] Օմբուդսմեն Արմեն Հարությունյանին «քաղաքական» զեկույց պատրաստելու համար քննադատեցին գլխավոր դատախազն ու արդարադատության նախարարը: Մինչ այդ, օմբուդսմենի կողմից առաջին հրապարակային զեկույցի հրապարակումից հետո (Մարդու իրավունքների պաշտպան, 2008a) նախագահ Քոչարյանը բնորոշեց նրան որպես իր նշանակած կադրերից ամենավատը: Նա մեղադրեց Հարությունյանին Հայաստանի անունը արտերկրի աչքում արատավորելու մեջ և ասաց. «չի հասկանում, թե ինչ է խոսում» (Armenia Liberty, 2008b):

B. Քաղաքացիական հասարակության արձագանքը սահմանափակումներին. քաղաքացիական անհնազանդության ի հայտ գալը

Հասարակական կազմակերպություններ

ՀԿ-ները 2003թ. ընտրություններից սկսած և ամեն մի նոր ընտրության (այն է՝ 2007թ. խորհրդարանական ու 2008թ. նախագահական ընտրությունները) հետ հետզհետե ավելի ու ավելի ակտիվ իրագործել են նախընտրական ու հետընտրական մի շարք նախաձեռնություններ, մասնավորապես՝ քաղաքացիական մասնակցությանը նպաստող նախաձեռնություններ, սեփական ձայնին տեր կանգնելու վերաբերյալ իրազեկվածության մեծացմանն ուղղված աշխատանքներ, տեղեկատու թեժ գծերի հովանավորում, ուսուցման կազմակերպում և ընտրություններում տեղական դիտորդական գործառույթի իրականացում: Մի բան, որ Հայաստանի ՀԿ-ներն ըստ իրենց պնդումների անում են, կամ էլ գոնե փորձում են անել, վախի մթնոլորտին դիմակայելն է, որն ըստ նրանց փաստարկների ի հայտ է եկել 2008թ. մարտի 1-ի և 2-ի դեպքերից հետո: Բացի այն ՀԿ-ներից, որոնք քննադատում էին իշխանությունների կողմից ընդդիմության հանդեպ բռնության կիրառումը, կային նաև ՀԿ-ներ, որոնք փորձում էին համոզել ցուցարարներին դադարեցնել բողոքի ցույցերն ու լինել «հանդուրժող»: (Տես՝ Մարդու իրավունքների պաշտպան, 2008b: 24):

Ըստ ՀԿ-ների վախի այս մթնոլորտի ձևավորման պատճառներն էին ընդդիմադիր քաղաքական ակտիվիստների ձերբակալություններն ու հարձակումները քաղաքացիական հասարակության հայտնի դեմքերի վրա: Քաղաքացիական հասարակության երիտասարդ ակտիվիստ Արսեն Խառատյանին մայիսի 28-ին ծեծի ենթարկելուց հետո, մարդու իրավունքների ու մամուլի ազատության հարցերով մի շարք ՀԿ-ներ հանդես եկան հայտարարությամբ[34], որտեղ նշվում էր.

> «Մենք դատապարտում ենք իշխանությունների որդեգրած գործելակերպը եւ հայտարարում, որ հասարակության ձայնը լռեցնելու և վախի մթնոլորտ սերմանելու ամեն մի գործողություն ավելի է ուժեղացնում հանրության վրդովմունքն ու դժգոհությունը ներկա վարչակազմի նկատմամբ»:

Ընտրություններից հետո ՀԿ-ները հատկապես ակտիվ դերակատարում ստանձնեցին ընտրախախտումներն ու կեղծիքների դեմ բողոքի ձայն բարձրացնելու ու դրանք, ինչպես նաև ընտրողների ու տեղական դիտորդների նկատմամբ բռնության ու ահաբեկման դեպքերը բարձրաձայնելու հարցում: Օրինակ՝ երբ Սերժ Սարգսյանի կողմնակիցները պնդում էին, որ ընտրությունները համապատասխանել են միջազգային չափանիշներին ՝ վկայակոչելով

[34] «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, «Հույս» ՀԿ, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի հայաստանյան կոմիտե, «Փաստաբաններ մարդու իրավունքների համար» ՀԿ, «Իրավունքի և ազատության կենտրոն» ՀԿ, «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ, «Զարթոնք-89» ՀԿ, «Զինվորի պաշտպանության կոմիտե» նախաձեռնող խումբ, «Քաղաքացիական ազգային նախաձեռնություն» ՀԿ, «Երիտասարդություն հանուն ժողովրդավարության» ՀԿ, «Միջնաբերդ» ՀԿ, «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ

Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության (ԸՄԴԱ)[35] գնահատականները, մի շարք ՀԿ-ներ քննադատեցին ԸՄԴԱ զեկույցում առաջ քաշված այն դրույթը, որ ընտրությունները «մեծապես անցկացվեցին ԵԱՀԿ-ի և Եվրախորհրդի նկատմամբ ստանձնած պարտավորությունների և չափանիշների համաձայն»:

Փետրվարին մարդու իրավունքների ու մամուլի ազատության հարցերով ինը ՀԿ-ներ[36] հանդես եկան հայտարարությամբ՝ նշելով որ «զեկույցի առաջին երկու նախադասությունների և գնահատականի փաստերի միջև առկա ակնհայտ հակասության արդյունքը դարձավ այն, որ կառավարությունը մեջբերում է միջազգային դիտորդների գնահատականի միայն առաջին պարբերությունը՝ լեգիտիմիզացնելու ընտրության արդյունքները» (A1+-ի կայք): ԵԱՀԿ երևանյան գրասենյակի դիմաց բողոքի ցույցերի անցկացման ժամանակ ցուցարարները վանկարկում էին «ամոթ» բառը՝ ցույց տալու իրենց հուսախաբվածությունը դիտորդների զեկույցի վերաբերյալ, որն իրենք համարում էին կեղծիքներով ընթացած ընտրական գործընթացների[37] լեգիտիմիզացում:

Արտակարգ իրավիճակի ընթացքում և դրանից հետո ՀԿ-ները բաց նամակներ են հղել միջազգային կազմակերպություններին ու օտարերկրյա կառավարություններին: Նամակներում ներկայացվել են մարդու իրավունքների ոլորտում իշխանությունների թույլ տված տարբեր չարաշահումներն ու խախտումները: Մարտի 27-ին բավականին խիստ շարադրված բաց նամակում 10-ը ՀԿ-ներ[38] մեղադրում էին Հայաստանի Հանրապետությանը խորհրդային ժամանակաշրջանին բնորոշ ռեպրեսիայի և «պետական տեռորի» մեջ: Նամակում գրված էր. «Նման բռնությունների ծավալը մեծանում է օր-օրի: Հայաստանի իշխանությունները կամայականորեն ոտնահարում են մարդու սահմանադրական իրավունքները եւ հիմնարար ազատությունները» (Unzipped կայք): Թեպետ այս նամակները տեղական քաղաքական զարգացումների վրա կարծես թե որևէ ազդեցություն չեն ունեցել,

---

[35] Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունը (ԸՄԴԱ) հանդիսանում էր ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ), ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի, Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի և Եվրոպական խորհրդարանի համատեղ նախաձեռնությունը:

[36] «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ, «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» ՀԿ, Հայաստանի հելսինկյան կոմիտե, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, «Ինտերնյուս-Հայաստան» մամուլի աջակցության ՀԿ, «Մամուլի բազմազանության ինստիտուտ» ՀԿ, «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ -Հայաստան» ՀԿ, «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, «Երևանի մամուլի ակումբ» ՀԿ:

[37] ԸՄԴԱ վերջնական զեկույցը, որ հրապարակվեց մայիսի վերջին շատ ավելի քննադատաբար էր ներկայացնում ընտրության արդյունքներն ու հետընտրական զարգացումները:

[38] «Երիտասարդություն հանուն ժողովրդավարության» ՀԿ, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ, «Կրթության ասպարեզ» ՀԿ, «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի հայաստանյան կոմիտե» ՀԿ, «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ, «Հույս» ՀԿ, «Մենք պլյուս» ՀԿ, «Պետական կարիքների զոհեր» ՀԿ և «Սկսել ա» երիտասարդական շարժում:

սակայն դրանք երկրի ներսում և միջազգայնորեն բարձրաձայնել են մարդու իրավունքների տարբեր խախտումները: Ընդհանրապես աշխարհում ՀԿ-ների այս կարգի գործունեությունը նպատակ ունի երկրի ներսում տեղի ունեցող մարդու իրավունքների խախտումների ու ռեպրեսիաների վրա բևեռել միջազգային հանրության ուշադրությունը: Այս կարգի վարքագիծը բնորոշվում է որպես «բումերանգի ազդեցություն», որի միջոցով ոչ-պետական դերակատարները (այդ թվում՝ ՀԿ-ներ, հասարակական շարժումներ և այլն) ձգտում են հասնել դրական տեղաշարժերի երկրի ներսում՝ միջազգային հանրության ուշադրությունը պետության վրա բևեռելու միջոցով (Տես՝ Keck and Sikkink, 1998):

Հայտարարություններով, բաց նամակներով հանդես գալուց, բողոքի ակցիաների մասնակցելուց զատ մի շարք ՀԿ-ներ Հայաստանում ստեղծեցին անվճար հեռախոսային թեժ գիծ՝ օժանդակելու այն անձանց, ովքեր անօրինականորեն պահվում էին ոստիկանությունում, ում տներում կատարվում էին խուզարկություններ և որոնք իրենց անպաշտպան էին զգում: Թեժ գծերը համեմատաբար նորահայտ երևույթ են Հայաստանում. առաջին թեժ գծերը ստեղծվել են 2002թ. ընտանեկան բռնությունների զոհերին աջակցելու նպատակով (Տես՝ Իշխանյան, 2007): Այս նոր թեժ գծերով մարտի 1-ի և 2-ի իրադարձություններից հետո բազմաթիվ զանգեր են ստացվել:

Թեպետ հունիսի վերջի դրությամբ ՀԿ-ների գործունեության հանդեպ ուղղակի սահմանափակումներ չեն եղել, սակայն եղել են անուղղակի խոչընդոտներ: Իշխանություններն ու իշխանամետ ԶԼՄ-ները քննադատել են մի շարք ՀԿ-ների ոչ-հայրենասիրական գործունեության համար, և հրատարակվել են հոդվածներ, որոնցում կասկածներ են հնչեցվել այդ ՀԿ-ների գործունեության շարժառիթների ու ֆինանսավորման աղբյուրների հետ կապված (Տես՝ Նովոե վրեմիայի կայք): Նշենք մեկ այլ զարգացում. մարտի 21-ին ՀԿ-ները մի բաց նամակ ուղղեցին մասնավոր կառույցներին ու միջազգային կազմակերպություններին հայտնելով, որ համաժողովներ անցկացնելու համար տեղ վարձակալելու իրենց դիմումները մերժվել են՝ առանց ողջամիտ հիմնավորման (Տես՝ Tzitzernak կայք "A")[39]: ՀԿ-ները կարծում էին, որ իրենց հանդիպման տեղ չտրամադրելու պատճառը կառավարության կողմից ճնշումներն են այդ կառույցների հանդեպ ու տնտեսավարման ասպարեզում նրանց նկատմամբ հաշվեհարդար տեսնելու վախը: Այս վախը չհիմնավորված չես համարի, երբ առկա էին Տեր-Պետրոսյանին հրապարակավ սատարած անձանց (օրինակ՝ ԱԺ պատգամավոր Խաչատուր Սուքիասյան) պատկանող ձեռնարկությունների նկատմամբ հարկային հալածանքներն ու պաշտոնական հետաքննությունները: Վարչական հալածանքների հետ կապված մեծ հնչեղություն ունեցող մյուս դեպքն էլ Գյումրու ԳԱԼԱ հեռուստաընկերության հետ է կապված: ԳԱԼԱ-ի նկատմամբ իշխանությունների ճնշումներն սկսվեցին այն պահից, երբ այն եթերաժամանակ հատկացրեց Լևոն Տեր-Պետրոսյանի քարոզարշավի ու հետընտրական ցույցերի համար: ԳԱԼԱ-ն փակման վտանգի առաջ էր կանգնած, եթե չկարողանար վճարել 26,9 միլիոն ՀՀ դրամ (մոտ

[39] Անշուշտ հանդիպումների տեղի բացակայությունը խոչընդոտ էր, որն էլ ընդդիմությանը դրդեց հայտարարել, որ երկրորդ Հայ ազգային կոնգրեսը կկազմակերպեն Թբիլիսիում: Հնչեղությունը ու բացասական արձագանքը, որ կարող էր լինել ընդդիմության համագումարը այլ երկրում անցկացնելու դեպքում, ստիպեց կառավարությանը ընկրկել ու ի վերջո թույլ տալ, որ այն անցկացվի Երևանում:

90000 ԱՄՆ դոլար) իբրև նախկինում չվճարված հարկային պարտավորություններ՝ ըստ հարկային մարմինների կայացրած որոշման, որը նաև հաստատեց դատարանը: Ի պատասխան, ԳԱԼԱ-ի պաշտպանները հանդես եկան դրամահավաք նախաձեռնությամբ Հայաստանում, ինչպես նաև Սփյուռքի որոշակի մասնակցությամբ, և մարտի 25-ին հանգանակված միջոցներով ԳԱԼԱ-ն փակեց պարտքն ու շարունակեց մնալ եթերում:

Քաղաքացիական հասարակության ոչ-ՀԿ հատվածը

ՀԿ-ներից զատ՝ մարտի 1-ից և 2-ից հետո աշխուժացել են քաղաքացիական հասարակության այլ կազմակերպություններն ու հասարակական շարժումները, ինչպիսիք են օրինակ՝ Ազգային զարթոնքը, Save Armenia Action Group (SAAG), քաղբանտարկյալների կանայք: «Ազատ հայեր» խումբը բաց նամակ է հղել համայն աշխարհի հայությանը՝ կոչ անելով ցուցաբերել քաղաքացիական անհնազանդություն ու բոյկոտել սփյուռքի ավանդական քաղաքական կուսակցություններին ու կազմակերպություններին»: Վկայակոչելով Հենրի Դեյվիդ Թորոյի ու Թոմս Ջեֆերսոնի խոսքերը՝ հեղինակները գրում էին.

> «Արդ, հայի համար հասել է ժամանակը՝ ապրելու, գործադրելու և ցուցաբերելու «քաղաքացիական կամք», այսինքն՝ «մերժում իշխանությանը» և նվաճելու իր անձի ազատությունը օտար ուժերի եւ հայրենի կառավարության նկատմամբ ունեցած վախից ու բռնատիրությունից»[40]:

Վտարանդի հայ գրողների ու մտավորականների միությունն իր դիրքորոշումը հայտնեց Հայաստանի ընտրական խժդժությունների հետ կապված: Հայաստանում ժողովրդավարության սատարմանն առնչվող հարցերի շուրջ մայիսի 26-ին Լոս Անջելեսում անցկացված համաժողովում միությունը հանդես եկավ հայտարարությամբ, որով կոչ էր արվում արվում (1) ազատ արձակել բոլոր քաղբանտարկյալներին, (2) կամովին հեռանալ իշխանությունից, ընդդիմության հետ փոխգործակցությամբ նշանակելով փոխանցման ժամանակավոր կառավարություն՝ մինչև նոր ընտրությունների կայացումը ստեղծել ժամանակավոր կառավարություն և (3) վերադարձնել պետական առանձնաշնորհների միջոցով ձեռք բերված ողջ ինչքն ու հարստությունը[41]:

Հանրահավաքների ու ցույցերի անցկացման նկատմամբ արգելքն անշուշտ հանգեցրեց քաղաքացիականն անհնազանդության դրսևորումների, քանի որ քաղաքացիական

---

[40] Armenaker Kamilion-ի կայքում զետեղված է անգլերեն թարգմանությունը: «Ազատ հայերի» հռչակագիրը կարող եք գտնել http://www.eutyun.am/S/X/0806/Y_080609_yAZAT-HAY.htm էջում:

[41] Հայտարարության տեքստը զետեղված է http://www.vernatun.info/ էջում: Հեղինակները նաև պահանջում են քաղաքացիական ազատությունների վերականգնում, այդ թվում վտարանդի մտավորականների վերադարձի համար առկա խոչընդոտների վերացում: Այն, որ իրենք չեն կարող ընտրել կամ ընտրվել, նրանք համարում են մարդու իրավունքների ոտնահարում ու իրենց պատրաստակամությունն են հայտնում առաջադրել նախագահի թեկնածու անհրաժեշտ հանգամանքների առկայության պարագայում:

հասարակությունը այլընտրանքային միջոցներ էր գտնում, երբեմն էլ խիստ նորարարական, հավաքներ կազմակերպելու համար: Այդպիսի մի միջոց էր քաղաքական զբոսանքների կազմակերպումը Հյուսիսային պողոտայում: Այս զբոսանքների մասնակիցները կարդում էին, ուտում կամ շախմատ խաղում: Զբոսանքների որոշ տեսանյութեր տեղակայվել են YouTube-ում ու քննարկվել են տարբեր բլոգերում: Չնայած զբոսանքների թվացյալ անմեղ բնույթին՝ ոստիկանները մարտի 25-ին սկսեցին բերման ենթարկել զբոսանքի մասնակիցներին:

Հետընտրական ժամանակաշրջանում աշխուժություն հանդես բերած խմբերց 3-ը աչքի են ընկել առավել մեծ ակտիվությամբ. դրանք են՝ երիտասարդները, կանայք ու վիրտուալ (այսինքն՝ առցանց) համայնքը:

Երիտասարդություն

Ընտրությունների ու հատկապես հաջորդած ցույցերի միջոցով բացահայտվեց, որ Հայաստանի երիտասարդությունը հանդիսանում է ակտիվ քաղաքական ընտրազանգված[42]: Ընտրություններին հաջորդած տասն օրերի ընթացքում Ազատության հրապարակում տիրող տոնական մթնոլորտն ավելի ու ավելի շատ երիտասարդների էր բերում այնտեղ: Մարտի 21-ին արտակարգ դրության վերացումից հետո, քաղաքականապես ակտիվ երիտասարդները կազմակերպեցին բողոքի մի շարք ակցիաներ, մասնավորապես՝ մոմերով երթեր, սերենադներ պետական պաշտոնյաների պատուհանների տակ, էստաֆետային միջոցառումներ Ազատության հրապարակում: Առաջին շարքերում հայտնվել են մի շարք երիտասարդական կազմակերպություններ ու շարժումներ, մասնավորապես՝ «Սկսել ա», «Հիմա», որոնք այդ ժամանակվանից գործում են՝ ի հեճուկս ձերբակալության, կրթօջախներից հեռացման կամ ֆիզիկական հաշվեհարդարների իրական վտանգների:

Որոշ քննադատներ պնդում էին, որ այս խմբերը չեն ներկայացնում Հայաստանի երիտասարդների մեծամասնության շահերը, և դրանք ստեղծված են երիտասարդ պատեհապաշտների փոքր խմբերի կողմից: Ոմանք նույնիսկ մեղադրում էին այս խմբերին օտարերկրյա կառավարություններին ծառայելու մեջ՝ հողում կատարեով ֆինանսավորմանը, որը նրանք իբր ստանում են արտերկրից: Երիտասարդական շարժումների հետագա ընդլայնումը կերևա միայն ժամանակի ընթացքում, սակայն նշանակալի է արդեն իսկ այն, որ ապատիայի ու քաղաքական անտարբերության երկու տասնամյակից հետո, Հայաստանի երիտասարդները կրկին մասնակցում են քաղաքականությանն ու երկրի ապագային վերաբերող քննարկումներին:

[42] Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցում նշվում է, որ Տեր-Պետրոսյանի կազմակերպած միջոցառումներին երիտասարդների ակտիվ մասնակցությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ երիտասարդները ավելի խոր ընկալում ունեն հավերժական արժեքների վերաբերյալ (դրանք են՝ արդարադատություն, ժողովրդավարություն, հավասարություն, մարդու իրավունքներ և այլն) (Տես՝ Մարդու իրավունքների պաշտպան, 2008b: 12).

Կանայք

Մարտի 1-ի և 2-ի դեպքերից հետո կանանց ՀԿ-ները, ինչպես նաև կանանց խմբերը, որ ունեն ընդհանուր մտահոգություններ, նույնպես ակտիվ մասնակցություն են ունեցել պիկետներին ու քաղաքացիական այլ ակցիաներին՝ ուղղակիորեն իրենց անհնազանդությունը արտահայտելով արտակարգ դրությանը: Այս 20-օրյա ժամանակահատվածում կանանց մի խումբ՝ կազմված մոտ 30 հոգուց և հիմնականում մարտի 1-ին և 2-ին զոհված անձանց ազգականներից, զոհվածների հիշատակին նվիրված լուռ բողոքի երթ անցկացրեց դեպքերից մեկ շաբաթ անց: Սև հագուստ կրող կանանց խումբը ոստիկանության ուղեկցությամբ Սբ. Սարգիս եկեղեցուց շարժվեց դեպի Գրիգոր Լուսավորչի եկեղեցին: Նրանց ձեռքին սև ժապավենով սպիտակ մեխակներ էին, ու նրանք իրենց իսկ բնութագրմամբ դուրս էին եկել պայքարելու հանուն ժողովրդավարության: Երթի օրը (մարտի 8-ը) երկուստեք նշանակալի էր, քանզի այդ օրը Կանանց միջազգային օրն էր, ու մարտի 1-ին և 2-ին զոհվածների մահվան 7-րդ օրը: Ապրիլի 7-ին, մայրության ու գեղեցկության օրը, հայ կանանց մի խումբ հավաքվել էր Գլխավոր դատախազության մոտ ու պահանջում էր ազատ արձակել քաղբանտարկյալներին: Երբ գլխավոր դատախազը ծաղիկներ ուղարկեց բողոքի դուրս եկած կանանց, նրանք հրաժարվեցին այն ընդունել:

Արտակարգ դրության վերացումից հետո պաշտոնապես արտոնված առաջին ցույցը կազմակերպվեց «Կանայք հանուն խաղաղության» ՀԿ-ի կողմից: Այս ցույցը, որն մասնակցեցին շուրջ 10000 հոգի, տեղի ունեցավ Մյասնիկյանի արձանի մոտ ապրիլի 19-ին: Չնայած պաշտոնապես միջոցառումը նվիրված էր Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորման համատեքստում հայ-ռուսական հարաբերություններին, սակայն ցույցը անմիջապես վերածվեց ընդդիմության ցույցի, քանզի արտակարգ դրության հայտարարման պահից ի վեր հրապարակային հավաքի հնարավորություն ընդդիմությունը չէր ունեցել:

Կանանց ակտիվ խմբերից մեկն էլ քաղբանտարկյալների կանայք են, որոնք կազմակերպել են ակցիաներ, մասնավորապես՝ գրել են նամակներ միջազգային կազմակերպություններին, կազմակերպել պիկետներ դեսպանատների ու միջազգային կազմակերպությունների գրասենյակների մոտ: Մայիսի 16-ի բաց նամակում նրանք գրում էին, որ սկզբում խումբը կազմված էր միայն բանտարկյալների ընտանիքների անդամներից, սակայն այն վերաճել է «ժողովրդավարական մի ուժի, որ ունի հազարավոր կողմնակիցներ ամբողջ երկրում, ովքեր օրինական ցույցերի ու մարդու իրավունքների ու քաղաքական այլ ակցիաների են ձեռնամուխ եղել» (Տես՝ Tzitzernak կայք “B”):

Ներդիր 3. Կանանց դերը այլ երկրներում

Բոլորովին էլ արտասովոր չէ, որ դժվարին ու ճգնաժամային իրավիճակներում կանայք ավելի մեծ հասարակական դերակատարում են ստանձնում: Կանանց առաջին շարժումներից մեկը սպիտակ կանանց դիմադրության Black Sash շարժումն էր, որ ձևավորվեց 1955թ. և գործեց մինչև ապարտեիդի ռեժիմի անկումը: Որպես սգո նշան նրանք սև երիզներ էին կրում ու ցույցերով հանդես գալիս ընդդեմ հալածական օրենսդրության, մարդու իրավունքների ոտնահարման և ապահովում սպիտակների կողմից ապարդեիդյան ռեժիմին դիմադրելու տեսանելի ապացույցներ: Արգենտինայում ակտիվություն էին հանդես բերում մայրերն ու տատերը, որոնց սիրելիներն անհետանում էին: Նրանք ամեն շաբաթ լուռ երթով անցնում էին Plaza de Mayo հրապարակով:

Ռուսաստանում Բեսլանի դպրոցում տեղի ունեցած ողբերգությունից հետո ստեղծվեց Բեսլանցի մայրերի կոմիտե, որն իր դժգոհություն էր հայտնում այն փաստի կապակցությամբ, որ ընկալվում էր որպես կառավարության կողմից ճգնաժամի ոչ ճիշտ լուծում: Կանանց մեկ այլ հայտնի միջազգային խումբ է Women in Black-ը («Սևազգեստ կանայք»), որի համար ներշնչանքի աղբյուր են հանդիսացել ավելի վաղ գործած «սև հագուստ կրող կանանց» խմբերը, ինչպիսիք է օրինակ Black Sash-ը Հարավային Աֆրիկայում: Women in Black խմբերը ամբողջ աշխարհում կիրառում են ուղղակի ոչ ագրեսիվ ու խաղաղ ակցիաներ, այդ թվում նստացույցեր ու պիկետներ: Իսրայելյան/պաղեստինյան Women in Black խմբերն օրինակ կանոնավոր կերպով ամեն շաբաթ նույն տեղում ու նույն ժամին պիկետի են դուրս գալիս: Կանայք սև հագուստ են կրում ու լուռ են մնում , նույնիսկ երբ իրենց հարցեր են ուղղում կամ երբ անցորդները նրանց պիտակում են «պոռնիկներ» կամ «դավաճաններ»: Նրանց սկզբունքը այն է, որ պահպանեն լռությունն ու արժանապատվությունը (Տես՝ Women in Black-ի կայք):

Tiananmen հրապարակում 1989թ. բողոքի ակցիաները ճնշելուց հետո կանանց մի խումբ, որոնց առաջնորդում էր Նոբելյան խաղաղության մրցանակի հավակնորդ Դինգ Զիլինը ստեղծեց Tiananmen Mothers («Թինանմենի մայրեր») խումբը: Նրանց հինգ պահանջների թվում են կրակոցների վերաբերյալ ամբողջական հրապարակային հաշվետվությունը ու բանտերում գտնվող 1989թ. բողոքի ակցիաներում դերակատարում ունեցած անձանց ազատ արձակում: Tiananmen Mothers-ի նկատմամբ Չինաստանի կառավարությունը ռեպրեսիաներ է կիրառում՝ մեղադրելով նրանց անօրինական գործողությունների ու օտարերկրյա կառավարությունների ծառայելու մեջ:

Մեկ այլ խումբ, որ հայտնի է որպես «Հայ կանանց շարժում» հանդես եկավ հայտարարությամբ՝ կոչ անելով Հայաստանի ու Սփյուռքի կանաց ավելի ակտիվ դերակատարում ունենալ քաղաքական կյանքում Հայաստանի ժողովրդի շահերը պաշտպանելու հարցում: Նրանք նշում էին, որ կանայք որպես տան ու օջախի սյուներ պարտավոր են պայքարել բռնատիրության ու դիկտատուրայի դեմ: Շարժման նպատակներից մեկն քաղաքական կյանքում կանանց մասնակցության ու իրենց իսկ իրավունքների պաշտպանության խրախուսումն է:

Վիրտուալ քաղաքացիական հասարակություն. հայկական բլոգ միջավայր

Ընտրարշավի և հետընտրական պայքարի ժամանակ հայկական հեռուստաալիքներով լուսաբանումը հիմնականում իրականացվում էր Սերժ Սարգսյանի օգտին, ընդդիմադիր թեկնածուները կամ ուշադրության չէին արժանանում, կամ էլ բացասաբար էին ներկայացվում (օր.՝ Տեր-Պետրոսյանը): Անկախ հեռուստաալիքների բացակայությունը և գոյատևող ալիքների խիստ նվիրվածությունը ռեժիմին (իրավիճակ, որ առկա է Ա1+ անկախ հեռուստաընկերության փակումից հետո), նշանակում էր, որ ընդդիմության փետրվարյան հանրահավաքների վերաբերյալ հաղորդումները գրեթե զրոյական էին: Հեռարձակողները չէին արտացոլում փողոցներում և հրապարակներում տեղի ունեցող իրականությունը:

Ի պատասխան տեղեկատվական շրջափակմանը՝ մարդիկ միմյանց տեղեկություններ էին փոխանցում ավելի հեշտ, վստահելի և օրինական ճանապարհով՝ բերանացի: Բացի դրանից, մարդիկ սկսեցին օգտագործել հաղորդակցության տեխնոլոգիաների նոր ձևեր, որոնցից են

տեսախցիկ ունեցող բջջային հեռախոսները և Web 2.0 տեխնոլոգիաները, ինչպիսիք են օրինակ՝ բլոգերը, wikis-ը[43], ինչպես նաև սոցիալական ցանցը (օր.՝ Facebook) և տեսաֆիլմերի կայքերը (օր.՝ YouTube)՝ քաղաքական վերջին զարգացումների վերաբերյալ տեղեկություններ, կարծիքներ, նկարներ և տեսաֆիլմեր փոխանակելու համար: Արտակարգ իրավիճակի պայմաններում այս տեխնոլոգիաների կիրառումը թույլ տվեց շրջանցել պաշտոնական տեղեկատվական շրջափակումը: Պաշտոնական տեղեկատվական շրջափակումը չդադարեցրեց քաղաքական քննարկումները. եթե ինչ-որ բան էր տեղի ունենում, ապա տեղեկատվական հոսքը, գոնե ինտերնետ մուտք ունեցողների համար, մշտապես թարմացվող բլոգերի միջոցով տրամադրվում էր մարդկանց լուրերի, մեկնաբանությունների, նկարների և տեսաֆիլմերի տեսքով: Ընդդիմության որոշ կայքեր, ինչպիսիք են՝ *Payqar.org*-ը, իրենց հրապարակումները կոչում էին «*սամիզդատ*»[44] հատկապես, արտակարգի իրավիճակի ժամանակ, երբ մուտքը դեպի կայք ապահովվում էր միջնորդ (փրոքսի) սերվերի միջոցով:

Բլոգերում տեղադրված տեղեկությունների և մեկնաբանությունների թիվը կտրուկ աճեց արտակարգ իրավիճակի ժամանակ, երբ տեղեկատվական քաղց կար: Մի քանի բլոգեր, մասնավորապես, «Armenian Ditord» (կայք) և «Oneworld Media» (կայք) արտացոլում էին հայկական բլոգերի կենսունակությունն ու աճող հեղինակությունը: Հայկական բլոգ միջավայրը նույնպես քննարկվում է ՌադիոՀայի շաբաթական պոդքասթում: Հաճախակիորեն թարմացվող բլոգերից են «Armenian Ditord», «Bekaisa», «Caucasus Knot», «Nazarian», «Pigh», «Seetizen», «Tzitzernak», «Unzipped» և «Uzogh»[45]: Այս բլոգերի այնքան մեծ ճանաչում ունեին ժողովրդի շրջանում, որ նույնիսկ Սերժ Սարգսյանը ստեղծեց իր սեփական բլոգը Live Journal-ում և հորդորեց մարդկանց իրեն հարցեր և դիտողություններ գրել (Սերժ Սարգսյանի կայք): Խելամիտ է ենթադրել, որ եկող տարիների ընթացքում կտեսնենք առավել մեծ թվով նախագահական բլոգեր, քանի որ ողջ աշխարհում դրանք սկսում են ավելի ակնառու կերպով գործել ազգային ընտրությունների ժամանակ[46]:

Մասնավորապես, YouTube-ն ավելացրել է նոր ուղղություն՝ թույլ տալով տեղադրել հանրահավաքների, ընտրատարածքներում խախտումների և փողոցում մարդկանց հետ քննարկումների դրվագներ պատկերող տեսաֆիլմեր: Շարունակաբար մերժում ստանալով

---

[43] Կա նաև Wikipedia էջ՝ նվիրված 2008թ. ընտրություններին, որտեղ տեղադրված են թարմ տեղեկություններ իրադարձությունների վերաբերյալ
http://en.wikipedia.org/wiki/2008_Armenian_presidential_election_protests

[44] «Սամիզդատ» ռուսերեն բառ է, որը նշանակում է ինքնուրույն պատրաստված, ընդհատակյա հրատարակություն:

[45] Հայկական բլոգերը մեծամասամբ կամ անգլերեն են կամ ռուսերեն, սակայն տեղեկություններ են տրամադրում հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով: Բազմալեզու բլոգերում ցույց են տալիս այս տեխնոլոգիաների գլոբալ ծածկույթը,ինչպես նաև մասնակիցների բազմազանությունը: Բանավեճերի և քննարկումների ժամանակ բլոգերը նաև թույլ են տալիս ապահովել քննարկումների անանունությունը՝ ապահովելով ավելի ազատ քննարկում:

[46] Օրինակ՝ Միացյալ Նահանգներում նախագահական բոլոր թեկնածուները ունեն իրենց բլոգերը, որոնք օգտակար են եղել քարոզարշավի և դրամահավաք գործողությունների ընթացքում:

արտոնագրի տրամադրման հարցում՝ Ա1+ ընկերությունը ստեղծեց իր սեփական YouTube ալիքը, որն ընտրություններից հետո՝ վերջին մի քանի ամիսների ընթացքում ամենադիտվող կայքերից մեկն է եղել: Այս շրջանում առավել շատ շրջանառվող տեսաֆիլմը եղել է այն հոլովակը, որում պատկերված են դիմակավոր ավտոմատակիրներ, որոնք կրակում են ցուցարարների ուղղությամբ: Հրաձգության տեսարանները ընդհատվում են Գլխավոր դատախազության խոսնակի խոսքից բերված հատվածներով, որտեղ նշվում է, որ իրավապահները չեն կրակել ցուցարարների վրա: Տեսաֆիլմի մեծ շրջանառությունից հետո՝ մարտի 14-ին կառավարությունը հեռուստատեսությամբ հանդես եկավ հայտարարությամբ, որ տեսաֆիլմը կեղծ է: Դա ցույց է տալիս, թե կիբերտարածքում ինչպես կարող են իրադարձությունները իրական հետևանքների հանգեցնել կյանքում:

Ամփոփելով՝ անկախ Հայաստանում ինտերնետի ցածր մատչելիությունից (ըստ գնահատումների մոտ 6 տոկոս), պարզ է, որ քաղաքականապես ակտիվ անհատների մի խումբ մասնակցում է առցանց բանավեճերին և այս միտումը է՛լ ավելի կզարգանա, եթե ինտերնետը ավելի մատչելի ու հասանելի դառնա:

C. Եզրահանգում

Հունիսի 30-ի դրությամբ եղել է միայն մեկ պաշտոնապես արտոնված հանրահավաք (ապրիլի 19-ին). մնացած բոլոր իրազեկումները մերժվել են քաղաքապետարանի կողմից: Քաղաքացիական հասարակության կողմից հանրահավաքներ, ցույցեր և երթեր անցկացնելու մեծ ցանկություն կա, որը նրանց սահմանադրական իրավունքն է: Ցանկությունն ակնհայտ դարձավ ապրիլի 19-ի հանրահավաքին մասնակիցների թվով: Նմանատիպ միջոցառում տեղի ունեցավ ապրիլի 24-ին, երբ 1915թ. ցեղասպանության զոհերի հիշատակի տուրք մատուցելու արարողությանը միացան ընդդիմադիրները. ավելի քան 10000 մարդ երթ կատարեց Երևանի կենտրոնով՝ չնայած ներկա ոստիկանների մեծ քանակությանը: Հակակառավարական կարգախոսներ վանկարկելով՝ մասնակիցները ուղևորվեցին դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ նրանց դիմավորեց Տեր-Պետրոսյանը, որ եկել էր այդտեղ ոչ հեռու գտնվող իր տնից: Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) կողմից Հայաստանի վերաբերյալ լսումների (թիվ 1609[47] բանաձևի ընթացակարգային վերահսկում), մոտեցումը ցույց տալու համար՝ ընդդիմությունը մեկ այլ հանրահավաք կազմակերպեց հունիսի 20-ին: Թեպետ ի սկզբանե արտոնված չէր, ոստիկանները ավելի ուշ

[47] Թիվ 1609 բանաձևը նախատեսում էր՝ «Հայաստանի պատվիրակության ձայնի իրավունքի կասեցման հնարավորություն», եթե մի շարք հարցերով նշանակալի առաջընթաց չի գրանցվում: Դրանք ներառում են Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին օրենքում կատարված վերջին փոփոխությունների վերացում Վենետիկի հանձնաժողովի առաջարկների համաձայն, 2008թ. մարտի 1-ի դեպքերի ու նախորդող հանգամանքների անկախ, թափանցիկ ու վստահարժան հետաքննություն: Առաջ քաշված մյուս պահանջներն են թվացյալ արհեստական ու քաղաքական մեղադրանքներով կալանքի տակ գտնվող անձանց ազատ արձակումը և քաղաքական ու-երի միջև բաց ու լուրջ երկխոսության ծավալումը: ԵԽԽՎ-ն նշում է, որ քանի դեռ այդ պայմանները չեն կատարվում ու «ու այս պահանջների մասով նշանակալի առաջընթաց չի կատարվում» ապա վեհաժողովը կարող է քննության առնել ՀՀ պատվիրակությանը ձայնից զրկելու հնարավորությունը 2008թ. հունիսյան իր նստաշրջանում: (ԵԽԽՎ կայք):

թույլ տվեցին, որպեսզի բազմամարդ հանրահավաքը իրականացվի: Սույն զեկույցի հրապարակման ժամանակ ընդդիմությունը նախատեսում էր չարտոնված հանրահավաք կազմակերպել հուլիսի 4-ին:

Կարևոր հարց է, թե քաղաքացիական հասարակությունը ինչպես կարձագանքի փետրվարի 19-ից հետո տեղի ունեցած զարգացումներին. արդյո՞ք այն կզարգանա, թե տեղի կտա իրավական սահմանափակումների և ձերբակալությունների ներքո: Մինչ կառավարությունը փորձում էր վերջին ընտրությունները պիտակավորել որպես Արևմուտքի կողմից ֆինանսավորված գունավոր հեղափոխություն, սակայն դա հավանական տարբերակ չէ՝ հաշվի առնելով ընդդիմությանը Արևմուտքի բանավոր աջակցության կամ իշխանությունների հասցեին արված քննադատական խոսքերի բացակայությունը, որոնք խիստ հատկանշական էին նախորդ գունավոր հեղափոխություններին: Իրականում, Հայաստանի ընդդիմության շրջանում դժգոհություն առաջացնող խնդիրներից մեկը այսպես կոչված «երկակի ստանդարտներն են» և Արևմուտքի լռությունը՝ հետընտրական շրջանում ազատ խոսքի և հանրահավաքների ազատության սահմանափակումների առնչությամբ (ԱՄՆ հելսինկյան հանձնաժողով, 2008; ICG, 2008: 5): ԱՄՆ Հելսինկյան հանձնաժողովի լսումների ժամանակ խոսելով Տեր-Պետրոսյանի անունից՝ Արման Գրիգորյանն արևմտյան կառավարությունների մասին ասաց հետևյալը՝ «Նվազագույնը, նրանք պետք է գիտակցեն իրենց գնահատականների և բառերի կշիռը: Առավելագույնը, նրանք պետք է հստակորեն պաշտպանեն խաղաղությունը բռնակալության նկատմամբ»:

Իրավիճակը մնում է բավականին լարված և դինամիկ, իսկ քաղաքացիական հասարակության արթնացած ակտիվության նշանակության, դերի և հետևանքների մասին դեռ կան մի շարք հարցեր: Եթե ուրիշ ոչինչ հաշվի չառնենք, մի բան միանշանակորեն պարզ է՝ Հայաստանում անտարբերությունը վերացել է և մեծապես շահագրգիռ հասարակությունը պահանջում է, որպեսզի իրեն լսեն: Իրեն վերագտած քաղաքացիական այս հասարակության ազդեցությունը Հայաստանում կերևա գալիք ամիսների և տարիների ընթացքում:

VI. ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ. Ո՞ՐՆ Է ԵԼՔԸ

A. Հետընտրական քաղաքական զարգացումները

Փետրվարի 19-ից հետո կառավարության սկզբնական դիրքորոշումը հանրահավաքներին նշանակություն չտալն էր: Այս դիրքորոշումը խրախուսվում էր այն հանգամանքով, որ Սերժ Սարգսյանին աջակցում էր միջազգային հանրությունը, որն արտահայտվում էր ընտրությունների վերաբերյալ նախնական դիտորդական հաշվետվությունների, ինչպես նաև որոշ միջազգային և սփյուռքահայ առաջնորդների կողմից հղված շնորհավորական ուղերձների տեսքով:[48] Սակայն ավելի կարևոր է այն հանգամանքը, որ Սարգսյանը կարողացավ իր կողմը գրավել տեղական ընդդիմության որոշ գործիչների աջակցությունը, որպեսզի կարողանա առաջ շարժվել: Մասնավորապես, նա գործարքի մեջ մտավ ԱԺ նախկին խոսնակ՝ Արթուր Բաղդասարյանի հետ, որը ավելի վաղ հեռացել էր Սարգսյանից, որպեսզի նախագահի թեկնածու առաջադրվի: Շատ վերլուծաբաններ վիճարկում են, որ Բաղդասարյանը միշտ էլ եղել է Սարգսյանի հովանու ներքո և նախագահ ընտրվելու Բաղդասարյանի փորձը իրականում կազմակերպվել էր Սարգսյանի կողմից՝ Տեր-Պետրոսյանից ձայներ փախցնելու նպատակով: Ոստիկանների և անվտանգության ներքին ուժերի կողմից Երևանում ցուցարարներին բռնությամբ ցրելուց մեկ օր առաջ՝ Բաղդասարյանը հանդիպեց Սարգսյանի հետ և հայտարարեց, որ ինքը ճանաչում է Սարգսյանի լեգիտիմությունը և ցանկանում է համագործակցել նրա հետ՝ «ներքին և արտաքին մարտահրավերներին» դիմակայելու հարցում:

Տեղական ԶԼՄ-ները հնչեցրեցին Բաղդասարյանի հայտարարությունը, որում նա նշում էր, որ իրեն առաջարկվել է և ինքն ընդունել է Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղարի

---

[48] Սփյուռքահայ կառույցները նույնպես ցուցաբերեց բավականին մեղմ մոտեցում Հայաստանում ծավալված իրադարձությունների նկատմամբ, որն ակնհայտ է ԱՄՆ սփյուռքահայ հինգ առաջատար խմբերի կողմից մարտի 18-ին արված համատեղ հայտարարությունից: (այն ստորագրողների թվում էին Ամերիկայի հայկական համագումարը, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, Ամերիկայի հայ դատի հանձնախումբը, Հայկական եկեղեցու ամերիկյան թեմը (արևելյան/արևմտյան) և Ամերիկայի հայ առաքելական եկեղեցու առաջնորդարանը (արևելյան/արևմտյան) : Հայտարարությանը կարելի է ծանոթանալ http://www.pf-armenia.org կայքի *News and Reports* բաժնում): Հետաքրքրաշարժ է, որ Հայկական համագումարի համար սա ընկրկում էր Հայաստանում մարդու իրավունքների և ժողովրդավարության նկատմամբ ավանդականորեն եղած ուշադրությունից, որը ներառում էր նաև նախորդ ընտրությունների քննադատություն: Ավելին, Հայկական համագումարի կողմից Հետազոտությունների և վերլուծությունների հարցերով տնօրենի արագ հեռացումը (նա մտահոգություն էր արտահայտել Հայաստանում ընտրական և հետընտրական զարգացումների վերաբերյալ Հայկական համագումարի դիրքորոշման մասին՝ հորդորելով ավելի խելամիտ և անկողմնակալ կեցվածք ընդունել) այնպիսի տպավորություն թողեց, որ դրանով փորձ էր կատարվում ճնշել հարցի վերաբերյալ կորպորատիվ ուղուց շեղումը: (Տես՝ Արմեն Խարազյան «Հայաստանի ժողովրդավարական զարգացումը գերակայություն է», «Ժամանակ» օրաթերթ, 3 մայիսի 2008թ., http://en.zhamanak.com/article/720/). Այս հայտարարությունը ստորագրած մեկ այլ կողմ՝ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, հետագայում AGBU Magazine ամսագրի մեկ համար (ապրիլ) նվիրեց հետընտրական զարգացումներին, որտեղ իրադարձությունների և դրանց հաջորդած իրավիճակի մանրակրկիտ և անկողմնակալ վերլուծություն էր կատարվում:

պաշտոնը: Մինչ այդ, Վահան Հովհաննիսյանը (Հայ հեղափոխական դաշնակցություն) հրաժարվելով Ազգային ժողովի փոխխոսնակի պաշտոնից, մտահոգություն արտահայտեց այն մասին, որ ընտրությունները կեղծ և արատավոր են եղել, հայտարարելով՝ «մեկ անգամ ևս ոտնատակ արվեց մեր ժողովրդի քաղաքական ազատ կամարտահայտության իրավունքն ու մեր քաղաքացիների արժանապատվությունը»[49]: Սակայն, նա չքննադատեց կառավարությանը՝ դրա փոխարեն քննադատելով Տեր-Պետրոսյանին «1996թ. ընտրությունները անամոթաբար կեղծելու ու ընտրակեղծիքների անիվը շարժման մեջ դնելու համար, որը մինչ օրս չենք կարողանում կանգնեցնել»[50]:

Ընտրությունների մեկ շաբաթ անց, Հայ հեղափոխական դաշնակցությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ ընդունելով Սարգսյանի հաղթանակը և վայր դնելով իրենց զբաղեցրած նախարարական երեք պորտֆելները: Սակայն պորտֆելները վայր դնելու առաջարկի վրա շուտով ստվեր գցեցին լրատվամիջոցների հաղորդումները, որոնք հայտնում էին, որ Հայ հեղափոխական դաշնակցությունը դիտարկում է Սարգսյանի կոալիցիոն կառավարության առաջարկը: Մարտի 21-ին Սարգսյանը հայտարարեց ընտրություններից առաջ եղած կառավարական կոալիցիայի վերականգնման մասին, որտեղ Հանրապետական կուսակցությունը «Բարգավաճ Հայաստան», Հայ հեղափոխական դաշնակցություն և «Օրինաց երկիր» կուսակցությունների հետ համատեղ մշակել էր իշխանությունը կիսելու համաձայնագիր՝ «խորացնել ժողովրդավարական բարեփոխումները և արագացնել տնտեսական զարգացումը հանրապետությունում»[51]: Կոալիցիոն նոր կառավարությունը ձևավորվեց մեկ ամիս անց (ապրիլի 21-ին)՝ Տիգրան Սարգսյանի ղեկավարության ներքո: 17 նախարարներից 11-ը պահպանեցին իրենց աթոռները[52]: Այս կառավարությունը հետո վավերացվեց խորհրդարանի կողմից, որտեղ դեմ քվեարկեց միայն ընդդիմադիր «Ժառանգություն» կուսակցությունը[53]:

Մինչ նոր կառավարությունը ձևավորվում էր, ընդդիմությունը որպես բանակցությունների նախապայման պնդում էր ազատ արձակել անազատության մեջ գտնվողներին[54]: Սակայն այս պահանջները անմիջապես մերժվեցին կոալիցիոն նոր կառավարության կողմից, որը մինչ այժմ հրաժարվում է կալանքի տակ գտնվողներին կոչել քաղբանտարկյալներ՝ նախընտրելով նրանց կոչել հեղաշրջման կազմակերպիչներ կամ սովորական հանցագործներ: Սա պարզապես իմաստաբանական բանավեճ չէ, սահմանումը ունի իրավական և քաղաքական հետևանքներ: Շատ տարօրինակ կերպով ՀՀ գլխավոր դատախազը շարունակում է պնդել, որ ընդդիմությունը «հոգեբանական հնարքներ» է կիրառել՝ աջակիցներին հավաքելու համար և, որ քննության արդյունքում ապացույցներ են ձեռք բերվել, որ ձերբակալվածների մի մասը

---

[49] "Dashnak Leader Resigns from Parliament Post," *RFE/RL*, February 22, 2008.

[50] Նույն տեղում.

[51] "New Armenian Coalition Takes Shape," *RFE/RL*, March 21, 2008.

[52] "New Armenian Cabinet Formed," *RFE/RL*, April 21, 2008.

[53] "New Armenian Cabinet Wins Vote of Confidence," *RFE/RL*, April 30, 2008.

[54] «Ընդդիմությունը պահանջներ է ներկայացնում», «Ազգ», 25 մարտի 2008թ.

«մոլորության մեջ են եղել»:[55] Սա հիշեցնում է խորհրդային ժամանակաշրջանի մարտավարությունը, այն է՝ վարկաբեկել այլախոհներին՝ հարցականի տակ դնելով նրանց հոգեկան վիճակն ու կարողությունը:

Այս ընթացքում, «Ժառանգություն» կուսակցության նախագահ Ռաֆֆի Հովհաննիսյանը, որն ընտրությունների ժամանակ աջակցել էր Տեր-Պետրոսյանին, իշխանության և ընդդիմության միջև միջնորդ հանդիսանալու անհաջող փորձ կատարեց: Այս իրավիճակում, մայիսի 2-ին Տեր-Պետրոսյանը հանդես եկավ հրապարակային հայտարարությամբ և ցանկություն արտահայտեց բանակցել Սարգսյանի հետ[56]: Թեպետ նրա կողմից ավելի վաղ արված հայտարարություններն ավելի կոշտ էին և դրանցով նա խոստանում էր շարունակել ցույցերը՝ «ձգտելով հասնել բնակչության առավելագույն մոբիլիզացման»[57]: Մինչև հունիսի վերջը կառավարամետ կուսակցությունները գործում էին ընդհանուր իշխանության սահմաններում: Ընդդիմությունը մեկ խոշոր մարմնի՝ Հայոց ազգային կոնգրեսի (ՀԱԿ) ներքո միավորելու վերաբերյալ Տեր-Պետրոսյանի կոչերը ընդդիմության որոշ ղեկավարների կողմից տարակուսանքով ընդունվեցին և ընդդիմությունը դեռևս ՀԱԿ-ի կառուցվածքի ու գործունեության մանրամասները պետք է ներկայացնի[58]: Բացի քաղբանտարկյալներին ազատ արձակելուց, ընդդիմությունը պահանջները ներկայումս կենտրոնացած են խորհրդարանական վաղաժամկետ ընտրություններ անցկացնելու հարցի շուրջ: Պատշաճ ձևով անցկացնելու դեպքում՝ սա նրանց կարծիքով հնարավորություն կտա ձևավորել այնպիսի խորհրդարան, որը ավելի լավ է արտացոլում առկա քաղաքական իրականությունը և թույլ է տալիս ընդդիմության ոչ-չնչին ներկայացվածություն հանրապետության իրավական գործընթացներում: Սա նաև հնարավորություն կտա ընդդիմությանն իր խոսքն ունենալ նոր կառավարության ձևավորման գործում:

Սակայն մինչև այժմ ընդդիմության ձեռքբերումները մեծապես եղել են բարոյական հաղթանակների ոլորտում: 2008թ. ապրիլից հետո առանց որևէ հաջողության այն փորձել է Հայաստանի իրավական և սահմանադրական դաշտում կառավարությանը առարկել ցուցարարների անօրինական կալանավորման և հանրահավաքների արգելման հարցերի շուրջ: Սա միաժամանակ ուղեկցվում էր տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող իրավական ճնշմամբ: Նրանք քննադատում էին Հայաստանի կառավարության վարքագիծը հետընտրական զարգացումների ընթացքում և մարդու իրավունքների հարցում նրա վարկանիշը: Դրանցից վերջինը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռն էր, որը քննադատում էր ՀՀ կառավարությանը ընդդիմադիր հեռուստաընկերությանը հեռարձակման արտոնագիր չտրամադրելու միջոցով խոսքի ազատությունը ճնշելու համար[59]: Ակնհայտորեն ձախողվելով արտաքին այս զարգացումները

---

[55] "Prosecutors Insist On Opposition 'Hypnosis' Of Armenians," *RFE/RL*, July 8, 2008 հղում է կատարվում հուլիսի 8-ին Գլխավոր դատախազի «Առավոտ» օրաթերթին տված հարցազրույցին

[56] "Ter-Petrossian 'Ready' to Talk to Government," *RFE/RL*, May 2, 2008.

[57] "Armenian Opposition Resumes Non-Stop Protests," *RFE/RL*, July 4, 2008.

[58] "Demirchian Cool Towards Opposition Party Merger," *RFE/RL*, May 9, 2008.

[59] "European Court Judges in Favor of Closed Armenian TV," *RFE/RL*, June 17, 2008.

վերահսկելու հարցում՝ ՀՀ կառավարությունը այս դատավճիռը պարզաբանեց որպես տեխնիկական հարց, որը ամենևին էլ չի հանդիսանում խոսքի ազատության խախտում ոլորտը կանոնակարգող մարմնի կողմից[60]:

B. Հետագա քայլեր

Հուլիսի սկզբի դրությամբ կառավարության և ընդդիմության մերձեցումը հավանական չի թվում: Քաղաքական խիստ բևեռացումը շարունակվում է, իսկ նոր կառավարությունը չի լուծել ընտրություններին առնչվող խնդիրները՝ դրա փոխարեն ուշադրությունը կենտրոնացնելով տնտեսական բարեփոխումների վրա: Այստեղ նույնպես ապագան անորոշ է: Կոալիցիոն կառավարությունը, առաջնորդվելով բարեփոխումների ձգտող վարչապետի կողմից, բաղկացած է անհատներից, որոնք չունեն ընդհանուր տեսլական, ընդհանուր համոզմունքներ, մասնագիտական և քաղաքական փորձ: Վարչապետի կողմից առաջարկվող հեռահար առաջարկների մի մասը վիճելիորեն պատանդ են մնում Հայաստանի օլիգարխիկ տնտեսության (որտեղ մեծամասամբ դեռևս վերահսկողությունն իրականացվում է հին կառավարության և կառավարությանն առնչվող անհատների կողմից), մարդու իրավունքների և քաղաքացիական ազատությունների ասպարեզում լուրջ թերությունների, ինչպես նաև ահաբեկող սոցիալական խնդիրների ձեռքում: Եթե իրապես չճանաչվեն և չլուծվեն, այս գործոնները թերևս խիստ կխարխլեն տնտեսական բարեփոխումներին աջակցելու հիմքերը: Սակայն փետրվարի 19-ից ի վեր ընդդիմության ճնշումը այս հարցում սկսել է պտուղներ տալ: Նոր կառավարության կողմից կոռուպցիան կրճատելու և գործարարությամբ զբաղվելուն խանգարող խոչընդոտների նվազեցման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները հնարավոր չէին լինի Քոչարյանի 10-ամյա պաշտոնավարման ժամանակ, երբ Հայաստանում կոռուպցիան աճում էր՝ ավելի ինստիտուցիոնալ հիմքերի վրա դրվելով և հաստատվելով առօրյա կյանքում:

Թեպետ սրանք անհրաժեշտ քայլեր են հաշտեցման ուղղությամբ, սակայն գործարար միջավայրը բարելավելու միջոցառումները կարող են բավարար չլինել գործընթացը տեղից շարժելու համար[61]: Անկախ միջազգային իրավական խոչընդոտներից՝ իշխանությունները քաղաքացիական և քաղաքական ազատությունների հարցում ստանձնել են «կյանքը շարունակվում է» մոտեցումը: Սակայն իրականությունը շատ տարբեր է: Հայաստանում վերջերս իրականացված Գելոփի հետազոտությունը ցույց տվեց, որ հարցվողների 70 տոկոսը վախենում էր հայտնել իր քաղաքական տեսակետները[62]: Գալիք ամիսների ընթացքում վախի և կառավարության նկատմամբ ատելության մթնոլորտը կարող է լուրջ կերպով անդրադառնալ Սարգսյանի կառավարության վրա:

---

[60] "Government Official Downplays Legal Defeat in Strasbourg," *RFE/RL*, June 18, 2008.

[61] Պարզ չէ նաև, թե այդ բարեփոխումները մնայուն են, թե ոչ: Իրապես ողջունելով հանդերձ՝ դեռևս պետք է տեսնել, թե այդ միջոցառումները կհանգեցնեն իրականության առարկայական փոփոխությունների, թե նախատեսված են քաղաքացիների ու արտաքին դիտորդների ուշադրությունը ավելի կարևոր քաղաքական բարեփոխումներից շեղելու և նրանց վրա տպավորություն գործելու համար:

[62] Գելոփի հետազոտություն. «Վախի մթնոլորտ, թե՞ սադրանք»: *ArmeniaNow.com*, 13 հունիսի 2008թ..

Ընտրություններից հետո գրեթե վեց ամիս անց այնպիսի զգացում կա, որ երկիրը անելանելի վճակում է գտնվում: Թեպետ իրավիճակը մնում է բավականին դինամիկ, սակայն բանակցությունների հեռանկար չկա: Փողոցային փոքրածավալ բողոքները շարունակվում են և տեղի են ունեցել նաև ավելի մեծ կազմակերպված հանրահավաքներ: Վերջիններս եղել են բազմամարդ հնարավորություն տալով ընդդիմությանը արտահայտելու իրենց դիրքորոշումները և ներկայացնեն իրենց պահանջները: Սա կարևոր գործոն էր ընդդիմադիր հասարակական կարծիքը իրազեկ պահելու համար, քանի որ պաշտոնական լրատվամիջոցները դեռևս հասանելի չեն նրանց: Այս ներքին քաղաքական զարգացումների ֆոնի վրա միջազգային որոշ գործիչներ փորձեր են կատարել լուծել ինչպես ներքին ճգնաժամը, այնպես էլ առաջ շարժվել Արցախի հակամարտության լուծման ուղղությամբ: Վերջին խնդիրների շուրջ բանակցությունները կշարունակեն իրենց ազդեցությունն ունենալ տեղական քաղաքական զարգացումների վրա, այդ թվում՝ արտաքին հնարավոր սպառնալիքի ժամանակ կոնկրետ թեկնածուի կողմից երկիրը ղեկավարելու հարմարության հարցը բարձրացնելու վրա:

Թեպետ վիճելի է, որ արտաքին ճնշումը Հայաստանում քաղաքական գործողությունների ընթացքի վրա ուղղակի ազդեցության առումով շատ արդյունավետ կարող էր լինել[63], սակայն այն կարող էր փոխել իշխանությունների մարտավարությունը: Սերժ Սարգսյանի վերջին հայտարարությունն այն մասին, որ ցանկանում է թույլ տալ հայ-թուրքական հանձնաժողովին որոշել, թե 1915-18թթ. հայերի զանգվածային սպանությունները ցեղասպանություն հանդիսացել են, թե ոչ ոմանց կողմից դիտարկվեց որպես Արևմուտքի համար կարևոր հարցերին անդրադառնալու ցանկության ազդանշան, ինչպես նաև ներքին քաղաքական ճգնաժամից և Արցախի հարցից աշխարհի ուշադրությունը շեղելու փորձ: Սակայն արդեն նշաններ կան, որ սա իր ազդեցությունը կունենա քաղաքական ներքին զարգացումների վրա: Սարգսյանին նախազգուշացնելով՝ Հայ հեղափոխական դաշնակցություն համաշխարհային ղեկավար մարմինը՝ բյուրոն վերջին նիստի ժամանակ պարզ կերպով նշեց, որ «հայոց ցեղասպանության հարցը քննարկման ենթակա չէ և Հայաստանը ներկայացնող ոչ մի բարձրաստիճան պաշտոնյան չի կարող այլ կարծիք ունենալ»[64]:

Ավելին, քաղաքական այս մարտահրավերները ավելի են բարդանում բարձրացող գների, արժևորվող փոխարժեքի, ինչպես նաև անհավասարության և կոռուպցիայի բարձր աստիճանի պատճառով ավելացող դժգոհությամբ: Սրանք լուրջ մարտահրավերներ են ցանկացած ղեկավարի համար, սակայն դրանք ավելի են լրջանում նրա համար, ով չի վայելում ժողովրդի աջակցությունը, որը իշխանության է եկել կեղծ ընտրությունների արդյունքում և, որը շարունակում է ուժով պահել իշխանությունը: Ինչպես նշել ենք վերևում,

---

[63] Բարկանալով, որ ԵԽԽՎ-ն չի ցանկանում գործողություններ ձեռնարկել Երևանում իշխանությունների դեմ՝ ԵԽԽՎ-ում ՀՀ պատվիրակության միակ անդամ Ռաֆֆի Հովհաննիսյանը ի նշան բողոքի դուրս եկավ հունիսի 25-ի լսումներից: Հայաստանի վերաբերյալ ԵԽԽՎ վերջին բանաձևի երկու համահովանավորներին քննադատելիս՝ Տեր-Պետրոսյանը նրանց կոչեց Երևանում վարչակազմի «փաստաբաններ» (“Opposition Leader Adamant In Boycotting PACE,” *RFE/RL*, July 7, 2008)

[64] “Dashnaks Warn Sarkisian Over Armenian Genocide Study,” *RFE/RL*, July 8, 2008.

գործարար միջավայրը բարելավելուց բացի անելանելի վիճակից դուրս գալու և հաշտեցման ուղղությամբ շարժվելու համար անհրաժեշտ է գործունեության լուրջ փոփոխությունմ որ կներառի հեռահար քաղաքական բարեփոխումներ և միջոցառումներ:

Նման փոփոխությունը, սակայն ինքն իրեն տեղի չի ունենան: Դրա համար կպահանջվեն քաղաքացիական հասարակության շարունակական ճնշումը, Հայաստանում հիմնված ինստիտուցիոնալ դերակատարում ունեցողների ջանքերը (օր.՝ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ և «Ժառանգություն» կուսակցության խորհրդարանական խմբակցություն), ինչպես նաև միջազգային շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը: Եթե իշխանությունները չձեռնարկեն վստահություն սերմանելու միջոցառումներ և իրապես չփորձեն երկխոսություն ծավալել ընդդիմության հետ, ընթացիկ կառավարությունը դատապարտված է դառնալու ոչ թե ողջ Հայաստանի այլ որոշ հայերի կառավարությունը: Մինչդեռ լարվածությունը ուժեղանալու միտում ունի, իսկ քաղաքական առկա բևեռացումը կարծես թե է՛լ ավելի է խորանում: Սերժ Սարգսյանի համար մարտահրավեր է կանգնեցնել իր նախորդի բևեռացման քաղաքականությունը: Հաջողության դեպքում, նա կարող է հնարավորություն ունենալ միավորել խորապես մասնատված հանրապետությունը:

Վստահություն սերմանելու այդ միջոցառումներում գլխավորը պետք է լինի փետրվարի 19-ի և մարտի 1-ի և 2-ի իրադարձությունների անկախ ուսումնասիրությունը: Սա պետք է հանգեցնի ընտրակեղծիքների և դրան հաջորդող հանցագործությունների կազմակերպիչների (սա վերաբերում նաև քաղաքական բուրգի վերին աստիճաններին) նկատմամբ իրավական վստահելի և թափանցիկ գործերի հարուցմանը: Հասարակության վստահության վերականգնումը հնարավոր դարձնելու համար՝ որպես վստահություն սերմանելու միջոցառում՝ այս գործընթացին պետք է նախորդի բոլոր քաղբանտարկյալների ազատ արձակումը: Հենց սա արվի, կարելի է ստեղծել հանձնախումբ, որպեսզի ուսումնասիրի խորհրդարանական վաղաժամկետ ընտրությունները անցկացումը և այնպիսի միջոցառումների մշակումը, որոնք կկանխեն խոշորամասշտաբ կեղծիքների կրկնությունը: Այս գործընթացը հավանաբար կարող է վերահսկվել սոցիալական բարձր վարկանիշ ունեցող տեղացի և սփյուռքահայ ներկայացուցիչներից կազմված համատեղ մարմնի կողմից: Այնքանով որքանով այս գործընթացի կառավարումը կպահանջի գործադիր և օրենսդիր հնարավորություններ (սահմանափակ հիմքերով՝ ազատվելու ընտրություններին առնչվող օրենսդրության բացթողումներից, որոնք արդյունավետ կերպով թույլ էին տալիս, որպեսզի կեղծիքը արմատավորվի). այս համատեղ մարմնին կարող է տրվել պայմանական (ընտրությունների) վարչարարի կարգավիճակ՝ շնորհելով սահմանված ժամանակացույցի շրջանակներում ազատ և արդար ընտրություններ ապահովելու հստակ մանդատ[65]: Կարելի է հուսալ միայն որ այս վարչարարները կվերացնել արտասահմանում գտնվող դեսպանատներում քվեարկելու արգելքը՝ թույլ տալով Հայաստանում չբնակվող

[65] Շահերի բախումից խուսափելու համար և նախաձեռնության հանդեպ վստահությունը բարձրացնելու համար՝ այս պայմանական վարչական մարմնի անդամները կարող են հայտարարել, որ իրենք չեն մասնակցելու գալիք ընտրությանը (որը ղեկավարելու համար նրանք նշանակված են) կամ դառնալու Ազգային ժողովի կողմից նշանակվող կառավարության անդամներ (ընտրվելու է այս ընտրությունների արդյունքում):

քաղաքացիների զգալի և ընտրելու իրավունքից զրկված հատվածին մասնակցել երկրի կառավարմանը:

* * *

Մարտի 1-ին և 2-ին հաջորդող ատելության արտահայտումը և քաղաքական բևեռացման խորացումը շարունակում են ետ պահել ժողովրդավարության զարգացումը Հայաստանում և ստվեր են նետում առկա իրականության և հետագա զարգացման հեռանկարների վրա: Իրականությունն այն է, որ մարտի 1-ի և 2-ի իրադարձությունների հիմնական պատճառը ընտրակեղծիքներն են՝ Հայաստանի նորագույն պատմության ընթացքում և, հատկապես, 2008թ. փետրվարին 19-ին իրենց ունեցած տարբեր դրսևորումներով: Պատմությունից քաղած կարևոր դասերից մեկն այն է, որ մերժելով մարդկանց ազատ կամքի արտահայտությունը և այն փոխարինելով քաղաքական կյանքի «կայունությունից» բխող կասկածելի կարճաժամկետ առավելություններով, կամ, որ ավելի վատ է՝ մի քանիսի սեփական շահերով, կարող է հակառակ ընթացք ունենալ, ինչպես որ եղավ մարտի 1-ին և 2-ին: Դա չհասկանալը և դրա հիմքում ընկած խնդիրները լուծելու ուղղությամբ գործողություններ չձեռնարկելը՝ ծանր հետևանքներ կունենա երկրի և ողջ ազգի համար:

Հղումներ

A1+ web (2008). "An Appeal to [the] International Community." Available from: http://www.a1plus.am/en/?page=issue&iid=58522. (Last accessed on June 2, 2008).

Abrahamian, L. (2005). "Armenian Identity in a Changing World," Costa Mesa, CA: Mazda Publishers.

Amnesty International (1996). "Armenia: Amnesty International Calls for Investigations into Beatings of Opposition Supporters Following Election Protests." Available from: http://archive.amnesty.org/library/Index/ENGEUR540021996?open&of=ENG-ARM. (Last accessed on June 19, 2008).

Armenaker Kamilion blog (2008). "Free Armenians Call for Civil Disobedience and Boycott." Available from: http://armenaker.blogspot.com/2008_03_01_archive.html (Last accessed on June 2, 2008).

Armenian Ditord (2008). "Blogs about Armenian Blogs." Available from: http://wordpress.com/tag/armenian-blogs/ (Last accessed on June 2, 2008).

Armenia Liberty (2008a). "Ter-Petrossian Schedules First Rally since Crackdown." Available from: http://www.armenialiberty.org/armeniareport/report/en/2008/06/1EBEBCA2-36C1-4587-9837-6D9D1BC55588.asp. (Last accessed June 9, 2008).

Armenia Liberty (2008b). "Kocharyan Blasts Armenian Ombudsman." Available from: http://www.armenialiberty.org/armeniareport/report/en/2008/03/CA0BFD67-5C6A-4AD0-BEA7-60BBEC9BC719.asp. (Last accessed on Jun 15, 2008).

Cohen, J. and A. Arato (1992). *Civil Society and Political Theory*, Cambridge, MA: The MIT Press.

de Pourbaix-Lundin, M. and M. Eorsi (2008). "Election Secrets Revealed," *Transition Online*, April 22. Available from: http://www.tol.cz/look/TOL/article.tpl?IdLanguage=1&IdPublication=4&NrIssue=266&NrSection=2&NrArticle=19553

Gershman, C. and M. Allen (2006). "The Assault on Democracy Assistance," *Journal of Democracy* 17, No. 2: 36–51.

Giragossian, R. and J. Hughes (2008). "A Difficult Mandate: The Role of Election Observers in a Famously Flawed Process," *AGBU Magazine* 18, No. 1, pp.14-15.

Grigorian, D. and T. Melkonyan (2008). "Microeconomic Implications of Remittances in an Overlapping Generations Model with Altruism and Self-Interest," International Monetary Fund Working Paper No. 08/19, Washington, DC.

Hetq web (2008a). "Votes "Stolen" From the ARF-D, or Votes Gifted by Them?" http://www.hetq.am/arm/politics/7611/. (Last accessed June 13, 2008).

Hetq web (2008b). "The Report of AFAJA's May 7-12 Investigative and Observer Mission on the Events in Yerevan in February and March 2008," (in Armenian). Available from: http://www.hetq.am/arm/politics/8153/. (Last accessed June 21, 2008).

House Foreign Affairs Committee (2008). "The Caucasus: Frozen Conflicts and Closed Borders," Testimony of Daniel Fried, Assistant Secretary of State for European and Eurasian Affairs, June 18. Available from: http://www.pf-armenia.org/ (*News and Reports* section).

Howell, J., A. Ishkanian; E. Obadare; H. Seckinelgin; and M. Glasius (2008). '"The Backlash against Civil Society in the Wake of the Long War on Terror," *Development in Practice* 18, no. 1, pp. 82-93.

Hughes, J. (2008). "Spring of Discontent: Can Putting Down a Movement Mean Moving Armenia Forward?" *AGBU Magazine* 18, No. 1, pp.7-12.

Human Rights Defender (2008a). "Human Rights Defender's Position on the Existing Situation in the Country," March. Available from: http://ombuds.am/main/en/9/18/1281/ (Last accessed on June 6, 2008).

Human Rights Defender (2008b). "Ad-hoc Public Report on the 2008 February 19 Presidential Elections and the Post-Electoral Developments," May. Available from: http://www.pf-armenia.org/library/

Human Rights Watch (2008a). "Armenia: Violence at Polling Stations Mars Elections: Assailants Target Opposition Activists, Observers and Journalists." Available from: http://www.hrw.org/english/docs/2008/02/21/armeni18128.htm (Last accessed on June 21, 2008).

Human Rights Watch (2008b). "Armenia: Sargsyan Should Restore Rights Swift Action Needed in Post-election Crisis." Available from: http://www.hrw.org/english/docs/2008/04/08/armeni18474.htm (Last accessed June 21, 2008).

International Crisis Group (2008). "Armenia: Picking up the Pieces," Policy Briefing, Europe Briefing No. 48, April 8.

Ishkanian, A. (2008). *Democracy Building and Civil Society in Post-Soviet Armenia*. London: Routledge.

Ishkanian, A. (2007). "En-gendering Civil Society and Democracy Building: the Anti-Domestic Violence Campaign in Armenia," *Social Politics: International Studies in Gender, State and Society* 14, no. 4 pp. 488-525.

Keck, M. and K. Sikkink (1998). *Activists beyond Borders: Advocacy Networks in International Politics*, Ithaca, N.Y.: Cornell University Press.

Myagkov, M., P. C. Ordeshook, and D. Shakin (2005). "Fraud or Fairytales: Russia and Ukraine's Electoral Experience," *Post-Soviet Affairs* 21, No. 2.

Oneworld Media Blog (2008). "Armenian Blogging Comes of Age," May 11. Available from: http://oneworld.blogsome.com/2008/05/11/armenia-blogging-comes-of-age/ (Last accessed June 2, 2008).

Ordeshook, P. and M. Myagkov (2008). "Russian Elections: An Oxymoron of Democracy," CalTech/MIT Voting Technology Project Working Paper No. 63.

Organization for Security and Cooperation in Europe (2008a). "Statement of Preliminary Findings and Conclusions," International Election Observation Mission, February 20, 2008 (released jointly by the OSCE Office of Democratic Institutions and Human Rights (ODIHR), OSCE Parliamentary Assembly, Parliamentary Assembly of the Council of Europe (PACE), and the European Parliament). Available from: http://www.osce.org/documents/odihr/2008/02/29775_en.pdf

Organization for Security and Cooperation in Europe (2008b). "Post-Election Interim Report: 20 February – 3 March 2008." Available from: http://www.osce.org/item/30090.html (Last accessed on June 21, 2008).

Organization for Security and Cooperation in Europe (2008c). "Final Report on 19 February 2008 Presidential Election in Armenia." Available at: http://www.osce.org/item/31398.html (Last accessed on June 2, 2008).

Organization for Security and Cooperation in Europe (2005). "Republic of Armenia Constitutional Referendum," November 27. Available from: http://www.osce.org/odihr-elections/17736.html. (Last accessed on June 19, 2008).

Novoye Vremya (2008) "If Hastings and Ben Kardin will Review the Armenian Case" Элси Хастингс и Бен Кардин рассмотрят армянский "кейс," April 15. Available from: http://www.nv.am/15aprl/tema.htm. (Last accessed on June 2, 2008).

Parliamentary Assembly of the Council of Europe (2008). "Resolution 1609: Functioning of Democratic Institutions in Armenia." Available from: http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta08/ERES1609.htm. (Last accessed on June 15, 2008).

Salamon, L. M, and H. K. Anheier (1997). "Defining the Nonprofit Sector: A Cross-national Analysis." Manchester: Manchester University Press.

Serge Sargsyan web (2008). http://serzhsargsyan.livejournal.com/1016.html?mode=reply (Last accessed on June 2, 2008).

Sobianin, A. and V. Sukhovolskiy (1993). Elections and the Referendum December 12, 1993 in Russia: Political Results, Perspectives and Trustworthiness of the Results," unpublished report to the Administration of the President of the Russian Federation, Moscow, 1993; as reported in Myagkov, Ordeshook, and Shakin (2005).

Sobianin, A., E. Gelman, and O. Kaiunov (1994). "The Political Climate of Russia's Regions: Voters and Deputies, 1991-93," *The Post-Soviet Review* 21, No. 1.

Suny, R. G. (1993). Looking toward Ararat: Armenia in Modern History, Bloomington, Indiana: Indiana University Press.

Tzitzernak blog "A" (2008). "Open Letter to International Organizations and Diplomatic Missions in the Republic of Armenia: Request for Meeting Space," April 17. Available from: http://tzitzernak.blogspot.com/2008/04/open-letter-to-international.html (Last accessed on June 2, 2008).

Tzitzernak blog "B" (2008). "Open Letter from the Wives, Mothers, and Sisters of Victims of Political Persecution in Connection with the 2008 Armenian Presidential Election," May 16. Available from: http://tzitzernak.blogspot.com/2008/05/open-letter-from-wives-mothers-and.html (Last accessed on June 2, 2008).

Unzipped blog (2008). "Armenia 2008: Return to Stalinism (statement of NGOs)." Available from: http://unzipped.blogspot.com/2008/03/armenia-2008-return-to-stalinism.html (Last accessed on June 2, 2008).

US Helsinki Commission (2008). "The Crisis in Armenia: Its Causes and Consequences," Testimony by Arman Grigorian. Available from: http://www.pf-armenia.org/index.php?id=46&no_cache=1&tx_ttnews[tt_news]=278&tx_ttnews[backPid]=8&cHash=8ff59e8aba. (Last accessed on June 15, 2008).

US State Department (2008). "Advancing Freedom and Democracy Reports: 2008 Released by the Bureau of Democracy, Human Rights, and Labor May 23." Available from: http://www.state.gov/g/drl/rls/afdr/2008/104789.htm (Last accessed on June 2, 2008).

Women in Black (2008). "A Short History of Women in Black." Available from: http://www.womeninblack.org.uk/History.htm (Last accessed June 2, 2008).

Zhamanak daily (2008). "Serge Sargsyan Used Paid Lobbying in U.S. and Europe in 2006-07," June 7. Available from: http://en.zhamanak.com/article/825/. (Last accessed on June 21, 2008).